ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԱՐԱՐԱՏ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (ԼԵՌՆԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ատենախոսություն

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վարդան Բոստանջյան

**Ե Ր Ե Վ Ա Ն -2017**

ԱՌԱՋԱԲԱՆ ....................................................................................................3

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Տնտեսության մրցունակության էությունը և տնտեսական բովանդակությունը ....................................................................................................9

1.2. Մրցունակությունը և մրցակցությունը շուկայական տնտեսության պայմաններում ....................................................................................................18

1.3. Տնտեսության մրցունակության ապահովման հիմնական ուղղությունները ........26

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

2.1. Պետության դերը ազգային տնտեսության մրցունակության ապահովման գործում ....................................................................................................37

2.2. Տնտեսության մրցունակության վրա ազդող գործոնները և գնահատման հիմնական ցուցանիշները ....................................................................................................47

2.3. ՀՀ տնտեսության մրցունակության վիճակը և դրա ապահովման հիմնախնդիրները ....................................................................................................58

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

3.1. Տնտեսության մրցունակության բարձրացման ռազմավարությունը ......................84

3.2. Լեռնահանքային արդյունաբերության զարգացման և մրցունակության

ապահովման հիմնական մոտեցումները ....................................................................92

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..........................................................................................105
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..........................................................114

# ԱՌԱՋԱԲԱՆ

Միջազգային տնտեսական հարաբերությունների ժամանակակից փուլում յուրաքանչյուր պետության համար լուրջ հիմնախնդիր է ազգային տնտեսության մրցունակության ապահովումը,որը բնութագրում է տնտեսական համակարգի զարգացման մակարդակը և պայմանավորում է երկրի դիրքերը միջազգային շուկայում: Տնտեսության մրցունակությունը հնարավորություն է տալիս նախադրյալներ ստեղծել քաղաքական, տնտեսական և սոցիալական տարբեր խնդիրների արդյունավետ լուծման համար, ապահովել հայրենական ապրանքների իրացման բարենպաստ պայմաններ, ձևավորել սպառողական նախապատվություններ ազգային արտադրանքի նկատմամբ և զբաղեցնել ավելի շահեկան դիրքեր

համաշխարհային շուկայում: Վերջին հաշվով, այն նպաստում է հասարակության բարեկեցության մակարդակի բարձրացմանը և երկրի տնտեսական զարգացման հնարավորությունների ընդլայնմանը: Պատահական չէ, որ մրցունակության տարբեր բաղադրիչներից իր կարևորությամբ հատկապես առանձնանում է ազգային տնտեսության մրցունակությունը, քանի որ շուկայական հարաբերությունների զարգացման և համաշխարհային շուկայում մրցակցության շարունակական խորացման պայմաններում այն երկրի տնտեսական զարգացման առավել կարևոր գործիքներից մեկն է հանդիսանում: Ազգային տնտեսության մրցունակությունը այնպիսի պայմանների և գործոնների համախումբ է, որն ապահովում է պետության տնտեսական համակարգի կայուն և հաշվեկշռված զարգացումը: Հետևաբար, տնտեսության մրցունակությունը մակրոտնտեսական չափորոշիչների համալիր ցուցանիշ է, որը պայմանավորում է պետության դերը միջազգային շուկայում քաղաքական, տնտեսական և սոցիալական խնդիրների լուծման և ազգային հետաքրքրությունների բավարարման գործում, ինչի արդյունքում ապահովվում է մրցակցային հնարավորությունների բարձր մակարդակ ազգային շուկայի բոլոր գործակալների համար:

Անշուշտ, տնտեսության մրցունակության ապահովումը յուրաքանչյուր երկրի կայուն զարգացման անհրաժեշտ և կարևոր նախադրյալներից

մեկն է, որից ուղղակիորեն ու մեծապես կախված է տնտեսական համակարգի բնականոն գործունեությունը: Ակնհայտ է նաև այն փաստը, որ մրցակցային առավելությունների բացահայտումը և դրանց արդյունավետ օգտագործումը կարող է էականորեն նպաստել համաշխարհային շուկայում առաջավոր դիրքերի ապահովմանը և, դրանով իսկ, միջազգային տնտեսական հարաբերությունների խորացմանը: Ներկայումս հանրապետության տնտեսությունը մրցակցային տեսանկյունից դեռևս հեռու է ցանկալի մակարդակից, ինչը որոշակի դժվարություններ է ստեղծում արտաքին տնտեսական հարաբերությունների արդյունավետ զարգացման համար: Մրցունակության բարձրացման խնդիրների լուծման կարևորությունը պայմանավորված է հանրապետությունում տնտեսական գործունեության ընթացիկ փուլի առանձնահատկություններով, որոնք պահանջում են տնտեսության մրցակցային առավելությունների և զարգացման ուղիների բացահայտում: Այս տեսանկյունից, ազգային տնտեսության մրցունակության բարձրացման գործում յուրահատուկ դերակատարում կարող է ունենալ լեռնահանքային արդյունաբերությունը, որը զարգացած և զարգացող շատ երկրներում հանդիսանում է տնտեսական աճի ապահովման և սոցիալական զարգացման գլխավոր գործոններից մեկը: Այն հզոր ներուժ ունի երկրի տնտեսական զարգացման, մրցունակության բարձրացման և տարածքային զարգացման տարբեր խնդիրների լուծման գործում: Այս առումով, հաշվի առնելով

այն հանգամանքը, որ տնտեսության մրցունակության բոլոր բաղադրիչները գտնվում են փոխադարձ կախվածության վիճակում, և մեկը պայմանավորում է մյուսին, կարելի է պնդել, որ լեռնահանքային արդյունաբերությունը՝ համապատասխան նախադրյալների ապահովման և անհրաժեշտ տնտեսական միջավայրի ստեղծման դեպքում կարող է հանդես գալ որպես տնտեսության մի ճյուղ, որի մրցունակության բարձրացումը շղթայական ազդեցություն կունենա ինչպես մյուս ճյուղերի, այնպես էլ ազգային տնտեսության մրցունակության բարձրացման գործում:

Հայաստանի Հանրապետության տնտեսության մրցունակության բարձրացումը, անշուշտ, պահանջում է տվյալ տնտեսագիտական կատեգորիայի տեսական հիմքերի համալիր հետազոտում, այդ ուղղությամբ պետական քաղաքականության հայեցակարգային մոտեցումների վերլուծություն և համապատասխան լուծումների մշակում: Ատենախոսությունը նվիրված է նշված հիմնահարցերի ուսումնասիրությանը, ինչով էլ պայմանավորված են թեմայի ***հրատապությունն ու արդիականությունը***:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Աշխատանքի հիմնական նպատակը ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել մրցունակության էությունը և տնտեսագիտական բովանդակությունը, վերլուծել դրա տնտեսական հիմքերը և նախադրյալները, դիտարկել ազգային տնտեսության մրցունակության դերը երկրի զարգացման գործում,
- ուսումնասիրել մրցունակության և մրցակցության միջև գոյություն ունեցող կապը, վերլուծել շուկայական տնտեսության պայմաններում մրցակցային մեխանիզմի գործունեության առանձնահատկությունները և դրա զարգացման ուղիները,
- ուսումնասիրել ազգային տնտեսության մրցունակության բարձրացման ուղղությամբ պետական քաղաքականության հիմնական ուղղությունները և մրցակցային միջավայրի զարգացման մոտեցումները,
- վերլուծել տնտեսական մրցակցության վիճակը հանրապետությունում,մրցակցային միջավայրի վրա բացասաբար ազդող գործոնները և մշակել տնտեսության մրցունակության բարձրացման ռազմավարական ուղիները և հայեցակարգային ուղիները,
- գնահատել հանրապետության լեռնահանքային արդյունաբերության դերը տնտեսության մրցունակության բարձրացման գործում և մշակել առաջարկություններ դրա զարգացման ուղղությամբ:

**Ուսումնասիրության օբյեկտը և առարկան:** Ուսումնասիրության օբյեկտը ՀՀ տնտեսությունն է, իսկ ուսումնասիրության առարկան՝ դրա մրցունակության բարձրացմանն ուղղված քաղաքականությունը:

**Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը:**

Ատենախոսության համար հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, անցումային տնտեսությանը վերաբերող ուսումնասիրությունները, տնտեսական քաղաքականության տարբեր բնագավառներին վերաբերող հայրենական և արտասահմանյան գրականությունը, այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները,իրավական այլ ակտերը: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և համապատասխան պետական մարմինների պաշտոնական նյութերն ու տվյալները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, համակարգային, համեմատական և գործոնային վերլուծության մեթոդները:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

- մրցունակության տեսական հիմքերի համակողմանի վերլուծության արդյունքում

բացահայտվել են ազգային տնտեսության մրցունակության բարձրացման նախադրյալները, հիմնավորվել է մրցունակության տարբեր բաղադրիչների փոխկապվածությունը և փոխազդեցությունը,

- տնտեսության մրցունակության բարձրացման գործում պետության դերի գնահատման հիման վրա մշակվել են հանրապետությունում այդ ուղղությամբ պետական քաղաքականության ռազմավարական և մարտավարական ուղիներ առաջիկա տարիների համար,
- տնտեսության մրցունակության և մրցակցության փոխկապվածության վերլուծության արդյունքում բացահայտվել են հանրապետությունում մրցակցային միջավայրի վրա բացասաբար ազդող գործոնները և ներկայացվել են մրցակցային մեխանիզմի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ,
- ազգային տնտեսության մրցունակությունը բնութագրող ցուցանիշների միջոցով գնահատվել է հանրապետության տնտեսության վիճակը, բացահայտվել են տնտեսության մրցակցային առավելությունների ձևավորման և իրացման հնարավորությունները և ներկայացվել են միջազգային տնտեսական ինտեգրացիայի խորացման պայմաններում հանրապետության տնտեսության մրցունակության բարձրացման ուղղությամբ առաջարկություններ,

- հանրապետության լեռնահանքային արդյունաբերության ներուժային հնարավորությունների գնահատման արդյունքում մշակվել են արտադրական ամբողջական ցիկլի ապահովման և տվյալ ճյուղի զարգացման միջոցով տնտեսության մրցունակության բարձրացմանն ուղղված մոտեցումներ:

Ատենախոսությունում քննարկված հիմնախնդիրներից շատերը Հայաստանի Հանրապետությունում ամբողջական ու համակարգված ուսումնասիրման չեն ենթարկվել և չեն կրկնում այլոց կողմից առանձին հարցերի շուրջ կատարված ուսումնասիրությունները,որով էլ պայմանավորված է ստացված արդյունքների գիտական նորույթը:

ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման և լեռնահանքային արդյունաբերության զարգացման հիմնահարցերը դիտարկվել են ընդհանուր տնտեսական քաղաքականության համալիրում,որի արդյունքում մշակված մոտեցումների գործնական կիրառումը, մեր կարծիքով, կընձեռի լայն հնարավորություններ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման համար: Առաջարկված մոտեցումները հիմնված են հանրապետության տնտեսության մեջ վերջին տարիներին ձևավորված իրավիճակի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտված միտումների գնահատման վրա: Դրանց գործնական

կիրառումը, մեր կարծիքով, թույլ կտա հանրապետությունում ձևավորել այնպիսի միջավայր, որն առավելագույնս կնպաստի մրցակցային առավելությունների ձևավորման հետ կապված խնդիրների լուծմանը:

**Աշխատանքի գործնական նշանակությունը:** ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման, լեռնահանքային արդյունաբերության զարգացման վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ հանրապետությունում տնտեսության զարգացման, գործարար միջավայրի բարելավման և այդ ուղղությամբ պետական քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների համալիրի մշակման և դրա հետևողական իրականացման ընթացքում: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև նշված համակարգերում աշխատողների համար:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:** Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակված են 6 գիտական հոդվածներում:

**Ատենախոսության ծավալը և կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից,

երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 120 էջի վրա` ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

# ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

## 1.1. Տնտեսության մրցունակության էությունը և տնտեսական բովանդակությունը

Միջազգային տնտեսական ինտեգրացիոն գործընթացների խորացումը և գլոբալ շուկաների ձևավորումը լուրջ հիմնախնդիրներ են ստեղծում ազգային տնտեսությունների համար՝ դիմագրավելու նշված գործոններով պայմանավորված մարտահրավերներին: Դրանց շարքում առանձնանում է հատկապես ազգային տնտեսության մրցունակության ապահովումը, ինչով էլ պայմանավորված է տարբեր երկրների կողմից երկարաժամկետ տնտեսական ռազմավարության ուղղությունների շարքում, որպես առանցքային խնդիր, տնտեսության մրցունակության բարձրացման կարևորումը: Կարելի է նշել, որ ներկայումս միջազգային պրակտիկայում գրեթե գոյություն չունի որևէ զարգացած երկիր, որը կառավարական մակարդակով, տարբեր ինստիտուտների միջոցով չիրականացնի վերլուծություններ սեփական տնտեսության մրցունակության գնահատման և դրա բարձրացման ուղիների մշակման համար:[1]

Ըստ էության, երկրների ներգրավվածությունը համաշխարհային տնտեսական կապերի համակարգում

---

1 Андрианов В. Конкурентоспособность России в мировой экономике. Мировая экономика и международные отношения. 2000г. № 3. стр. 47-57.

պայմանավորված է դրանց բացության աստիճանով, ինչն արտահայտվում է աշխատանքի միջազգային բաժանման մեջ ազգային արտադրական համալիրների ինտեգրացման, ինչպես նաև կապիտալի, ապրանքների, ծառայությունների, աշխատուժի, ինովացիաների և տեխնոլոգիաների միջազգային հոսքերի ազատականացման մակարդակը բնութագրող ցուցանիշներով: Տնտեսության բացության խորացումն իր հերթին ներգործում է երկրի ներսում տեղի ունեցող մակրոտնտեսական գործընթացների, գոյություն ունեցող ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և, վերջին հաշվով, ազգային տնտեսության մրցունակության վրա:

Պետք է նշել, որ վերջին տարիներին ազգային տնտեսության մրցունակության ապահովումը դարձել է ոչ միայն զարգացած, այլ նաև զարգացող շատ երկրների տնտեսական քաղաքականության հիմնական թիրախներից մեկը: Համաշխարհային շուկաներում մրցակցության խորացումը, ֆինանսատնտեսական ոչ կայուն իրավիճակը և մի շարք այլ բացասական գործոններ պետություններին ստիպում են առկա մրցակցային առավելությունների օգտագործման համար փնտրել կայուն զարգացման նոր ուղիներ, ինչպես նաև մշակել մեխանիզմներ օտարերկրյա ներդրումների և տեխնոլոգիաների ներգրավման միջոցով արտադրության արդիականացման և մրցունակ արտադրանքի թողարկման նպատակով:[2]

[2] Завьялов П. Конкурентоспособность в экономической политике зарубежных стран. Маркетинг. 1996г. № 2. стр. 20-32.

Ընդհանուր առմամբ, մրցունակությունն օգտագործվում է ապրանքի, ընկերության, ճյուղի, տարածաշրջանի և երկրի կտրվածքով: Մի շարք հեղինակներ պնդում են, որ մրցունակության համընդհանուր սահմանում չի կարող լինել, քանի որ դրա մեկնաբանությունը կախված է դիտարկվող օբյեկտից (ապրանք, ծառայություն, ֆիրմա, ճյուղ, երկիր):[3] Պետք է նշել, որ ապրանքի, ընկերության և ճյուղի մրցունակության վերաբերյալ ուսումնասիրությունները և մեկնաբանությունները մասնագիտական գրականության մեջ բավականաչափ շատ են: Իսկ ինչ վերաբերում է ազգային տնտեսության մրցունակությանը, ապա դրա սահմանումը որոշակիորեն բարդ է, քանի որ այն իրենից ներկայացնում է բազմամակարդակ և բազմագործոն հասկացություն, ինչով էլ պայմանավորված է դրա համընդհանուր սահմանման բացակայությունը: Այս առումով, մրցունակության վերաբերյալ սահմանումները կարելի է դասակարգել երեք խմբի: Առաջին, մրցունակությունը երկրի ընդունակությունն է թողարկելու ապրանքներ և ծառայություններ, որոնք ի վիճակի կլինեն հաջողությամբ մրցակցելու միջազգային շուկաներում: Երկրորդ, մրցունակությունը երկրի ընդունակությունն է մշտապես ավելացնելու սեփական բաժինը համաշխարհային շուկայում: Երրորդ, տնտեսության մրցունակության հիմքում ընկած է համեմատական շահութաբերության

---

[3] Алещенко В. В. Теоретико-методологические вопросы конкурентоспособности экономической системы. Маркетинг в России и за рубежом. 2005г. № 1. стр. 106–119.

սկզբունքը, այսինքն՝ այն որոշվում է որպես միջազգային շուկայական գների և արտադրության ու իրացման համար կատարվող ծախսերի տարբերություն: Ընդհանրացնելով դրանք՝ կարելի է նշել, որ տնտեսության մրցունակության տակ պետք է հասկանալ ազգային տնտեսության և ֆինանսական համակարգի կայունություն արտաքին ներգործության նկատմամբ:

Լայն իմաստով, մրցունակությունը ենթադրում է, որ դրան տիրապետող սուբյեկտն (ապրանք, ընկերություն, ճյուղ, տնտեսություն) իր գործունեության արդյունքում ավելի լավ է բավարարում պահանջարկը և դրա հաշվին ապահովում զարգացում:

Ընդհանուր առմամբ, ազգային տնտեսության մրցունակությունը բնորոշվում է որպես տնտեսական, գիտատեխնիկական, արտադրական, կազմակերպա-կառավարչական և այլ հնարավորությունների կոնցենտրացված արտահայտություն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին շուկաներում ապրանքների և ծառայությունների մրցունակության բարձրացման նպատակով:[4] «Տնտեսության մրցունակություն» հասկացությունը գիտական շրջանառության մեջ է դրվել Հարվարդի բիզնեսի դպրոցի պրոֆեսոր Մ. Պորտերի կողմից և առաջին անգամ օգտագործվել է 1990 թվականին հրատարակված «Ազգերի մրցակցային առավելությունները» մենագրության մեջ:[5] Որոշ հեղինակներ գտնում են,

[4] Внешнеэкономический толковый словарь. под ред. И.П. Фаминского. М., 2000г. стр. 124
[5] Портер М. Международная конкуренция. М., 1993г. стр. 24

որ տնտեսության մրցունակությունը մակրոտնտեսական կատեգորիա է, որը ձեռք է բերվում այնպիսի լծակների օգնությամբ, ինչպիսիք են տարադրամի փոխարժեքը, տոկոսադրույքը և վճարային հաշվեկշիռը: Մյուսների կարծիքով տնտեսության մրցունակությունը որոշվում է բնական հարուստ ռեսուրսներով,էժան աշխատուժով և նմանատիպ այլ գործոններով:[6] Մ. Պորտերը երկրի մրցունակությունը սահմանում է որպես ռեսուրսների օգտագործման արդյունավետություն (արտադրողականություն)՝ արտահայտված աշխատանքի կամ կապիտալի միավորի ետգնման արժեքով: Հեղինակի կարծիքով հենց արտադրողականությունն ու արդյունավետությունն են հանդիսանում երկրում կենսամակարդակի որոշիչ գործոններ և բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտների հիմնական աղբյուր:[7] Ներկայացված մեկնաբանությունից բխում է, որ երկրի բարեկեցությունը պայմանավորված է տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունավետությամբ: Սակայն պետք է նկատի ունենալ, որ տնտեսության մրցունակությունը կախված է ոչ միայն երկրի ներսում ընկերությունների գործունեությունից,այլ նաև արտաքին գործոններից:

---

[6] Алещенко В.В. Теоретико-методологические вопросы конкурентоспособности экономической системы. Маркетинг в России и за рубежом. 2005г. № 1. стр. 112

[7] Портер М. Международная конкуренция. М., 1993г. стр. 29

ԱՄՆ նախագահին կից գործող արդյունաբերական մրցունակության հանձնաժողովի կողմից ազգային տնտեսության մրցունակությունը ներկայացվում է որպես ազատշուկայի պայմաններում միջազգային պահանջներին բավարարող և սեփական տնտեսության եկամուտների աճն ապահովող ապրանքներ ու ծառայություններ արտադրելու և մատուցելու երկրի հնարավորությունը։[8]

Տվյալ հիմնահարցի վերաբերյալ ժամանակակից ուսումնասիրություններում պետությունը, գիտահետազոտական ինստիտուտները և երկրի անդրազգային ընկերությունները դիտարկվում են որպես հիմնական ինստիտուցիոնալ գործոններ, որոնք էականորեն ներգործում են մակրոմակարդակում երկրի տնտեսության մրցունակության վրա։ Մենեջմենթի միջազգային ինստիտուտը ազգային տնտեսության մրցունակությունը ներկայացնում է որպես տնտեսագիտական ուսումնասիրությունների ոլորտ, որը վերլուծում է ընկերությունների համար լրացուցիչ եկամուտների և բնակչության կենսամակարդակի աճի ապահովման գործում երկրի հնարավորությունների և ընդունակությունների ավելացմանն ուղղված քաղաքականությունը։[9] Ըստ էության, տնտեսության մրցունակությունն իր մեջ ներառում է ոչ միայն բուն տնտեսության, այլ նաև պետական կառավարման համակարգի և հասարակության մրցունակությունը։ Երկրի

[8] Global Competition: The New Reality, Report of the President's Commission on Competitiveness. Vol. 2. Washington, D.C.: U.S. Government Printing Office, 1985.
[9] Institute of Management Development, IMD. www.imd.org

կայուն զարգացումը, բնակչության կենսամակարդակի աճը հնարավոր չէ առանց պետական, իրավաքաղաքական և հասարակական մրցունակ կառուցվածքի: Այս տեսանկյունից կարելի է նշել, որ երկրի մրցունակությունը ձևավորվում է մասնավոր (ընկերություններ, ձեռնարկություններ և այլն) և հանրային մրցունակ սեկտորներից (իշխանության մարմիններ, կրթություն, առողջապահություն և այլն):[10]

Նոբելյան մրցանակի դափնեկիր Լ. Կլեյնը որպես տնտեսության մրցունակություն հիմնական պայման է համարում տարեկան 3-4 տոկոս տնտեսական աճի կայուն տեմպերի առկայությունը, որի դեպքում հնարավոր կլինի ապահովել կենսամակարդակի բարձրացում:[11] Ակնհայտ է, որ նման մոտեցումը չի կարող միանշանակ կերպով ընդունելի լինել՝ հատկապես զարգացող երկրների պարագայում: Այս առումով կարծում ենք, որ տնտեսական աճի այնպիսի տեմպերի ապահովումը, որն ուղղակիորեն կնպաստի բնակչության կենսամակարդակի աճին, յուրաքանչյուր երկրի համար տարբեր է:

Տնտեսության մրցունակության մեկնաբանության ժամանակ շատ հեղինակներ իրենց շեշտադրումները կատարում են հատկապես դրա վրա ազդող գործոնների վրա: Մասնավորապես, Մ. Գելվանովսկու կարծիքով մրցունակությունը ընկերությունների, ճյուղերի, տարածաշրջանների և երկրի ընդունակությունն է ապահովել

---

[10] Совет по национальной конкурентоспособности. www.conc.org.
[11] Competitiveness: 23 Leaders speak out. Harvard business review. Boston, 1997. Vol. 55. № 4. P. 108–123.

համեմատաբար բարձր եկամուտների և աշխատանքի վարձատրության մակարդակ՝ լինելով բաց միջազգային մրցակցության համար:[12] Ակնհայտ է, որ այս դեպքում մրցունակությունն իր մեջ ներառում է արտադրողականության, արդյունավետության և շահութաբերության տարրեր: Սակայն վերջիններս չի կարելի համարել սպառիչ պայմաններ վերջնական նպատակի ձեռքբերման համար՝ չնայած, որ դրանք հանդիսանում են բնակչության կենսամակարդակի բարձրացման և նյութական բարեկեցության ապահովման կարևոր միջոցներ:Յու.Կուրենկովը և Վ. Պոպովը գտնում են, որ մրցունակությունը երկրի տնտեսության հնարավորությունն է այլ երկրների հետ մրցակցության պայմաններում արտադրել և սպառել բնապահպանական ստանդարտներին բավարարող ապրանքներ և ծառայություններ, որի արդյունք պետք է հանդիսանա բնակչության կենսամակարդակի աճը: Որպես մրցունակության գնահատման չափանիշներ առանձնացվում են արտաքին առևտրի դրական սալդոն, վճարային հաշվեկշիռը, արտաքին պահուստների աճը, կրթական մակարդակի բարձրացումը, տնտեսական ենթակառուցվածքները և կյանքի որակը:[13] Այս մոտեցման ակնհայտ առավելություններից մեկն այն է, որ հեղինակներն իրենց շեշտադրումը կատարում են ոչ միայն արտադրության, այլ նաև սպառման վրա՝ կարևորելով բնապահպանական գործոնի դերը:

---

[12] Гельвановский М.И. Конкурентоспособность России в 90-е годы: межстрановый макроэкономический анализ. М., 2000г. стр. 61

[13] Куренков Ю.В. и др. Конкурентоспособность России в глобальной экономике. М., 2003г. Стр. 124

Հարվարդի Field Guide to Business Terms բառարանում մրցունակությունը սահմանվում է որպես երկրի կամ բիզնեսի ընդունակություն՝ թողարկելու համաշխարհային շուկաներում հաջողությամբ մրցակցող ապրանքներ և ծառայություններ:[14] Բելգիացի տնտեսագետ Ֆ. Պրադեն ազգային տնտեսության մրցունակությունը բնորոշում է որպես երկրի ընդունակությունը մշտապես ավելացնելու սեփական բաժինը համաշխարհային շուկայում:[15] Այս մեկնաբանությունը ենթադրում է, որ մրցակից պետությունների համեմատությամբ ապրանքների որակի կամ արտադրության ծախսերի գծով երկիրը տիրապետում է այնպիսի առավելությունների, որոնք տնտեսությանը հնարավորություն են տալիս մրցակցության պայմաններում ունենալ սեփական կայուն տեղը համաշխարհային շուկայում:

Որպես կանոն, համաշխարհային շուկայում ազգային տնտեսության բաժնեմասի ավելացումը հանդիսանում է մրցունակության կարևոր, սակայն միայն արտաքին բնութագրիչ: Այն հաշվի չի առնում տնտեսության ներքին միջավարի առանձնահատկությունները, արտահանվող արտադրանքի ծախսատարությունը և արտահանումից ստացվող եկամուտները: Ասվածի վառ օրինակ է հանդիսանում ԽՍՀՄ-ը, որի տնտեսության բաժնեմասը համաշխարհային շուկայում ապահովվում էր ծախսերի բարձր մակարդակի հաշվին

[14] Field Guide to Business Terms. Boston (Mass.), 1993.-P71.
[15] Prades F.G. Disparites des couts competitivite et changes. // Reflets et perspectives de la vie economique.-Bruxelles.-1977. - Nov. - P. 308.

և ինչի հետևանքով էլ, ի վերջո, տնտեսությունը փլուզվեց:[16] Այս առումով, պետք է նշել, որ համաշխարհային շուկայում երկիրը մրցակցային առավելություններ ձեռք է բերում կոնկրետ ծախսերի իրականացման հաշվին, որոնք արտահանման դեպքում պետք է ոչ միայն փոխհատուցվեն, այլ նաև ապահովեն շահույթ:

Աշխատանքի միջազգային բաժանման և ապրանքաշրջանառության ժամանակակից համակարգերի պայմաններում յուրաքանչյուր երկրի տեղը և դերը համաշխարհային տնտեսությունում որոշվում է ոչ միայն արտահանվող ապրանքների գծով քիչ ծախսերի, այլ նաև դրանց որակի, տնտեսության արդյունավետության և, ընդհանրապես, ինովացիոն, տեխնոլոգիական զարգացման մակարդակով: Միայն նման բազիսի առկայության դեպքում հնարավոր կլինի արագ և ճկունկերպով հարմարվել տնտեսական կոնյունկտուրայի փոփոխություններին և դիմագրավել առաջացող մարտահրավերները:

Ընդհանուր առմամբ, ազգային տնտեսությունը հանդիսանում է համաշխարհային տնտեսության անբաժանելի բաղկացուցիչներից և կարող է զարգացնել իր մրցակցային առավելություններն այն դեպքում, երբ իր տնտեսական ցուցանիշները համապատասխանում են համաշխարհային տնտեսության զարգացման վեկտորին: Այլ կերպ ասած, ազգային տնտեսության մրցունակության ապահովումը հնարավոր է միայն համաշխարհային

[16] Кормнов Ю. О повышении конкурентоспособности экономики. Экономист. 2006г. № 8. стр. 13-20.

տնտեսության զարգացման միտումները հաշվի առնելով՝ մրցակցային ռազմավարության մշակման և իրականացման դեպքում: Տնտեսության մրցունակության գնահատումը, պայմանավորված տվյալ տնտեսագիտական կատեգորիայի բազմաբովանդակությամբ, չափազանց կարևոր է: Ընդհանուր առմամբ, դա իրականացվում է ինչպես քանակապես,այնպես էլ որակապես:Սակայն առաջինի դեպքում ապահովվում է հստակության ավելի բարձր մակարդակ,իսկ երկրորդի դեպքում պատկերն ավելի ընդհանրական է:

Ըստ էության,կարող ենք նշել,որ տնտեսության մրցունակության վերաբերյալ գոյություն ունեցող սահմանումները և մեկնաբանությունները ոչ այնքան հակասում են միմյանց, ինչքան արտացոլում են տվյալ տնտեսագիտական կատեգորիայի տարբեր ասպեկտներ: Միաժամանակ, գոյություն ունեցող մեկնաբանությունների բազմաբովանդակությունը և լայն շրջանակը թույլ են տալիս պնդել, որ տնտեսության մրցունակությունն իր մեջ ընդգրկում է ոչ միայն բուն տնտեսական քաղաքականությունը, այլ նաև երկրի քաղաքական, հասարակական, սոցիալական, բնապահպանական զարգացման տարբեր ուղղություններ: Այս առումով կարծում ենք՝ տնտեսության մրցունակության մեկնաբանությունը պետք է հիմնված լինի տվյալ երևույթի տարբեր ասպեկտների համակողմանի դիտարկման վրա, ինչի արդյունքում կարող ենք արձանագրել հետևյալը:

Առաջին, երկրի ազգային մրցունակությունը տնտեսական համակարգի դինամիկ և անընդհատ զարգացումն արտացոլող օբյեկտիվ գործընթաց է: Հետևաբար, մրցունակությունը պահանջում է պետական քաղաքականության շրջանակներում համապատասխան միջոցառումների և քայլերի իրականացում` տնտեսական զարգացման ձեռք բերված մակարդակի պահպանման և բարձրացման համար:

Երկրորդ, տնտեսության մրցունակությունն ուղղակիորեն կախված է հայրենական ընկերությունների և նրանց կողմից թողարկվող և տեղական ու միջազգային շուկաներում պահանջարկ ունեցող ապրանքների և ծառայությունների մրցունակությունից:

Երրորդ, տնտեսության մրցունակությունը հանդես է գալիս որպես տնտեսական քաղաքականության հիմնարար նպատակ և կարևոր գործիք բնակչության կենսամակարդակի բարձրացման և հասարակական բարեկեցության ապահովման համար:Տնտեսության մրցունակության ապահովումը, վերջին հաշվով, պետք է հանգեցնի սոցիալական զարգացման բարձր տեմպերի, երկարաժամկետ հատվածում կայուն տնտեսական աճի, հասարակության սոցիալ-քաղաքական և իրավական կայունության:

Չորրորդ, ազգային տնտեսության մրցունակության բարձրացումը մեծապես հիմնված է երկրի ինովացիոն հնարավորությունների բազայի, գիտատեխնիկական ներուժի, ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա: Որոշակի

ապրանքային խմբերի գծով համաշխարհային շուկայում սեփական մասնաբաժնի ավելացումը հանդիսանում է միջազգային մասնագիտացման կարևոր պայման:

Պետք է նշել, որ մրցունակությունը կախված է ոչ միայն երկրի տնտեսական ներուժից, այլև շուկայական պահանջմունքների բավարարման և դրանց փոփոխություններին արագ և օպերատիվ կերպով հարմարվելու կարողությունից: Տնտեսական զարգացման ներկա փուլում ազգային տնտեսության մրցունակության ապահովման գործում հատկապես մեծ դեր է վերապահված արտադրական սեկտորի արդիականացմանը և ինովացիաների կիրառման շրջանակների ընդլայնմանը: Այս տեսանկյունից, ազգային մրցունակության բարձրացման գործում հիմնարար նախապայման են հանդիսանում մրցակցային առավելությունները,որոնք կարելի է դասակարգել 4 հիմնական խմբերի.ռեսուրսային,տեխնոլոգիական, կառուցվածքային և պետության տնտեսական քաղաքականության արդյունավետության հետ կապված:

Ռեսուրսային առավելությունների հիմքում ընկած է արտադրության գործոններով (բնական ռեսուրսներ, աշխատուժ և այլն) երկրի ապահովվածությունը և դրանց օգտագործման արդյունավետությունը (արտադրության ծախսեր, գների մակարդակ, փոխարժեք): Տեխնոլոգիական առավելություններն ապահովում են ինչպես առանձին ճյուղերի, այնպես էլ տնտեսության կտրվածքով տնտեսության գիտատեխնիկական

զարգացումը, նորարարությունների ներդրումը: Կառուցվածքային առավելությունները կապված են տնտեսության առաջադեմ կառուցվածքի, գիտատեխնիկական զարգացման պահանջներին դրա համապատասխանության, հիմնական և սպասարկող ճյուղերի օպտիմալ զուգակցման, տնտեսության դիվերսիֆիկացման հետ: Եվ վերջապես, տնտեսական զարգացումը հիմնվում է բարենպաստ տնտեսական միջավայրի վրա, որը արդյունք է իրականացվող տնտեսական քաղաքականության:

Ժամանակակից մրցունակ տնտեսությունները հիմնականում հիմնված են տեխնոլոգիական, իսկ որոշ դեպքերում նաև՝ ռեսուրսային առավելությունների վրա: Եթե նախկինում տնտեսության մրցունակության ապահովման գործում մեծ դերակատարում ունեին այնպիսի ռեսուրսային առավելություններ, ինչպիսիք էին բնական հարուստ պաշարները, բարենպաստ աշխարհագրական դիրքը և այլն, ապա ներկայումս որոշիչ դեր ունեն տեխնոլոգիական գործոնները: Որպես այդպիսիք կարելի է առանձնացնել մարդկային կապիտալում ներդրումները, ընկերությունների տեխնոլոգիական զարգացման և նորարարությունների ներդրման համար բարենպաստ տնտեսական միջավայրը, միջազգային առևտրի բաց համակարգը և այլն:

Այսպիսով, կարող ենք նշել, որ տնտեսության մրցունակությունը որոշակի առավելությունների առկայությունն է, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում լավագույնս բավարարել շուկայի պահանջմունքները և

զբաղեցնել բարենպատ դիրքեր: Ընդ որում, պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ նույն ապրանքը կարող է մի շուկայում լինել մրցունակ, իսկ մյուսում՝ ոչ: Այսինքն՝ այստեղ որոշիչ հանգամանք են հանդիսանում շուկայական պահանջմունքները:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ տնտեսության մրցունակության բնութագրիչները պետք է դիտարկել միմյանց հետ փոխկապվածության և դինամիկ զարգացման համատեքստում: Դրանցից յուրաքանչյուրն իր հերթին ունի իր ցուցանիշները, որոնց միջոցով գնահատվում է մրցունակության մակարդակը: Վերջին հաշվով, դրա ապահովումը սերտորեն կապված է ինովացիոն զարգացման, ներդրումների ներգրավման, բարձր տեխնոլոգիաների ներդրման և այլ համանման խնդիրների լուծման հետ: Արդյունքում, կարելի է նշել, որ երկրի մրցունակությունը պայմանավորված է հայրենական ընկերությունների և նրանց կողմից թողարկվող ապրանքների մրցունակությամբ և արտացոլում է արտադրության և իրացման արդյունավետության մակարդակը ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Ընդ որում, մրցունակության ապահովումն ուղղակիորեն պայմանավորված է շուկայական մրցակցության զարգացման աստիճանով, որի ուսումնասիրությանն է նվիրված ատենախոսության հաջորդ բաժինը:

## 1.2. Մրցունակությունը և մրցակցությունը

## Շուկայական տնտեսության պայմաններում

Շուկայական տնտեսության բնականոն գործունեությունը ենթադրում է մրցակցություն, որն անհրաժեշտ նախապայման է հանդիսանում դրա զարգացման և տնտեսական բարենպաստ միջավայրի ձևավորման համար: Տնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց տնտեսավարող սուբյեկտների միջև սրվում է մրցակցությունը, ինչը պայմանավորված է համաշխարհային տնտեսությունում տարբեր տնտեսական համակարգերի ինտեգրացման և գիտատեխնիկական առաջընթացի բարձր տեմպերով:Մի շարք երկրների ներքին շուկաների բացությունը և թույլ պաշտպանվածությունը շատ դեպքերում հանգեցնում են օտարերկրյա արտադրության ապրանքների ներմուծման ծավալների աճին՝ խորացնելով մրցակցային պայքարը ներքին արտադրողների հետ:[17]

Հայտնի է, որ ձեռնարկատիրական գործունեության հիմնական նպատակը շահույթի ստացումն է, որն ուղղակիորեն կախված է սպառողների կողմից ապրանքների և ծառայությունների նկատմամբ դրսևորվող պահանջարկից:Այս տեսանկյունից,կարելի է պնդել, որ տնտեսական մրցակցությունը, վերջին հաշվով, իրենից ներկայացնում է պայքար վճարունակ պահանջակի համար: Ակնհայտ է, որ սպառողների

[17] Васьковский А. Роль конкуренции в становлении рыночной экономики. М. РАГС. 2000г. стр. 8

կողմից ապրանքների և ծառայությունների պահանջվածությունը մեծացնում է դրանց իրացման հնարավորությունները՝ նպաստելով արտադրության շահութաբերության բարձրացմանը: Միևնույն ժամանակ, վերջինս կարևոր նախապայման է հանդիսանում տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ներուժի ավելացման, սպառողների աճող պահանջմունքների բավարարման և մրցակցային պայքարում հաջողությունների հասնելու համար: Մրցակցային մեխանիզմը գերազանցապես հիմնված է սպառողների նախասիրությունների վրա, որոնք ենթակա չեն կարգավորման և հետին պլան են մղում այնպիսի ոչ տնտեսական խթաններ, ինչպիսիք են հայրենասիրությունը, նվիրվածությունը և այլն: Արդյունքում, մրցակցային պայքարում հաղթում են ավելի շատ մրցակցային առավելություններ, ֆինանսական, նյութական և գիտատեխնիկական մեծ ներուժ ունեցող տնտեսավարող սուբյեկտները:

Մրցակցային մեխանիզմը գործում է գնային կարգավորման հիման վրա, որի էությունը կայանում է առաջարկի և պահանջարկի միջոցով հավասարակշռված գնի ձևավորման մեջ: Ըստ էության, վերջինիս ազդեցությունը չափազանց մեծ է ապրանքների և ծառայությունների մրցունակության վրա, ինչը ստիպում է արտադրողներին նորանոր լուծումներ փնտրել թողարկվող ապրանքների և ծառայությունների գների նվազեցման նպատակով: Մրցակցային նման մեխանիզմի գործողության միջոցով են ստեղծվում

շուկայական համակարգի բնականոն գործունեության և զարգացման նախադրյալները:

Հարկ է նշել, որ մրցակցության արդյունավետության հիմնական չափանիշ և արդյունք է հանդիսանում շուկայի մասնակիցների մրցունակության մակարդակը: «Մրցունակություն» հասկացությունը, ինչպես կարելի է նկատել, կազմված է «մրցակցություն» և «ունակություն» բառերից, որոնց համադրումը տնտեսական տեսանկյունից նշանակում է որոշակի սուբյեկտների կամ նրանց կողմից թողարկվող ապրանքների և մատուցվող ծառայությունների ընդունակությունը,հնարավորությունը ոչ միայն դիմագրավելու մրցակիցներին, այլ նաև ապահովելու ավելի մեծ շահութաբերություն, ռեսուրսների արդյունավետ և որակյալ օգտագործում: Ընդհանուր առմամբ, մրցունակությունը որոշակիորեն կապված է մրցակցության հետ: Կարող ենք նշել, որ մրցունակության ձևավորման պատճառ է հանդիսանում մրցակցությունը կամ, այլ կերպ ասած, եթե մրցակցությունը պատճառն է, ապա մրցունակությունը այդ պատճառի ներգործության արդյունքն է: Դրանով հանդերձ, մրցակցային պայքարում հաջողությունների հասնելու հիմնական գրավականը տնտեսական առավելությունների առկայությունն է: Այս առումով, մրցակցային վարքագծի ընտրությունը, պայքարի ձևերն ու մեթոդներն առաջին հերթին ուղղված են մրցակցային առավելությունների

ձեռքբերմանը, որոնք էլ հենց պայմանավորում են մրցունակության մակարդակը: Տնտեսական գործունեության արդյունավետությունը, նախ և առաջ, մեծապես պայմանավորված է տվյալ սուբյեկտի ունեցած քանակական ու որակական մրցակցային առավելություններով: Վերջիններս հնարավորություն են տալիս ապահովել լրացուցիչ եկամուտներ, մրցակիցներին թելադրել տնտեսավարման սեփական պայմանները, մրցակցային պայքարի մեթոդները, ստիպել մրցակիցներին գիտատեխնիկական նորամուծությունների և նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ իրականացնել համապատասխան քայլեր: Մրցունակության տնտեսական բովանդակությունը պարզելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել մրցակցային առավելությունների ձևավորման մեխանիզմը:[18]

Ըստ էության, մրցակցության հետևանք է հանդիսանում ինովացիոն գործընթացների զարգացումը, որը մրցակցային առավելությունների ապահովման կարևոր գործիք է: Այն ապրանքային տեսականու նորացման միջոցով ստեղծում է հասարակության պահանջմունքների բավարարման լայն հնարավորություններ, ամրապնդում է տնտեսավարող սուբյեկտների դիրքերը շուկայում, նպաստում է մրցակցության խորացմանը և ռեսուրսների տեղաբաշխմանը դեպի հեռանկարային արտադրություններ: Մրցակցության արդյունքում են ստեղծվում

[18] Гаврилов В. Концепция сущности и функций конкуренции. Актуальные проблемы политической экономии: сб. ст. Воронеж. 2004г. Ч. 1. стр. 62-64.

խթաններ տարբեր տնտեսավարող սուբյեկտների կողմից նորարարությունների ներդրման նպատակով լրացուցիչ ծախսերի իրականացման համար:[19]

Տնտեսական զարգացման ներկա փուլում առաջին պլան է մղվել տեխնոլոգիական մրցակցությունը, որը ենթադրում է նորարարությունների շարունակական ներդրման ու կիրառման միջոցով թողարկվող ապրանքատեսականու որակական հատկանիշների բարձրացում և սպառողների շարունակաբար աճող պահանջմունքների բավարարում: Արդյունքում լայն զարգացում է ստանում ոչ գնային մրցակցությունը,որն իրենից ներկայացնում է սպառողների վճարունակ պահանջարկի համար պայքար արտադրանքի որակական հատկանիշների բարձրացման, նոր ապրանքատեսակների ստեղծման, գոյություն ունեցողների արդիականացման միջոցով: Պետք է նշել, որ ներկայումս ոչ գնային մրցակցության դրսևորումներն առավել ցայտուն են արտահայտվում, ինչը պայմանավորված է տեխնոլոգիական զարգացման արդի դարաշրջանի առանձնահատկություններով:Սակայն պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ ոչ գնային մրցակցությունն առաջ է բերում տեխնոլոգիական վերազինումների և նորարարությունների ներդրման անհրաժեշտություն, որոնք, ի վերջո, կապված են նաև ֆինանսական ներդրումների հետ և

[19] Балабанов И. Инновационный менеджмент: учеб. Пособие. Питер. 2000г. стр. 106

իրենց արտացոլումն են գտնում ապրանքների և ծառայությունների գների մեջ:

Այսպիսով, կարող ենք նշել, որ շուկայական տնտեսության զարգացումն ուղղակիորեն կախված է մրցակցության վիճակից, որը պայմանավորում է գիտատեխնիկական առաջընթացը և նոր տեխնոլոգիաների ներդրումը: Մրցակցությունն իրենից ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտների միջև պայքար` ապրանքների և ծառայությունների արտադրության և իրացման առավել ձեռնտու պայմանների համար:[20] Հայտնի է, որ շուկայական տնտեսության պայմաններում մրցակցությունն իրականացնում է մի շարք կարևոր գործառույթներ, որոնցից հիմնականը շուկայական գնագոյացման մեխանիզմի վրա հիմնված ապրանքի գնի ձևավորումն է: Անշուշտ, առանց մրցակցության շուկայական հարաբերությունների զարգացումը գործնականում անհնար է, քանի որ այն հանդիսանում է գնային կարգավորման և տնտեսության արդիականացման շարժիչ ուժերից: Ավելին` հենց այդ հատկանիշի շնորհիվ է մրցակցությունը դառնում ոչ միայն շուկայի գոյության անբաժանելի մասը, այլ նաև գիտատեխնիկական զարգացման, ռեսուրսների ռացիոնալ բաշխման և նորարարությունների ներդրման հիմնական խթան: Գործնականում շուկայի մասնակիցներից յուրաքանչյուրը ձգտում է առավելագույն օգուտի ստացման, որի համար փորձում է թողարկել համանման այլ ապրանքների

[20] Гоголева Т. Конкуренция: сущность, закономерность, регулирование: монография. Воронеж. 2004г. стр. 63

համեմատությամբ ավելի մրցունակ արտադրանք: Վերջինս ենթադրում է որակական, տեխնոլոգիական և գնային այնպիսի հատկանիշների առկայություն, որոնք այն սպառողի համար կդարձնեն առավել նախընտրելի:

Մրցակցային առավելությունների ձևավորման մեթոդները և եղանակներն իրենց մեջ ներառում են արտադրության և վերջնական սպառողներին առաքման վրա կատարվող ծախսերի նվազեցման, ինչպես նաև արտադրանքի որակական հատկանիշների բարձրացման, երաշխիքային սպասարկման ուղղությամբ իրականացվող քայլերի համախումբ: Ընտրված մեթոդների և եղանակների ամբողջությունը ձևավորում է մրցակցային պայքարի ռազմավարությունը, մրցունակության տեսակը և ձևը, որը կախված է մրցակցության պայմաններից: Այսպիսով՝ մրցակցության և մրցունակության գործառույթներն ու մեխանիզմները սերտորեն կապված են միմյանց հետ, ինչը վկայում է այդ երկու տնտեսական երևույթների միջև գոյություն ունեցող որոշակի փոխկապակցվածության մասին: Ըստ էության, մրցունակությունն արդյունք է հանդիսանում այն գործողությունների և քայլերի, որոնք ուղղված են սպառողների նախասիրությունների բավարարման հաշվին տնտեսական գործունեության շահութաբերության մակարդակի բարձրացմանը: Դա նշանակում է, որ մրցակցությունը և մրցունակությունը հանդիսանում են շուկայական մեխանիզմի հիմնական տարրերից, որում.

- մրցակցությունը ծառայում է որպես տնտեսական զարգացման աղբյուր,որի արդյունք է հանդիսանում մրցունակությունը: Ընդ որում, մրցունակության զարգացման մակարդակը պայմանավորված է մրցակցային միջավայրի գործոններով,որոնք պայմաններ և խթաններ են ստեղծում տվյալ տնտեսավարող սուբյեկտի տնտեսական զարգացման համար,
- մրցունակությունն իրենից ներկայացնում է տնտեսական մեխանիզմ, որն ապահովում է այն տիրապետողի և համապատասխան շուկայի առաջընթաց զարգացումը:

Հարկ է նշել, որ մրցակցությունը և մրցունակությունը իրենց գործողության մեխանիզմի, իրականացվող գործառույթների և առաջացման աղբյուրի առումով միմյանց որոշակիորեն նման են: Սակայն դրանց տնտեսական բովանդակությունը տարբեր է, քանի որ մրցակցությունն իրենից ներկայացնում է ապրանքների տեխնիկական, ֆինանսական, սոցիալական, կառավարչական լավագույն հատկանիշների բացահայտման գործընթաց, իսկ մրցունակությունն այդ գործընթացի տնտեսական արդյունքն է:Այս տեսանկյունից,կարող ենք նշել, որ մրցակցությունը պարտադիր և անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է մրցունակության ձևավորման համար: Եթե դիտարկենք մրցունակության վրա մրցակցության ներգործության եղանակը, ապա կնկատենք, որ այն

ավելի շուտ խթան է հանդիսանում մրցունակության զարգացման համար:[21]

Հայտնի է, որ շուկայական տնտեսության պայմաններում տնտեսավարող սուբյեկտների գործունեության տնտեսական արդյունավետությունը կախված է շուկայում նրանց կողմից թողարկված ապրանքների նկատմամբ գոյություն ունեցող պահանջարկից: Հակառակ դեպքում նման գործունեությունը կդառնա անիմաստ: Այսինքն՝ թողարկվող ապրանքները պետք է ոչ միայն համապատասխանեն սպառողների պահանջներին և հետաքրքրություններին, այլև համանման ապրանքների համեմատությամբ լինեն ավելի նախընտրելի: Ապրանքի մրցունակությունը ձևավորվում է արտադրության ծախսերի կրճատման, արտադրողականության աճի, որակական հատկանիշների բարձրացման հաշվին, որոնք, ներգործելով գնի վրա, հիմքեր կստեղծեն շուկայում առողջ մրցակցության համար:

Ներկայումս շատ երկրներ սեփական ապրանքների մրցունակությունն ապահովում են ինովացիաների և բարձր տեխնոլոգիաների ներդրման միջոցով, առանց որի հնարավոր չէ պետության գիտատեխնիկական ներուժի զարգացումը: Բացի այդ, վերջին տարիներին մեծ նշանակություն է ստացել բնապահպանական գործոնը: Կոշտ ստանդարտների սահմանումը, էկոլոգիական պահանջների խստացումը և

[21] Спиридонов И. Международная конкуренция и пути повышения конкурентоспособности экономики России. М. 1997г. стр. 49

միաժամանակ սրացող մրցակցությունը համաշխարհային շուկայում գործող սուբյեկտներին ստիպում են նոր տեխնոլոգիական լուծումներ մշակել և կիրառել էկոլոգիապես մաքուր ապրանքներ արտադրելու համար: Այսպիսով՝ ապրանքի մրցունակությունը կարելի է բնութագրել որպես սպառողական, գնային և որակական բնութագրիչների համալիր, որոնք պայմանավորում են դրա հաջողությունը արտաքին և ներքին շուկաներում:[22]

Ընկերության մրցունակությունը ձևավորվում է արտադրության շահութաբերության բարձր մակարդակի ապահովման, ինովացիոն ակտիվության, աշխատանքի արտադրողականության, մենեջմենթի ճկուն և արդյունավետ համակարգի հաշվին: Այն հիմնված է բազմաթիվ մրցակցային առավելությունների վրա, որոնք դրսևորվում են շուկայում այլ մրցակիցների տնտեսական գործունեության ցուցանիշների հետ համադրման արդյունքում:[23] Ակնհայտ է, որ ինչքան շատ են մրցակցային առավելությունները և բարձր են դրանց որակական բնութագրիչները, այնքան մեծ են տվյալ սուբյեկտի արդյունավետ գործունեության հնարավորությունները միջազգային շուկայում: Այս տեսանկյունից, տնտեսական զարգացման ներկա փուլում տարբեր ընկերություններ միջազգային շուկաներում սեփական դիրքերն ամրապնդում և բարձր մրցունակություն ապահովում են նախև առաջ

[22] Горбашко Е. Конкурентспособность промышленной продукции: учеб. пособие. СПб. 1991г. стр. 18
[23] Мисаков В. Анализ конкурентоспособности фирмы. Финансы и статистика, М. 1998г. стр. 23

գիտահետազոտական աշխատանքների իրականացման և այդ նպատակով ֆինանսական զգալի միջոցների հատկացման ճանապարհով: Այսպիսով, ընկերությունների մրցունակությունը կարելի է բնութագրել որպես կառավարչական, տեխնոլոգիական,արտադրական և գիտահետազոտական չափանիշների համադրում, որոնք հնարավորություն են տալիս ստանալ առավելագույն սոցիալ-տնտեսական և ֆինանսական էֆեկտ մրցունակ արտադրանքի արտադրությունից և իրացումից:

Միջազգային շուկայում ինտեգրացիոն գործընթացների և գլոբալիզացիայի խորացումը հանգեցնում են մակրոմակարդակում մրցունակության աստիճանի բարձրացման՝ հիմնված առանձին սուբյեկտների և նրանց կողմից թողարկվող արտադրանքի մրցունակության վրա:Ըստ էության, այն իր մեջ ներառում է նաև առանձին ճյուղերի և ընդհանուր երկրի մրցունակությունը, ինչը պայմանավորում է համաշխարհային շուկայում հայրենական արտադրողների շահերի և հետաքրքրությունների պաշտպանության անհրաժեշտությունը:Ճյուղի մրցունակությունը, որը հիմնված է աշխատանքի միջազգային բաժանման վրա, ձևավորվում է արտադրանքի և ընկերության մրցունակության վրա ազդող բոլոր գործոնների հաշվին:Տարբերությունը կայանում է նրանում,որ այստեղ պահանջվում է միջազգային ստանդարտներին և պահանջներին, գիտության և տեխնիկայի ձեռքբերումներին համապատասխանող

ապրանքների մրցունակության ավելի բարձր աստիճան: Այն հետևանք է միջազգային մրցակցության, որը հիմնված է տվյալ ճյուղում արտադրության ծախսերի տարբերությունների վրա՝ կոնկրետ երկրների կտրվածքով: Ճյուղի մրցունակությունն իրենից ներկայացնում է ներքին շուկայում գործող տնտեսավարող սուբյեկտների և ապրանքների մրցունակության այնպիսի աստիճան,որը հնարավորություն է տալիս տվյալ ճյուղի արտադրանքի գծով միջազգային շուկայում ապահովել մրցակցային առավելություններ:[24]

Ազգային տնտեսության մրցունակությունը հանդիսանում է հաջողության բարձրագույն ցուցիչ, որը բնութագրում է երկրի ամբողջ տնտեսական համակարգի զարգացման մակարդակը, իր մեջ ներառում է ապրանքի, ընկերության, ճյուղի մրցունակությունը և պայմանավորում է երկրի դիրքերը միջազգային շուկայում: Երկրի մրցակցային առավելությունները միջազգային ասպարեզում ապահովվում են առանձին ապրանքների, ընկերությունների և ճյուղերի բոլոր մրցակցային առավելությունների կենտրոնացման շնորհիվ, ինչը հնարավորություն է տալիս օգտագործել մուլտիպլիկատորի էֆեկտը: Ներկայումս ընթացող գլոբալ ինտեգրացիոն գործընթացների արդյունքում տարբեր երկրների միջև մրցակցությունը ստեղծում է խթաններ արտադրության նյութատարության և

[24] Швандар К. Международная конкурентоспособность. Современный взгляд на концепцию. МАКС-Пресс М. 2006г. стр. 101

էներգատարության նվազեցման, բնապահպանական պահանջների պահպանման, գիտատեխնիկական առաջընթացի զարգացման համար:[25] Տնտեսության մրցունակությունը հնարավորություն է տալիս նախադրյալներ ստեղծել քաղաքական, տնտեսական և սոցիալական տարբեր խնդիրների արդյունավետ լուծման համար, ապահովել հայրենական ապրանքների իրացման բարենպաստ պայմաններ, ձևավորել սպառողական նախապատվություններ ազգային արտադրանքի նկատմամբ և զբաղեցնել ավելի շահեկան դիրքեր համաշխարհային շուկայում: Վերջին հաշվով, տնտեսության մրցունակությունը հնարավորություն է տալիս արագացնել հասարակության բարեկեցության բարձրացման տեմպերը և երկրի տնտեսական զարգացման հնարավորությունները:Պատահական չէ, որ մրցունակության տարբեր բաղադրիչներից իր կարևորությամբ հատկապես առանձնանում է ազգային տնտեսության մրցունակությունը, քանի որ շուկայական հարաբերությունների զարգացման և համաշխարհային շուկայում մրցակցության շարունակական խորացման պայմաններում այն երկրի տնտեսական զարգացման առավել կարևոր գործիքներից մեկն է հանդիսանում: Ազգային տնտեսության մրցունակությունը այնպիսի պայմանների և գործոնների համախումբ է, որն ապահովում է պետության տնտեսական համակարգի կայուն և հաշվեկշռված զարգացումը: Հետևաբար, տնտեսության մրցունակությունը

[25] Фатхудинов Р. Конкурентоспособность: экономика, стратегия, управление. М. 2000г. стр. 36

մակրոտնտեսական չափորոշիչների համալիր ցուցանիշ է, որը պայմանավորում է պետության դերը միջազգային շուկայում քաղաքական, տնտեսական և սոցիալական հարցերի լուծման և ազգային հետաքրքրությունների բավարարման գործում, ինչի արդյունքում ապահովվում է մրցակցային հնարավորությունների բարձր մակարդակ ազգային շուկայի բոլոր գործակալների համար:

Այսպիսով, մրցունակության տնտեսական բովանդակությունն իրենից ներկայացնում է.

- առաջին, շուկայական հարաբերությունների սուբյեկտների և նրանց կողմից թողարկվող ապրանքների տնտեսական, տեխնոլոգիական, տեխնիկական բնութագրիչների այնպիսի համադրում, որոնք սպառողներին մղում են այդ սուբյեկտներին և նրանց կողմից թողարկվող ապրանքներին նախապատվություն տալուն,
- երկրորդ, ապրանքի, ընկերության, ճյուղի և երկրի տնտեսական համակարգի առանձնահատուկ բնութագրիչ, որն ապահովում է դրանց առաջանցիկությունը տվյալ շուկայում առկա այլ համանման ապրանքների և սուբյեկտների համեմատությամբ:

Ամփոփելով` պետք է նշել, որ մրցունակության յուրաքանչյուր տիպի ապահովման միակ և պարտադիր պայման է հանդիսանում մրցակցությունը: Ընդ որում, ինչքան բարձր է մրցակցության զարգացման

մակարդակը, այնքան բարձր են մրցունակության ձևավորման տեմպերը: Միևնույն ժամանակ, մրցակցության ապահովումը հատկապես կարևորվում է տնտեսության մրցունակության ապահովման համապատասխան ուղղություններով, ինչին առավել հանգամանալից կանդրադառնանք աշխատանքի հաջորդ բաժնում:

### 1.3. Տնտեսության մրցունակության ապահովման հիմնական ուղղությունները

Տնտեսության մրցունակությունը խիստ կարևոր նշանակություն ունի երկրի քաղաքական և տնտեսական առաջընթացի ապահովման գործում և ստեղծում է նախադրյալներ ոչ միայն կարճաժամկետ, այլ նաև երկարաժամկետ զարգացման, ռազմավարական խնդիրների լուծման համար: Այս տեսանկյունից հատկապես կարևորվում են տնտեսական զարգացման համապատասխան ուղենիշների ընտրությունը, մրցունակության վրա ազդող գործոնների բացահայտումը և այն պայմանավորող գործիքների ու միջոցների որոշումը:

Ինչպես ցույց է տալիս տնտեսական մրցունակ համակարգերի ձևավորման միջազգային փորձը, ազգային տնտեսության մրցունակության ապահովման հիմնական ուղղություններ են հանդիսանում.

- տնտեսության շուկայական կարգավորման մեխանիզմների և ենթակառուցվածքների զարգացումը,

- գիտատեխնիկական ներուժի ձևավորումը և զարգացումը,
- կառավարման արդյունավետ համակարգի ստեղծումը,
- գիտատար ճյուղերի և սպասարկող ոլորտների զարգացման խթանումը,
- մարդկային կապիտալի զարգացումը և արդյունավետօգտագործումը:[26]

Մրցունակության ապահովումը, ինչպես արդեն նշվեց աշխատանքի նախորդ բաժնում, ուղղակիորեն կապված է մրցակցության հետ, որը հանդիսանում է շուկայական տնտեսության արդյունավետ գործունեության հիմնարար և կարևոր պայման: Այս առումով մրցունակության ապահովման հիմնական ուղղությունը պետք է հանդիսանա տնտեսության կարգավորման շուկայական մեխանիզմների և ենթակառուցվածքների զարգացումը: Վերջիններիս ստեղծումը և շարունակական կատարելագործումն առաջնահերթ պայման և նախադրյալ է հանդիսանում տնտեսության մրցունակության համար: Ըստ էության, այս ուղղությունը հիմնված է շուկայական հարաբերությունների պետական կարգավորման, տնտեսության ճյուղային կառուցվածքի արդյունավետության բարձրացման և ներքին շուկայում մրցակցային միջավայրի ձևավորման վրա: Ակնհայտ է, որ նշված խնդիրների լուծման, այսպես ասած, մենաշնորհային իրավունքը պատկանում է պետությանը և հենց նաէ

[26] Михайлов О. Основы мировой конкурентоспособности. М. 1999г. стр.359

հանդիսանում շուկայական մեխանիզմների և ենթակառուցվածքների ստեղծման միակ պատասխանատուն: Բացի այդ, տնտեսության պետական կարգավորման գործիքների կիրառման միջոցով պետությունը հնարավորություն ունի այս կամ այն կերպ ներգործելու տնտեսական գործընթացների վրա՝ դրանք ուղղորդելով ցանկալի ուղղություններով: Համապատասխան պահանջների և սպառողների վարքագծի վրա ներգործող կանոնների սահմանումը, վճարունակ պահանջարկի ձևավորման վրա ազդեցության գործիքների կիրառումը, պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով գնումների իրականացումը պետությանը տալիս են լայն հնարավորություններ պետական կարգավորման միջոցով տնտեսության զարգացման համար բարենպաստ միջավայր ստեղծելու գործում: Բացի այդ, վարվող տնտեսական քաղաքականությունը կարող է ցանկալի ուղղություններով ներգործել տնտեսավարող սուբյեկտների գործունեության վրա՝ նրանց կողմից թողարկվող ապրանքների մրցունակության բարձրացման տեսանկյունից: Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ պետական քաղաքականությունն ընդամենը ներգործում է մրցունակության բարձրացման գործընթացի վրա: Անգամ ամենաիդեալական տնտեսական քաղաքականությունն ի զորու չէ ապահովել հաջողություններ, եթե հանդիսանում է ազգային առավելությունների միակ աղբյուրը: Քաղաքականությունը հաջողությամբ գործում է այն ոլորտներում, որտեղ առկա են ազգային առավելությունները պայմանավորող հիմնական

դետերմինանտները, իսկ կառավարությունն ընդամենը ուժեղացնում է դրանց գործողությունը: Այս տեսանկյունից տնտեսության պետական կարգավորումը կարող է բարելավել մրցունակության բարձր մակարդակի ապահովման հնարավորությունները, սակայն այն բավարար չէ ստեղծելու մրցունակության ձևավորման համար անհրաժեշտ պայմաններ և առավելություններ:

Տնտեսության մրցունակության ապահովման երկրորդ ուղղությունը կապված է արտադրանքի տեխնոլոգիական արդիականացման և գիտատարության բարձրացման հետ, ինչի արդյունքում ձևավորվում է ապրանքի մրցունակությունը: Այս ուղղությունը զարգացման ներկա փուլում հանդիսանում է որոշիչ, քանի որ միայն գիտական, տեխնոլոգիական և տեխնիկական նորարարությունների պայմաններում է հնարավոր արտադրանքի որակի բարձրացումը և ծախսատարության կրճատումը: Համաշխարհային շուկայում առավել մրցունակ ապրանքների գների կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն հետևյալ օրինաչափությունները: Ավտոմոբիլային արդյունաբերության ոլորտում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական զարգացման գծով ծախսերը առաջատար ընկերություններում կազմում են 27-30 տոկոս, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում՝ 14-20 տոկոս, դեղագործական արդյունաբերության

ոլորտում՝ 34-40 տոկոս:[27] Ակնհայտ է, որ նման ծախսերի իրականացումը պետք է ուղղված լինի այնպիսի արտադրանքի թողարկմանը, որի մրցունակությունը կապահովի սպառողների հետաքրքրությունների վերակողմնորոշումը դրա նկատմամբ և հիմք կհանդիսանա մրցունակության ապահովման երկրորդ ուղղության՝ արտադրության գիտատեխնիկական ներուժի ձևավորման համար: Յակառակ պարագայում թողարկվող ապրանքները կունենան բարձր ծախսատարություն, ցածր որակական հատկանիշներ, չեն համապատասխանի սպառողների պահանջներին, ինչի արդյունքում արտադրողները կզիջեն սեփական դիրքերը մրցակցային պայքարում: Պետք է նշել, որ ապրանքի մրցունակության վրա ազդող գործոնների շարքին են դասվում մարդկային ռեսուրսները (աշխատուժի արժեք, որակավորում և քանակ), ֆիզիկական ռեսուրսները (հանքային հանածոների, հողային, ջրային, անտառային, էներգետիկ ռեսուրսների և այլ բնական հարստությունների քանակը, որակը և արժեքը), ֆինանսական ռեսուրսները, ենթակառուցվածքների որակը և այլն:[28]

Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական ոլորտներում ներդրումների արդյունավետությունն առաջին հերթին կախված է կառավարման համակարգի գործունեությունից: Յետևաբար, մրցունակության ձևավորման հաջորդ ուղղությունը կառավարման արդյունավետ համակարգի ստեղծումն է: Գիտատեխնիկական

[27] World Competitiveness Yearbook, 2000, p. 146-148
[28] Лифиц И. О критериях конкурентоспособности товаров и услуг. Маркетинг. 2006г. № 3. стр. 25-32.

առաջընթացի ժամանակակից տեմպերը մեծապես պայմանավորում են ցանկացած ռեսուրսի կենսական ցիկլի կրճատումը, ինչի պատճառով մրցակցությունում հաղթում է ոչ թե ավելի շատ ռեսուրսներ ունեցող, այլ դրանք ռացիոնալ օգտագործող սուբյեկտը: Ընկերությունների մրցունակության ապահովման գործոններ են հանդիսանում շուկայում մրցունակ վարքագծի մոդելը (մրցակցային ռազմավարություն), կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը, մրցակցության ինտենսիվությունը և մրցակցային պայքարի մեթոդները:[29] Այսինքն՝ վերոհիշյալ գործոնները պետք է այնպես համադրել ,որպեսզի դրանք նպաստեն արտադրության կազմակերպման և կառավարման ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման հիման վրա ընկերությունների մրցունակության ձևավորմանը՝ առկա մրցակցային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման միջոցով: Մրցակցային պայքարում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է այնպիսի ռազմավարության և գերակայությունների մշակում, որոնք առավելագույնս կբխեն շուկայական միջավայրի զարգացման միտումներից և կօգտագործեն տվյալ ընկերության ուժեղ կողմերը: Մրցակցության ռազմավարության ձևավորման գործընթացի առավել կարևոր փուլերից է բազային ռազմավարության ընտրությունը, որը

---

[29] Конкурентоспособность России и российских производителей в мировой экономике. Под ред. В. Горфинкеля, М. Максимцева, В. Швандара. М.: ВЗФЭИ. 2006г. стр. 93

հանդիսանում է ընկերության մրցակցային վարքագծի և ռազմավարական կողմնորոշման հիմքը: Գոյություն ունեն մրցակցության բազային ռազմավարության 5 հիմնական տեսակներ՝ յուրաքանչյուրն իրենց առավելություններով և թերություններով (աղյուսակ 1):

Աղյուսակ 1[30]

Մրցակցության բազային ռազմավարությունները և մրցակցային առավելությունները

| ***Մրցակցության ռազմավարությունը*** | ***Մրցակցային առավելությունները*** |
|---|---|
| Ինքնարժեքի նվազեցում | Ցածր ինքնարժեք և գին |
| Արտադրանքի տարատեսականացում | Արտադրանքի յուրահատկություն, հատուկ դիզայն և բարձր որակ |
| Շուկայի սեգմենտավորում | Շուկայի սեգմենտների համար իր սպասարկում |
| Նորարարությունների ներդրում | Շուկայական նոր միջավայրում գործունեություն,որտեղ դեռևս բացակայում է մրցակցությունը |
| Շուկայի պահանջմունքներին արագ արձագանքում | Մրցակիցներին գերազանցում առավել շարժունակ կառավարման համակարգի շնորհիվ |

[30] Юданов Ю. Конкуренция: теория и практика. Учебно-практическое пособие. М. 1998г. стр. 154

Պետք է նշել, որ ընկերությունների մրցունակության ապահովումն անգամ մրցակցային շուկային և դրանում մրցակցության ինտենսիվությանը համապատասխանող ճիշտ ընտրված ռազմավարության դեպքում հնարավոր չէ առանց կառավարման ռացիոնալ կազմակերպման կառուցվածքի: Այս տեսանկյունից կազմակերպակառավարչական կառուցվածքները ևս կարելի է դասել ընկերության մրցունակության գործոնների շարքին:

Մրցունակության ապահովման հաջորդ ուղղությունը գիտատար ճյուղերի և սպասարկող ոլորտների զարգացման խթանումն է, որը որոշակիորեն կապված է առաջին ուղղության հետ: Առանց նման ոլորտների առկայության ոչ մի տնտեսություն չի ունենա զարգացման նախադրյալներ և կլինի մյուսների ձեռքբերումները պատճենահանողի և հետապնդողի դերում: Մինչև որոշակի աստիճան նման ռազմավարությունը կարող է տանել հաջողության, սակայն երկարաժամկետ հեռանկարում այն չի կարող ապահովել մրցակցային հաջողություններ միջազգային շուկաներում: Դա ենթադրում է պետության կողմից լրացուցիչ խթանների ստեղծում, որոնք կնպաստեն գիտատար և սպասարկող ոլորտների զարգացմանը, կստեղծեն որակապես նոր, յուրահատուկ մրցունակ արտադրանք:

Եվ վերջապես, մրցունակության ձևավորման վերջին ուղղությունը մարդկային կապիտալի

զարգացումն ու արդյունավետ օգտագործումն է: Մարդկային ռեսուրսները, թերևս, յուրաքանչյուր երկրի զարգացումը պայմանավորող կարևորագույն միջոց են հանդիսանում: Բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստումն այն անհրաժեշտ պայմանն է, որն ի վիճակի է լուծել տնտեսական զարգացման շատ հիմնախնդիրներ և հանդիսանում է բոլոր մակարդակների մրցունակության ձևավորման հիմնական բազան: Մրցունակության զարգացման այս ուղղության նշանակությունը կայանում է նրանում, որ նախորդ 4 ուղղություններով համապատասխան խնդիրների լուծումը և մրցունակության բարձրացումը, ըստ էության, հիմնականում պայմանավորված են դրանք իրագործող և կյանքի կոչող մարդկային ռեսուրսների որակավորման մակարդակով:

Մրցունակության ձևավորման վերջին երկու ուղղությունները ենթադրում են միջազգային ստանդարտների մակարդակով մրցունակ ճյուղերի ստեղծում, քանի որ մրցունակության ցածր մակարդակը թույլ չի տա ապահովել հավասար գործընկերային հարաբերություններ միջազգային շուկայում` հատկապես ինտեգրացիոն գործընթացների խորացման պայմաններում: Ընդ որում, ճյուղի մրցունակությունը ենթադրում է ոչ միայն տնտեսավարող սուբյեկտների տնտեսական առավելությունների ձևավորում, այլ նաև շուկայի մասնակիցների սոցիալական բավարարվածության մակարդակի բարձրացում, քանի որ մրցունակ ճյուղերը, ապահովելով դրանցում ընդգրկված

սուբյեկտների տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացումը, մուլտիպլիկատորի էֆեկտով իրենց անդրադարձն են ունենում ամբողջ տնտեսական համակարգի վրա: Այդ իսկ պատճառով կարելի է պնդել, որ առանձին վերցրած՝ մեկ ճյուղի մրցունակության աստիճանը պամանավորում է նաև մյուս ճյուղերի, և վերջին հաշվով նաև ամբողջ տնտեսության մրցունակության բարձրացումը: Համաշխարհային շուկայում արդյունաբերության մեկ ճյուղի հաջողությունը կարող է իր հետ բերել նաև այլ ապրանքների և ծառայությունների արտադրության զարգացում: Մեկ երկրի տարբեր սուբյեկտների կողմից արտադրվող լրացնող ապրանքները և ծառայությունները կարող են ավելի արդյունավետ լինել գնային առումով: Այս տեսանկյունից ազգային տնտեսության մրցունակության բարձրացման գործում յուրահատուկ դերակատարում կարող է ունենալ լեռնահանքային արդյունաբերությունը, որը հանդիսանում է զարգացած և զարգացող շատ երկրների տնտեսական աճի ապահովման և սոցիալական զարգացման գլխավոր գործոններից մեկը:[31] Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ բնական պաշարների արդյունահանումը կարող է տնտեսական, բնապահպանական և սոցիալական բացասական հետևանքներ ունենալ և հանգեցնել մակրոտնտեսական իրավիճակի վատթարացման,

[31] Пилипенко И. Конкурентоспособность стран и регионов в мировом хозяйстве: теория, опыт малых стран Западной и Северной Европы. М. 2005г. стр. 310

ոլորտի ձեռնարկություններում ներդրումների իրականացման շահագրգռվածության անկման և ինստիտուցիոնալ բազայի ու կառավարման համակարգի թուլացման: Լեռնահանքային արդյունաբերության ոլորտում խոշորամասշտաբ նախագծերի ոչ արդյունավետ տնտեսական և բնապահպանական կառավարումը կարող է երկարաժամկետ հատվածում խիստ բացասական ազդեցություն ունենալ կենսաբազմազանության, ռեսուրսների վիճակի և տեղի բնակչության կենսագործունեության վրա:Հետևաբար,տնտեսական համակարգի գործունեության մեջ տվյալ ոլորտի ունեցած մեծ դերակատարությամբ հանդերձ պակաս կարևոր չէ նաև այդ ուղղությամբ հիմնավորված և արդարացված տնտեսական որոշումների կայացումը և իրագործումը: Առավել ևս, որ լեռնահանքային արդյունաբերությունը հզոր ներուժ ունի երկրի տնտեսական զարգացման, մրցունակության բարձրացման և տարածքային զարգացման տարբեր խնդիրների լուծման գործում:Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության մրցունակության բոլոր բաղադրիչները գտնվում են փոխադարձ կախվածության վիճակում,և մեկը պայմանավորում է մյուսին՝ կարելի է պնդել,որ լեռնահանքային արդյունաբերությունը, համապատասխան նախադրյալների ապահովման և անհրաժեշտ տնտեսական միջավայրի ստեղծման դեպքում կարող է հանդես գալ որպես տնտեսության մի ճյուղ, որի մրցունակության բարձրացումը շղթայական ազդեցություն կունենա ինչպես մյուս ճյուղերի,

այնպես էլ ազգային տնտեսության մրցունակության բարձրացման գործում:

Պետք է նշել, որ մրցունակության ձևավորումը հնարավոր է միայն վերը թվարկված բոլոր ուղղությունների արդյունավետ զուգակցման պայմաններում, քանի որ դրանք փոխկապակցված են և փոխլրացնում են միմյանց, ինչի արդյունքում էականորեն անդրադառնում են մրցակցային առավելությունների ստեղծման վրա: Գիտատեխնիկական ներուժի ձևավորումը հիմնվում է գիտատար և սպասարկող ճյուղերի ձեռքբերումների վրա (գիտատար և սպասարկող ոլորտների զարգացման խթանում), որոնց զարգացումը մեծապես պայմանավորված է երկրի ներքին շուկայում մրցակցության ինտենսիվությամբ (տնտեսության շուկայական կարգավորման մեխանիզմների և ենթակառուցվածքների զարգացում): Ինչքան զարգացած է մրցակցային շուկան, այնքան խիստ պահանջներ են ներկայացվում դրամասնակիցներին, ինչը ենթադրում է առկա ռեսուրսների օգտագործման և կառավարման առավել կատարյալ համակարգի ստեղծում (կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում): Բոլոր ուղղությունների օպտիմալ համադրման դեպքում, կախված մրցունակության տարբեր գործոնների զարգացման աստիճանից, կարելի է հասնել շոշափելի արդյունքների:

Այսպիսով՝ մրցունակության ձևավորման դիտարկված ուղղությունները տնտեսական

համակարգի տարբեր մակարդակներում կարող են մրցակցային հաջողություններ ապահովել երկրի ամբողջ տնտեսության համար, եթե դրանց հիմքում ընկած է մրցունակության ձևավորան գործոնների արդյունավետ օգտագործումը և տնտեսական գործունեության զարգացման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականությունը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով անցումային տնտեսություններում շուկայական հարաբերությունների զարգացման թույլ մակարդակը և առանձնահատկությունները՝ հարկ է նշել, որ մրցունակության ձևավորումը պահանջում է մրցունակության գործոնների օգտագործման առավել արդյունավետ մեթոդների կիրառում: Նման տնտեսություններում մրցակցային շուկաների զարգացման ցածր մակարդակը պայմանավորում է գնային մրցակցության գերակշռությունը, որի պայմաններում մրցունակության ձևավորման որոշիչ գործոն է դառնում ծախսերի մակարդակը: Հետևաբար, մրցունակության ձևավորան մեթոդներն այդ դեպքում պետք է ուղղված լինեն ծախսատարության կրճատմանը կամ շահութաբերության բարձրացմանը:

Միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման ներկա պայմաններում մրցակցային հարաբերությունների վերլուծությունն ակնհայտ է դարձնում մրցունակության վրա ազդող գործոնների տարբերակման անհրաժեշտությունը: Այս առումով դրանք կարելի բաժանել երկու խմբի՝ հիմնական և զարգացող: Հիմնական գործոններն են

բնական ռեսուրսները, բնակլիմայական պայմանները,աշխատուժի որակավորման մակարդակը և կապիտալը,կամ,այլ կերպ ասած,բնության կողմից տրված բարիքները: Զարգացող գործոնները ստեղծվում են մարդկային գործունեության արդյունքում և դրանց շարքին են պատկանում ժամանակակից ենթակառուցվածքները, որակյալ կրթություն ստացած կադրերը և հետազոտական կենտրոնները: Հիմնական գործոնները, հանդիսանալով բնական հարստություն,մինչև 20-րդ դարի գիտատեխնիկական առաջընթացի մեկնարկը որոշիչ էին մրցունակության ապահովման գործում: Տեխնոլոգիական զարգացմանը զուգընթաց կարևոր նշանակություն ձեռք բերեցին զարգացող գործոնները, ինչը տեղի ունի նաև այսօր: Ըստ էության կարելի է նշել, որ մրցունակության ձևավորման գործում ավելի կարևոր նշանակություն ունեն զարգացող գործոնները, քանի որ հենց դրանք են ապահովում մրցակցային առավելություններ: Հիմնական գործոնների առկայությունն առանց զարգացող գործոնների չի կարող հանգեցնել մրցակցային առավելությունների ձևավորմանը և նպաստել տնտեսության մրցունակության բարձրացմանը: Միևնույն ժամանակ,պետք է նաև նկատի ունենալ,որ զարգացող գործոնները կառուցվում են հիմնական գործոնների հիման վրա: Փաստորեն՝ հիմնական գործոնները ինքնուրույն չեն հանդիսանում որպես հուսալի աղբյուր մրցակցային առավելությունների ձևավորման համար, այլ

ընդամենը նպաստում են զարգացող գործոնների ձևավորմանը:[32]

Մրցունակության վրա ազդող գործոնների դասակարգման հաջորդ կարևոր սկզբունքը մասնագիտացման աստիճանն է: Այս տեսանկյունից ընդհանուր գործոնները կիրառելի են լայն, իսկ մասնագիտացված գործոնները՝ սահմանափակ ճյուղերի նկատմամբ: Առաջինի օրինակ են հաղորդակցության ուղիները, կապիտալը, բարձրագույն կրթություն ունեցող կադրերը և այլն, իսկ երկրորդի՝ նեղ մասնագիտացում ունեցող կադրերը, հատուկ ենթակառուցվածքները և այլն: Զարգացող գործոնները միտում ունեն լինելու մասնագիտացված, սակայն ոչ միշտ: Միաժամանակ, մասնագիտացված գործոնները ձևավորում են ավելի հուսալի բազա մրցակցային առավելությունների համար, քան ընդհանուր գործոնները: Գործոնների դասակարգման երրորդ սկզբունքը հետևյալն է. դրանք արտադրողին տրվել են ինքնաբերաբա՞ր, թե՞ ստեղծվել են արհեստականորեն: Որպես կանոն, երկրորդներն ավելի կարևոր են մրցակցային առավելությունների ձևավորման համար, և դրանք առաջանում են պետական և մասնավոր կառույցների, հետազոտական ինստիտուտների և կազմակերպությունների, շուկայական ենթակառուցվածքների նպատակային գործունեության արդյունքում:

[32] Гельвановский М. Конкурентоспособность национальной экономики: проблемы статистического сопровождения. Вопросы статистики. 2004г. № 7. стр. 3 - 15.

Մրցակցային շուկայի պայմաններում ազգային տնտեսության մրցունակության ձևավորման ուղղությունները և այն պայմանավորող գործոնների համակարգը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ (գծապատկեր 1):




Գծապատկեր 1. Մրցակցային շուկայի պայմաններում ազգային տնտեսության մրցունակության ձևավորման ուղղությունները և այն պայմանավորող գործոնների համակարգը[33]

Ամփոփելով՝ պետք է նշել՝ ազգային տնտեսության մրցունակության բարձրացման գործում չափազանց կարևոր նշանակություն ունեն մշակվող և իրագործվող տնտեսական

[33] Գծապատկեր 1-ը կազմվել է հեղինակի կողմից

քաղաքականության ընտրված ուղղությունները: Այս առումով, տնտեսության շուկայական կարգավորման մեխանիզմների և ենթակառուցվածքների զարգացումը, գիտատեխնիկական ներուժի ձևավորումը, կառավարման արդյունավետ համակարգի ստեղծումը, գիտատար ճյուղերի և սպասարկող ոլորտների զարգացման խթանումը, մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործումը հանդիսանում են ազգային տնտեսության մրցունակության բարձրացման իրական նախադրյալներ: Միևնույն ժամանակ, դրանք նաև տնտեսության մրցունակության գնահատման յուրատեսակ չափորոշիչներ են այդ ուղղությամբ առկա խոչընդոտների և հիմնախնդիրների բացահայտման համար:

## ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

### 2.1. Պետության դերը ազգային տնտեսության մրցունակության ապահովման գործում

Ազգային տնտեսության մրցունակության ապահովումը, հանդիսանալով ռազմավարական նշանակության խնդիր, ենթադրում է այդ ուղղությամբ պետության ակտիվ գործունեություն: Տեսականորեն շուկայի մրցակցային միջավայրը պետք է ապահովի տնտեսական համակարգի գործունեության բարձր արդյունավետություն: Սակայն հիմնականում ոչ տնտեսական բնույթի պատճառների ներգործության արդյունքում շուկան, որպես բնական կարգավորիչ, դառնում է նվազ արդյունավետ, ինչը պահանջում է պետության կողմից անհրաժեշտ ուղղորդումների իրականացում: Նման պատճառների շարքին կարելի է դասել տնտեսական համակարգի կենսագործունեության զարգացման ցածր աստիճանը և պայմանները, քաղաքական համակարգի անկայունությունը, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության վատ վիճակը, շուկայական հարաբերությունների ձևավորման ոչ բավարար մակարդակը, մրցակցության զարգացման և մենաշնորհային դրսևորումների զսպման ուղղությամբ պետության կողմից ձեռնարկվող ոչ արդյունավետ քայլերն ու միջոցառումները և այլն: Ընդ որում, գոյություն ունի կայուն միտում. ինչքան քիչ են զարգացած մրցակցային

հարաբերությունները և ցածր է արտադրության մակարդակը, այնքան ավելի բարձր է շուկայի դեֆորմացվածության աստիճանը, և համապատասխանաբար մեծ է տնտեսության կենսագործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ պետական միջամտության անհրաժեշտությունը: Այսինքն՝ տնտեսական հարաբերությունների կարգավորման պետական և մրցակցային մեխանիզմները որոշում են շուկայի ձևը: Ժամանակակից պայմաններում սոցիալական և իրավական կարգավորման, հասարակության սոցիալ-տնտեսական կայունության ապահովման, շուկայի մասնակիցների համար տնտեսական ազատությունների երաշխավորման անհրաժեշտությունը գնալով մեծանում է: Վերջինիս հիմնական պատճառներից են համաշխարհային տնտեսության գլոբալիզացիան, մենաշնորհային դրսևորումների զարգացումը, բնակչության բարեկեցության բարձրացման և սոցիալական արդարության ապահովման պահանջների ավելացումը և, վերջապես, գիտատեխնիկական առաջընթացը, ինչը ենթադրում է տարբեր մակարդակներում բարձր որակավորում ունեցող կադրերի առկայություն: Քաղաքակիրթ երկրներում պետությունը և շուկան, լրացնելով միմյանց, բաժանում են այլընտրանքային ընտրության գործառույթները: Եթե դասական մոդելի մրցակցային շուկայի դեպքում պետությունն ընդամենն ապահովում է շուկայի կենսագործունեության կանոնների պահպանումը,

ապա մենաշնորհային մրցակցության ժամանակակից մոդելը պահանջում է շուկայի վրա անմիջական ներգործություն: Անցումային տնտեսությամբ պետությունները, ներքին շուկաների անկատարություններով պայմանավորված, ստիպված են առավել կոշտ և ուղղակի միջամտություն իրականացնել բացասական երևույթների կանխարգելման նպատակով: Այս առումով թույլ զարգացած մրցակցային մեխանիզմ ունեցող երկրներում պետական միջամտությունը դառնում է շուկայի կենսագործունեության ապահովման նպատակով կիրառվող արտաքին ներգործության կարևորագույն միջոց: Յետևաբար կարելի է պնդել, որ մրցակցային շուկան իրենից ներկայացնում է տնտեսական հարաբերությունների համախումբ, որոնք ծագում են վաճառողների և գնորդների միջև ապրանքների ու ծառայությունների առևտրային փոխանակման գործընթացում և կարգավորվում են պետության կողմից՝ ուղղակի և անուղղակի միջամտության միջոցով: Այս առումով ժամանակակից շուկայի արդյունավետ կեսագործունեությունը պահանջում է պետական կարգավորում՝ համապատասխան լծակների կիրառմամբ: Անցումային տնտեսությամբ երկրներում պետական կարգավորումը կարելի է սահմանել որպես պետական քաղաքականության գործիքների համախումբ՝ ուղղված ձեռնարկատիրության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, շուկայական կարգավորիչների թերզարգացման հետևանքով

ծագող խնդիրների լուծմանը և տնտեսության մրցունակության բարձրացմանը:[34]

Ընդհանուր առմամբ, տնտեսության պետական կարգավորման վերաբերյալ գոյություն ունի տեսակետների և կարծիքների բազմազանություն՝ լիակատար պետական մենաշնորհից մինչև ծայրահեղ տնտեսական ազատականություն: Սակայն դրանով հանդերձ՝ պետության կողմից տնտեսական գործընթացների կարգավորման նպատակով որոշակի գործառույթների իրականացումը կասկածի տակ չի դրվում: Հասարակության տնտեսական հետաքրքրությունները և շահերը պահանջում են մրցակցության զարգացում և մենաշնորհային երևույթների սահմանափակում,ինչը հանդիսանում է երկրի տնտեսական զագացման կարևոր նախապայման:[35]

Պետք է նշել, որ մասնագետների շրջանում հիմնական տարաձայնությունները կապված են տնտեսական հարաբերությունների պետական կարգավորման ձևերի և աստիճանի հետ:[36] Որպես կարգավորման հիմնական գործիքներ հանդես են գալիս հարկաբյուջետային, դրամավարկային, ներդրումային, հակամենաշնորհային, արդյունաբերական և ագրարային քաղաքականությունները,ինչպես նաև մաքսային և սակագնային կարգավորումը: Խնդիրը բարդանում է

[34] Государственное регулирование рыночной экономики: федеральный, региональный и муниципальный уровни (вопросы теории и практики). Науч. ред.: Волгин Н.А., Кушлин В.И., Фоломьев А. РАГС. М. 1997г. стр. 83

[35] Азоев Г. Конкуренция: анализ, стратегия и практика. М.: Центр экономики и маркетинга. 1996г. стр. 33

[36] Гельвановский М., Жуковская В., Трофимова И. Конкурентоспособность в микро, мезо и макроуровневом измерениях. Российский экономический журнал. 1998г. №3 стр. 67-77.

այն հանգամանքով պայմանավորված, որ յուրաքանչյուր տնտեսական համակարգի համար պետական կարգավորման աստիճանը և մեթոդները խիստ անհատականացված են և գործում են լիովին տարբեր եղանակներով: Կարգավորման միևնույն գործիքները տարբեր շուկաներում կարող են ունենալ լրիվ հակադիր ազդեցություն՝ կախված մրցակցային մեխանիզմի զարգացման աստիճանից: Մասնավորապես, տեղական արտադրության խթանման նպատակով ներմուծման սահմանափակումը կարող է ունենալ տարբեր հետևանքներ: Զարգացած մրցակցային մեխանիզմ ունեցող շուկաներում այն, որպես կանոն, հանգեցնում է տեղական արտադրանքի սպառման ծավալի ավելացմանը, մինչդեռ թույլ մրցակցային մեխանիզմի պայմաններում հայրենական արտադրողները, ունենալով պետական հովանավորություն, սկսում են դրսևորել մենաշնորհային գործունեության հակումներ: Դա դրսևորվում է գների աստիճանական բարձրացման, շահութաբերության մակարդակի ավելացման և այլ ձևերով: Ավելին՝ էականորեն նվազում է նրանց շահագրգռվածությունը՝ ներդրումների իրականացման և նորամուծությունների ներդրման միջոցով բարձրացնելու սեփական արտադրության մրցունակությունը՝ ներմուծողների հետ մրցակցությանը դիմագրավելու համար: Դա, անշուշտ, պայմանավորված է մրցակցային հարաբերությունները կարգավորող մեխանիզմների և գործիքների հիմնավորված կիրառմամբ:

Ինչպես արդեն նշվեց, տնտեսության պետական կարգավորման կարևոր գործիքներից են հանդիսանում հարկաբյուջետային, դրամավարկային, մաքսային, արժութային, արտաքին տնտեսական և ներդրումային քաղաքականությունները, որոնք էականորեն ազդում են ծախսերի, գների և թողարկվող արտադրանքի ծավալի վրա: Կիրառվող գործիքների շարքում, մեր կարծիքով, հիմնականը հարկաբուջետային քաղաքականությունն է, որի ազդեցությունը խիստ էական է տնտեսության վրա: Ինչքան մեծ է հարկային բեռը, այնքան բարձր է եկամուտնեի վերաբաշխման մակարդակը և, հետևաբար, բարձր է նաև տնտեսության պետական կարգավորման աստիճանը և միաժամանակ ցածր` ռեսուրսների բաշխման մրցակցային մեխանիզմի արդյունավետությունը: Հարկման բարձր մակարդակն իր հետ կարող է առաջ բերել մի շարք այնպիսի բացասական դրսևորումներ, ինչպիսիք են աշխատանքի արտադրողականության անկումը, տնտեսական շրջանառության ավելացման շահագրգռվածության բացակայությունը և այլն: Այսինքն` այս դեպքում վերանում են տնտեսական գործունեության նյութական խթանները, ինչի հետևանքով նվազում են տնտեսական և սոցիալական առաջընթացի տեմպերը: Հարկային համակարգը հանդիսանում է ինչպես մրցակցության պաշտպանության, այնպես էլ պետության կողմից սոցիալական ծրագրերի իրականացման միջոց: Միևնույն ժամանակ չափազանց մեծ է հարկային համակարգի ազդեցությունը գնագոյացման վրա,որն

ուղղակիորեն ազդում է մրցունակության մակարդակի վրա:Ըստ էության, այն կարող է ունենալ հետևյալ դրսևորումները:

1. Սպառման հարկերի նվազեցումը հնարավորություն է տալիս բարձրացնել ապրանքների սպառման ծավալը կամ ավելացնել կուտակումները: Առաջինը տեղի է ունենում անձնական սպառման կայուն և բարձր, իսկ երկրորդը՝ սպառման ցածր մակարդակի դեպքում: Դա հանդես է գալիս որպես մրցակցությանը նպաստող գործոն, քանի որ խթանում է պայքարը □ավելացած□վճարունակ պահանջարկի համար:
2. Հարկերի ազդեցությունը տնտեսավարող սուբյեկտների գործունեության վրա դրսևորվում է ապրանքների գների, արտադրության ծավալի, աշխատավարձի փոփոխության միջոցով: Ձեռնարկության ֆինանսատնտեսական վիճակը կանխորոշում է միջոցների օգտագործման այն ուղղությունները, որոնք հնարավորություն կտան նվազեցնել հարկային ճնշումը:Եթե առկա է արտադրության անկում, ապա հարկերի նվազեցումը հնարավորություն է տալիս բարձրացնել աշխատավարձը կամ նվազեցնել ապրանքի գինը: Վերջինը կխթանի շուկայում պահանջարկը, հետևաբար նաև՝ սպառողների միջև մրցակցության աճը: Ձեռնարկության բարենպաստ վիճակը հնարավորություն է տալիս հարկային ճնշման թուլացումից խնայել որոշակի միջոցներ և դրանք ուղղել

արտադրության արդիականացմանը և զարգացմանը, ինչն էլ կնպաստի մրցակցության զարգացմանը և մրցունակության բարձրացմանը:

3. Հարկային ճնշման թուլացումն անխուսափելիորեն հանգեցնում է բյուջետային մուտքերի կրճատմանը և, որպես հետևանք, պետական ֆինանսավորման ծավալների ու սոցիալական աջակցության ծրագրերի կրճատմանը և, ընդհանրապես, տնտեսության պետական կարգավորման աստիճանի նվազեցմանը:

Այսպիսով՝ չնայած պետության տիրապետության ներքո գտնվող և մրցունակության վրա ուղղակի անդրադարձ ունեցող գործիքներից հարկային համակարգը հանդիսանում է կարևորներից՝ այդուհանդերձ դրա ազդեցությունը երկակի է երկրի տնտեսության վրա: Հետևաբար դրա կիրառման պարագայում պետք է ընտրվեն այնպիսի լուծումներ, որոնք կապահովեն ցանկալի արդյունքներ ինչպես մրցունակության բարձրացման, այնպես էլ պետական գործառույթների պատշաճ իրականացման նպատակով անհրաժեշտ ֆինանսական բազայի ձևավորման համար:

Տնտեսության պետական կարգավորման միջոցների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում արտաքին տնտեսական գործունեությունը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ գլոբալ ինտեգրացման պայմաններում ցանկացած երկրի տնտեսության մրցունակություն որոշվում է միջազգային շուկայում ազգային արտադրանքի ճանաչման

աստիճանով: Միևնույն ժամանակ, հենց համաշխարհային շուկա մուտքն է պայմանավորում մրցակցային հարաբերությունների պետական կարգավորման նպատակների իրարամերժությունը: Զարգացած մրցակցային շուկայի ձևավորման տեսանկյունից տնտեսության պետական միջամտությունը պետք է սահմանափակվի մրցակցային ինքնակարգավորման մեխանիզմի աջակցությամբ՝ խթանելով առողջ մրցակցությունը և կանխելով շուկայական դիրքի չարաշահումները: Սակայն երկրի տնտեսության մրցունակության ձևավորման համար պետությունը պետք է աջակցի սեփական, այդ թվում նաև մենաշնորհային հակումներ ունեցող սուբյեկտներին, քանի որ հիմնականում խոշոր արտադրողներն են տիրապետում համապատասխան ներուժի՝ միջազգային մրցակցությանը դիմագրավելու համար: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ զարգացման ներկա փուլում միջազգային մրցակցությունը հիմնվում է խոշոր գիգանտների՝ տրանսազգային կորպորացիաների վրա, որոնք վաղուց հատել են ազգային տնտեսության սահմանները: Նման խոշոր ընկերությունները որոշակիորեն պայմանավորում են երկրի տնտեսական հզորությունը, զբաղվածության մակարդակի ապահովումը և ՀՆԱ-ի ձևավորման գործում առարկայական մասնակցությունը, ինչը պետության կողմից նրանց համակողմանի աջակցության անհրաժեշտություն է ստեղծում: Այսինքն՝ գոյություն ունի որոշակիորեն հակասական իրավիճակ. սեփական արտադրողների

պաշտպանության ուղղված պետական կարգավորումը հնարավորություն է տալիս բարձրացնել նրանց և միաժամանակ նաև ազգային տնտեսության մրցունակությունը: Միևնույն ժամանակ հայտնի է, որ մրցունակությունն ուղղակիորեն կապված է մրցակցային մեխանիզմի գործունեության հետ,որն իր հերթին ենթադրում է տնտեսական գործունեության հավասարության ապահովում և խտրականության բացառում: Ըստ էության, այս խնդիրը հանդիսանում է պետական կարգավորման առանցքային հարցերից, որի լուծմամբ պետք է համապատասխան ներդաշնակություն ապահովվի հովանավորչության և մրցակցության խթանման միջև:Ակնհայտ է, որ դուրս գալով համաշխարհային շուկա՝ ազգային արտադրողները բախվում են պետական հզոր աջակցություն ստացող համաշխարհային առաջատար ընկերությունների մրցակցությանը: Հետևաբար միջազգային շուկայում հայրենական արտադրողների մրցակցության ապահովումը ենթադրում է պետության կողմից աջակցության ցուցաբերում և մրցակցային առավելությունների ձևավորման գործընթացին մասնակցություն: Նման քաղաքականության իրականացման հիմնական գործիքներ են հանդիսանում մաքսային և արժութային քաղաքականությունը, որոնք էական ազդեցություն ունեն արտահանման և ներմուծման գնագոյացման մեխանիզմի վրա:Վերջինիս վրա մեծ է նաև անուղղակի (ներմուծման ու արտահանման) հարկերի ազդեցությունը, քանի որ դրանք

անմիջականորեն ազդում են գնագոյաման և, հետևաբար,նաև ապրանքների մրցունակության վրա: Հետևաբար դրանց սահմանման ժամանակ ոչ թե պետք է հիմնական գերակայությունը տրվի ֆիսկալ բնույթի խնդիրների լուծմանը, այլ հաշվի առնվի դրանց հնարավոր ազդեցությունը թողարկվող ապրանքների գների փոփոխության վրա,քանի որ այն մրցունակությունը պայմանավորող հիմնական գործոններից է հանդիսանում:

Մրցունակության բարձրացմանն ուղղված պետական կարգավորման հաջորդ կարևոր գործիքն արժութային քաղաքականությունն է, որի հիմքը կազմում է փոխարժեքի կուրսի կարգավորումը: Պետք է նշել, որ հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում այն ունի երկակի նշանակություն: Մի կողմից, փոխարժեքի կուրսը հանդիսանում է գների մակարդակի վրա ազդող էական գործոն, իսկ մյուս կողմից այն զգալիորեն նպաստում է ներքին արտադրության մրցունակության բարձրացմանը: Ազգային տնտեսության մրցունակության ապահովման տեսանկյունից, անշուշտ, ազգային ուժեղ արժույթի առկայությունը խիստ կարևոր է: Մյուս կողմից, թույլ արժույթի կողմնակիցների հիմնական փաստարկը միջազգային շուկայում հայրենական ապրանքների մրցունակության ապահովումն է: Այսինքն՝ քանի որ արտահանվող ապրանքները հիմնականում որակական հատկանիշներով զիջում են մրցակիցներին, ապա դրանք պետք է լինեն համեմատաբար էժան,ինչն էլ

հնարավոր է ապահովել թույլ արժույթի շնորհիվ: Սակայն պետք է նկատի ունենալ, որ մրցունակությունը չի որոշվում միայն գնով և որակով. շարունակաբար մեծանում է ինովացիոն և ինտելեկտուալ գործոնների դերը:

Փոխարժեքի կուրսը հանդիսանում է տնտեսության մրցունակության վրա էականորեն ազդող միջոց, սակայն որպես ֆինանսական քաղաքականության գործիք՝ այն խիստ կոշտ է: Ազգային արժույթի արհեստականորեն ձևավորված ցածր կուրսը հանդիսանում է արտահանման սահմանափակման միջոց: Սակայն պետք է նկատի ունենալ, որ տնտեսության մի շարք ոլորտներ, մասնավորապես, ծառայությունների ոլորտը և ներքին շուկայում սպառվող մի շարք ապրանքների արտադրությունն ավելի շատ կարիք ունեն ազգային ուժեղ արժույթի և անհրաժեշտ վճարունակ պահանջարկի: Ըստ էության, ազգային արժույթի արհեստականորեն ցածր կուրսը հանդիսանում է արտահանման պետական սուբսիդավորման թաքնված ձև: Սակայն նաև ակնհայտ է, որ դրա չհիմնավորված բարձր կուրսը կարող է նպաստել ներմուծվող ապրանքների գների բարձրացմանը և բնակչության վճարունակ պահանջարկի կրճատմանը, ինչպես նաև որոշակի վնաս հասցնել ներքին արտադրողներին, հատկապես, եթե արտադրության գործընթացում օգտագործվող հումքը և նյութերը ներմուծվում են արտաքին շուկաներից:

Անցումային տնտեսությամբ և զարգացող երկրներում տնտեսության մրցունակության

ապահովումն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք պետք է հաշվի առնվեն այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերի մշակման ժամանակ: Դա, նախ և առաջ, կապված է այդ երկրներում մրցակցության յուրահատկությունների հետ,որին բնութագրական են հետևյալ հատկանիշները:[37]

1. Անցումային տնտեսություններում մրցակցության հիմնական տարբերակվող առանձնահատկությունը հանդիսանում է այն,որ մրցակցային հարաբերությունների շարժիչ ուժ է հանդես գալիս շահույթի առավելագույն մակարդակի ձգտումը: Ինչպես արդեն նշվեց աշխատանքի նախորդ բաժիններում, զարգացած շուկայի պայմաններում մրցակցությունը պայքար է արտադրության և իրացման լավագույն պայմանների համար, ինչը հնարավորություն կտա ապահովել բիզնեսի շահութաբերության նորմալ մակարդակ: Զարգացած շուկայի պայմաններում շահույթի ավելացումը կարող է տեղի ունենալ միայն արտադրության ծավալների ավելացման հաշվին,որը ենթադրում է այդ ուղությամբ լրացուցիչ ծախսերի իրականացում: Հետևաբար, յուրաքանչյուր տնտեսությունում շուկայական հարաբերությունների զարգացման մակարդակը պետք է որոշվի տնտեսական գործունեության իրականացումից՝ լրացուցիչ շահույթ

[37] Гельвановский М. Национальная конкурентоспособность: понятие, факторы, показатели. Вопросы статистики. 1999г. № 12. стр. 12-20.

ստանալու ընդունակությամբ: Զարգացած շուկայում մրցակցային հարաբերությունների մեխանիզմը շուկայի ոչ մի սուբյեկտի հնարավորություն չի տալիս գների արհեստական բարձրացման հաշվին շատ շահույթ ստանալ, քանի որ այն կհանգեցնի շուկայում իրացման ծավալների կրճատման:Այս առումով զարգացած շուկան ենթադրում է մրցակցային այնպիսի մեխանիզմի առկայություն, որը կբացառի սուբյեկտիվ գործոններով պայմանավորված գների բարձրացումը և կապահովի ողջամիտ շահույթի ստացում: Այսպիսով՝ անցումային տնտեսություններում մրցակցային հարաբերությունները գրեթե ամբողջությամբ միտված են գնային մրցակցությանը, որը բացասաբար է անդրադառնում թողարկվող արտադրանքի որակի և տեխնոլոգիաների մրցունակության վրա:

2. Անցումային տնտեսություններում մրցակցության զարգացման աստիճանը մեծապես պայմանավորված է մրցակցային միջավայրի վրա ազդող գործոնների պետական կարգավորման հաջողությամբ: Խնդիրը կայանում է նրանում, որ անցման փուլում պետությունը կանգնած է բարդ խնդրի լուծման առջև՝ իրականացնել այնպիսի հարկաբյուջետային,դրամավարկային և մաքսային քաղաքականություն, որը մի կողմից կխթանի բյուջետային սահմանափակումների նվազեցումը և մյուս կողմից առողջ մրցակցություն կապահովի

երկրի տնտեսությունում:

3. Անցումային տնտեսություններում, որպես կանոն, տնտեսական հարաբերությունների կարգավորման, այդ թվում նաև մրցակցության զարգացման նպատակով օրենսդրական դաշտի ձևավորման ժամանակ հիմնականում օգտագործվում են զարգացած երկրներում իրենց կենսունակությունը ապացուցած և հաջողությամբ գործած իրավական մեխանիզմները, որոնք շատ հաճախ հաշվի չեն առնում անցումային տնտեսության առանձնահատկությունները և չեն նպաստում առկա խնդիրների լուծմանը:

Այսպիսով՝ անցումային տնտեսություններում շուկայական մրցակցության զարգացման աստիճանը մեծապես կախված է ապրանքային շուկաների զարգացմանն ուղղված պետական քաղաքականությունից և գոյություն ունեցող խոչընդոտների վերացումից: Մասնավորապես, վերջիններիս շարքին կարելի է դասել հետևյալները.

- տնտեսական արգելքների (հարկային, վարկային, ներդրումային և այլն) վերացումը,
- վարչական արգելքների վերացումը (ձեռնարկությունների գրանցման ընթացակարգերի պարզեցում, գործունեության իրականացման թույլտվությունների և լիցենզիաների տրամադրման պայմանների բարելավում, գույքային և տարածքային ռեսուրսների տրամադրում և այլն),

- շուկայի սահմանափակ տարողունակության հետ կապված արգելքների (վճարունակ պահանջարկի սահմանափակումներ)վերացումը,
- շուկայական ենթակառուցվածքների թերզարգացվածության հետ կապված արգելքների կրճատումը,
- սահմանափակ բնական ռեսուրսների հետ կապված արգելքների կրճատումը և այլն:

Ընդհանրացնելով անցումային տնտեսություններում մրցակցության և մրցունակության առանձնահատկությունները և դրանց վրա ազդող գործոնները՝ ազգային տնտեսության մրցունակության բարձրացմանն ուղղված քայլերը սխեմատիկորեն կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով (տե՛ս գծապատկեր 2):




Գծապատկեր 2. Ազգային տնտեսության

մրցունակության բարձրացման միջոցները[38]

Այն իր մեջ ընդգրկում է գործոնների ամբողջ համախումբը, որոնք ուղղակի ներգործություն ունեն մրցակցության զարգացման աստիճանի և ազգային տնտեսության մրցունակության վրա: Դրա կիրառման ժամանակ միայն պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ արտահանման ծավալների ավելացումը կարող է նպաստել տնտեսական աճին միայն այն դեպքում, եթե գոյացած միջոցները ներդրումների տեսքով օգտագործվում են արտադրության զարգացման և վերազինման համար: Հակառակ պարագայում արտահանման աճն ուղղակիորեն կնշանակի միջոցների արտահոսք, ինչը շատ դեպքերում նկատվում է անցումային տնտեսություններում: Այսպիսով՝ պետք է նշել, որ անցումային տնտեսությամբ և զարգացող երկրներում մրցունակության ձևավորման նշված մոդելը հնարավորություն է տալիս համակարգային մոտեցում ցուցաբերել տնտեսության պետական կարգավորման նկատմամբ, որը նպաստում է տվյալ փուլին հատուկ մի շարք հիմնախնդիրների լուծմանը:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ տնտեսության մրցունակության ապահովման գործում չափազանց կարևոր նշանակություն ունի պետության կողմից մշակվող և իրականացվող տնտեսական քաղաքականությունը: Ըստ էության, տնտեսության պետական կարգավորման գործիքների ընտրությունը և դրանց կիրառման սահմաններն ու

[38] Գծապատկեր 2-ը կազմվել է հեղինակի կողմից

մասշտաբները որոշակիորեն ազդում են տնտեսական գործունեության սուբյեկտների ֆինանսատնտեսական ցուցանիշների վրա՝ համապատասխան անդրադարձ ունենալով նրանց կողմից թողարկվող ապրանքների և ծառայությունների մրցունակության վրա: Այս տեսանկյունից պետք է նշել, որ մրցունակության գնահատման չափորոշիչները և համապատասխան ցուցանիշները որոշակի պատկերացում կարող են տալ ազգային տնտեսության մրցունակության մասին, ինչին էլ նվիրված է աշխատանքի հաջորդ բաժինը:

## 2.2. Տնտեսության մրցունակության վրա ազդող գործոնները և գնահատման հիմնական ցուցանիշները

Ընդհանուր առմամբ, երկրի տնտեսության մրցունակությունը կարելի է սահմանել որպես ազատ մրցակցության պայմաններում ապրանքներ և ծառայություններ արտադրելու ընդունակություն, ինչի արդյունքում բարձրանում է երկրի և նրա քաղաքացիների բարեկեցությունը: Ազգային տնտեսության մրցունակության ապահովումը ռազմավարական նշանակություն ունի երկրի քաղաքական և տնտեսական հզորության բարձրացման գործում, և այս տեսանկյունից չափազանց կարևոր է դրա գնահատման համակարգի մշակումը: Մակրոմակարդակում տնտեսության մրցունակության գնահատման բարդությունը

պայմանավորված է տնտեսական գործունեության արդյունքները բնութագրող ցուցանիշների բազմազանությամբ:

Երկրի տնտեսության մրցունակության մակրոտնտեսական գնահատումն սկսել է իրականացվել 1995-1996 թվականներից Համաշխարհային բանկի կողմից: Մրցունակության վարկանիշի որոշման համար օգտագործվում են բազմագործոն վեկտորային մոդելներ, որոնցում ընդգրկված են 381 ցուցանիշներ: Նման գործոնների շարքին են դասվում տնտեսության ներուժը, տնտեսական աճի տեմպերը, գիտության և տեխնիկայի զարգացման մակարդակը, գիտատեխնիկական ձեռքբերումների յուրացման աստիճանը, աշխատանքի միջազգային բաժանման մեջ մասնակցությունը, ներքին շուկայի տարողունակությունը և դինամիկությունը, ֆինանսական համակարգի ճկունությունը, տնտեսության պետական կարգավորման մասշտաբները, աշխատանքային ռեսուրսների որակավորման մակարդակը և դրանցով ապահովվածությունը, սոցիալ-տնտեսական և ներքաղաքական իրավիճակը:[39]

Մշակված մեթոդաբանությամբ յուրաքանչյուր երկրի կտրվածքով օբյեկտիվ վիճակագրական ցուցանիշները (ընդհանուր ցուցանիշների մոտ 70 տոկոսը) լրացվում են սուբյեկտիվ գործոններով՝ փորձագիտական գնահատականներով և համապատասխան երկրներում անցկացված

[39] Кондратьев В. Макроэкономические проблемы конкурентоспособности России. Мировая экономика и международные отношения. 2001г. N3. стр. 54-60.

սոցիոլոգիական հարցումների արդյունքներով: Հատուկ մշակված մեթոդաբանության օգնությամբ յուրաքանչյուր երկիր ռանգավորվում է ըստ հավաքած բալերի, որոնք էլ որոշում են նրա տեղը մրցունակության հիերարխիկ համակարգում: Առավել բարձր տեղը վկայում է ոչ միայն տվյալ երկրի արտադրողական ուժերի զարգացման մակարդակի, այլ նաև տնտեսական համակարգի ճկունության մասին, որն ընդունակ է հարմարվելու համաշխարհային շուկայի փոփոխություններին:

Սակայն պետք է նշել, որ երկրի տնտեսության մրցունակության գնահատման նպատակով 381 ցուցանիշի հաշվարկը բավականաչափ բարդ է և զարգացող ու անցումային տնտեսությամբ շատ պետությունների համար անիրագործելի է, ինչի հետևանքով շատ դեպքերում գնահատման համակարգի արդյունավետությունը նվազում է: Իրավիճակը բարդանում է նաև այն հանգամանքով պայմանավորված, որ նշված ցուցանիշներից շատերը հանդիսանում են փորձագիտական գնահատականներ: Բացի այդ, շատ ցուցանիշներ չեն համապատասխանում համալիրության պահանջներին, ինչը նվազեցնում է կայացվող գնահատականների օբյեկտիվությունը: Դրանով պայմանավորված՝ 1997-1998 թվականներին տնտեսության մրցունակության գնահատման համակարգը ենթարկվեց որոշակի փոփոխությունների, որի նախաձեռնողը Համաշխարհային բանկը և Հարվարդի համալսարանն էին: Նոր մեթոդաբանության հիմքում դրվեցին

հետևյալ բնութագրիչները՝ քաղաքական ռիսկ, տնտեսական հեռանկարներ, արտաքին պարտավորությունների մակարդակ, արտաքին պարտքի գծով վճարունակության վարկանիշ, ֆինանսական և բանկային ռեսուրսների հասանելիություն: Չնայած նոր մեթոդաբանության առավել պարզությանը՝ այդուհանդերձ այն հաշվի չէր առնում սոցիալ-տնտեսական բնութագրիչները և առավելապես հիմնված էր ֆինանսական ցուցանիշների վրա: Այսինքն՝ այս դեպքում մրցունակության ապահովման խնդիրը հանգում էր ֆինանսական խնդիրների լուծմանը, այլ ոչ թե տնտեսական և սոցիալական զարգացման ապահովմանը: Ավելին՝ գրեթե հաշվի չէին առնվում ապրանքների և տեխնոլոգիաների մրցակցային առավելությունները բնութագրող ցուցանիշներն այն դեպքում, երբ դրանք մրցունակությունը պայմանավորող կարևոր գործոններ են հանդիսանում: Արդյունքում՝ նոր մեթոդաբանությունը, չնայած իր զգալի պարզությանը, հնարավորություն չէր տալիս ստանալ տնտեսության մրցունակության օբյեկտիվ գնահատականը:

Ընդհանուր առմամբ, հատկապես գիտատեխնիկական առաջընթացի ներկա փուլում կարևոր նշանակություն են ստանում մրցունակությունը պայմանավորող հետևյալ ցուցանիշները՝ պետական բյուջեից գիտատեխնիկական և փորձակոնստրուկտորական աշխատանքների համար կատարված ծախսերի

հարաբերակցությունը ՀՆԱ-ին, մարդկային կապիտալի վրա կատարվող ծախսերի հարաբերությունը ՀՆԱ-ին և քաղաքական համակարգի կայունությունը:[40] Նշված ցուցանիշները հանդիսանում են ռազմավարական և իրենցից ներկայացնում են հասարակության մրցակցային առավելությունների ձևավորման շարժիչ ուժ: Գիտական և տեխնոլոգիական հետազոտությունները նպաստում են ռեսուրսների տնտեսմանը, որակի բարձրացմանը, արտադրության ավտոմատացմանը և ինովացիոն տեխնոլոգիաների ներդմանը, ինչը հանդիսանում է ապրանքի և ընկերության մրցունակության ապահովման հիմք: Միաժամանակ, կայուն քաղաքական համակարգ և զարգացած շուկայական ենթակառուցվածքներ ունեցող երկիրն ընդունակ է ստեղծելու բարձր տեխնոլոգիական և մրցունակ արդյունաբերություն, ինչը հնարավորություն կտա երկարաժամկետ հեռանկարում ձևավորել մրցունակ ճյուղեր և տնտեսություն: Զարգացած արդյունաբերությունը և սոցիալական ծախսերի բարձր մակարդակը նպաստում են մարդկային կապիտալի որակական մակարդակի բարձրացմանը, ինչը գլոբալիզացիայի և մրցակցության ժամանակակից փուլում ապահովում է անվիճելի առավելություններ՝ի դեմս մրցունակ մարդկային կապիտալի:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ երկրի մրցունակությունը պետք է դիտարկել դրա

---
[40] Андрианов В. Конкурентоспосбность Россиии в мировой экономике. Экономист. 1997г. N 10. Стр. 67-71

զարգացումը (տնտեսական, քաղաքական, սոցիալական, տեխնիկական) բնութագրող փաստացի ցուցանիշների հարաբերության տեսանկյունից աշխարհի այլ առաջատար երկրների համանման ցուցանիշների նկատմամբ: Ընդ որում, այս դեպքում էականը ոչ թե զարգացած երկրների ցուցանիշներին հավասարվելն է, այլ առկա ռեսուրսների առավելագույն ռացիոնալ օգտագործման միջոցով բարձր արդյունքներ ապահովելը: Գաղտնիք չէ, որ ոչ մի երկիր չի կարող ապահովել բոլոր ցուցանիշների գծով առավելագույն արդյունք: Այդ իսկ պատճառով դրանցից որոշները կարող են մրցունակության ընդհանուր մակարդակից ցածր լինել: Հետևաբար տնտեսության մրցունակության գնահատման համար առավել տրամաբանական է դիտարկել մրցունակության հիմնական գործոնները բնութագրող ցուցանիշները: Այս տեսանկյունից որպես այդպիսիք պետք է ընտրվեն այն ցուցանիշները, որոնք լավագույնս բնութագրում են մրցակցային առավելությունները և ապահովում են մրցունակությունը: Ընդ որում, առավելությունների գնահատումը նպատակահարմար է իրականացնել արժեքային արտահայտությամբ: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր ընկերության համար մրցակցային առավելությունների ձևավորման և, ընդհանրապես, տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման հիմնական պայման է հանդիսանում շահույթը: Հետևաբար, մրցունակությունը, դիտարկելով որպես մրցակցային առավելությունների համախումբ,

պետք է նկատի ունենալ շահույթի և շահութաբերության մակարդակի բարձրացման հիմնական աղբյուրները: Դասական տեսությունը դիտարկում է շահույթի ավելացման երկու հիմնական ուղի.գների բարձրացում և արտադրանքի ինքնարժեքի նվազեցում:[41] Առաջինն ընդունելի չէ զարգացած շուկաների համար, քանի որ դրանցում չափազանց մեծ է մրցակցությունը, և գների բարձրացում կարող է տեղի ունենալ միայն բարձր տեխնոլոգիական և ինովացիոն արտադրանքի թողարկման դեպքում,ինչը բավականաչափ ծախսատար է: Այդ իսկ պատճառով շահութաբերության մակարդակի բարձրացման միակ իրատեսական ուղին մնում է արտադրանքի ինքնարժեքի նվազեցումը:Իր հերթին դա հնարավոր է արտադրության մեջ օգտագործվող հումքի և նյութերի գծով ծախսերի նվազեցման դեպքում, ինչը շատ հաճախ կարող է անդրադառնալ որակի և, հետևաբար, նաև մրցունակության վրա: Փաստորեն, ինքնարժեքի նվազեցման միակ իրատեսական ուղին հանդիսանում է աշխատանքի արտադրողականության բարձրացումը: Ըստ էության,այն հանդիսանում է մի ցուցանիշ,որը բնութագրում է արտադրության մրցունակության ընդհանուր մակարդակը ծախսերի կրճատման տեսանկյունից: Կարելի է ասել, որ արտադրանքի գիտատարության և կապիտալատարության հետ միասին աշխատանքի արտադրողականությունը հանդիսանում է արտադրության մրցունակության

[41] Яшин Н. Конкурентоспособность промышленных предприятий: методология, оценка, регулирование. Саратов, 1997г. стр. 109

հիմքը: Միևնույն ժամանակ, աշխատանքի արտադրողականության աճի դինամիկան հնարավորություն է տալիս գնահատել մարդկային կապիտալի զարգացման մակարդակը և դրա մրցունակությունը: Ըստ էության, այդ ցուցանիշը կարելի է դիտարկել որպես աշխատանքային ռեսուրսների մրցունակության ցուցիչ: Վերջինս, հանդիսանալով գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում երկրի մրցունակությունը պայմանավորող կարևոր գործոն, սպառման ծավալների ավելացման, ապրանքների որակի նկատմամբ պահանջների խստացման և շուկայական մրցակցության ապահովման միջոցով որոշակիորեն կանխորոշում է տնտեսական աճի տեմպերը: Այս տեսանկյունից ազգային տնտեսության մրցունակությունը կարող է նաև բնութագրվել միջին աշխատավարձի, գործազրկության մակարդակի և կյանքի միջին տևողության ցուցանիշներով: Վերջիններս իրավացիորեն դասվում են տնտեսական զարգացման արդյունքների, հասարակության եկամտային բևեռացվածության աստիճանի և մարդկային ներուժի զարգացման բնութագրիչների շարքին: Ըստ էության, վերընշվածները ձևավորում են յուրաքանչյուր երկրի մրցակցային ռեսուրսներից ամենակարևոր արժեքային գործոնի՝ մարդկային ռեսուրսների մրցունակության մակարդակը:[42]

Հաշվի առնելով այն փաստը, որ շուկայական տնտեսության պայմաններում պետությունը

[42] Абрамов В. Управление конкурентоспособностью экономических систем. Маркетинг. 2004г. N 5. стр. 19-24.

միաժամանակ հանդես է գալիս որպես տնտեսական հարաբերությունների սուբյեկտ և կարգավորիչ, ապա մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի ցուցանիշը կարելի է դասել ազգային տնտեսության մրցունակության ցուցանիշների շարքին: Ըստ էության, այն արտացոլում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ արդյունքները և տնտեսական ակտիվության մակարդակը: Իհարկե, չափազանց կարևոր է նաև ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքը և որակը, աճի տեմպերը, որոնք նույնպես նպաստում են երկրի տնտեսության զարգացմանը:

Արտադրության մեջ առաջադեմ տեխնոլոգիաների ներդրումը և որակյալ արտադրանքի թողարկումը պահանջում են զգալի ֆինանսական միջոցներ, ինչից ենթադրվում է, որ ապրանքների և ընկերությունների մրցունակության բարձրացումը պետք է ուղեկցվի ներդրումային ակտիվության աճով: Ներդրումային հոսքերի ավելացումը երկրի տնտեսությանը հնարավորություն է տալիս լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների հաշվին ապահովել նոր տեխնոլոգիաների ներդրում, արտադրության կապիտալացման մակարդակի և տեխնիկական հագեցվածության աստիճանի բարձրացում: Նշված գործոններն ուղղակիորեն անդրադառնում են տնտեսության մրցունակության վրա՝ մեկ անգամ ևս ընդգծելով ներդրումների կարևորությունը մրցակցային առավելությունների ձևավորման և մրցունակության ապահովման գործում:

Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա բյուջետային ծախսերը, ինչպես ներդրումները, ուղղակիորեն անդրադառնում են մրցունակության վրա և ցույց են տալիս տնտեսության ինովացիոն ակտիվությունը: Այս ցուցանիշի որակական բնութագրիչներն առավել նշանակալից են մրցունակության տեսանկյունից, քանի որ հնարավորություն են տալիս պարզել ՀՆԱ-ի այն մասը, որն ուղղվում է գիտության և տեխնոլոգիաների զարգացմանը: Դրանք, իրենց հերթին, ապրանքների մրցունակության բարձրացման նախադրյալ են հանդիսանում և վկայում են արտադրության տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածության մասին: Այս ցուցանիշի կարևորությունը հատկապես մեծ է անցումային տնտեսությամբ երկրների համար, առավել ևս, որ այն արտացոլում է ինովացիոն գործունեության ոլորտում պետական կարգավորման և աջակցության աստիճանը: Անշուշտ, դրա նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ զարգացող տնտեսություններում տնտեսավարող սուբյեկտների զգալի մասը ֆինանսական բավարար հնարավորություններ չունի ինովացիաների զարգացման համար և նման իրավիճակում պետության աջակցությունը ձեռք է բերում կարևոր նշանակություն: Ներդրումային ակտիվության թվարկված ցուցանիշները առանձին-առանձին չեն տալիս մակրոմակարդակում մրցունակության ընդհանուր պատկերը: Մրցունակության տեսանկյունից դրանք պետք է

դիտարկել ներդրումային հոսքերի արդյունավետության համատեքստում: Այս առումով անհրաժեշտ է դիտարկել ՀՆԱ-ի և ներդրումների աճի տեմպերի հարաբերակցության ցուցանիշը:

Եվ վերջապես, մրցունակության բարձրացումը, որպես կանոն, ուղեկցվում է ապրանքների նկատմամբ պահանջարկի աճով: Այդ իսկ պատճառով մրցունակ ապրանքների արտահանման բաժինը դրանց համաշխարհային շրջանառության մեջ ևս վկայում է երկրի տնտեսական մրցունակության մասին: Ապրանքերի արտահանումը վկայում է այլ շուկաների կողմից դրանց որակի և մրցունակության ճանաչման մասին: Ինչքան բարձր է արտահանման ծավալը, այնքան ճանաչված և ընդունված են արտահանվող ապրանքների որակը և մրցունակությունը:Պետք է նշել ,որ այս չափանիշը բավականաչափ ծանրակշիռ չափորոշիչ է երկրի տնտեսության մրցունակության գնահատման տեսանկյունից, սակայն դրա առավելագույն մակարդակը դեռևս չի կարող ծառայել որպես լիակատար հիմք մրցունակության ապահովման համար: Այն բազմակողմանիորեն չի բնութագրում միջազգային հաջողությունները և արտահանվող ապրանքների մրցունակության ճանաչումը: Երկրի արտահանման բաժինը համաշխարհային շրջանառության մեջ ևս իր մեջ ներառում է մի շարք սուբյեկտիվ գործոններ՝ աշխարհագրական դիրք, արտահանող և ներմուծող երկրների տնտեսական փոխկապվածությունը և փոխկախվածությունը, արտադրողների գործընկերային

փոխհարաբերությունները և այլն: Այդ իսկ պատճառով արտահանման հնարավորությունների քանակական գնահատականը բավարար չէ մրցունակության մակարդակի գնահատման համար: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում քանակական ցուցանիշները համադրել որակականի հետ,որոնք զերծ կլինեն սուբյեկտիվ գործոնների ազդեցությունից: Որպես այդպիսին կարող է հանդես գալ ոչ թե մեկ երկրի արտահանման առավելագույն բաժինը միջազգային առևտրի մեջ, այլ արտահանվող ապրանքների հարաբերությունը երկրում արտադրվող բոլոր ապրանքներին:

Մրցունակության մակարդակի լրացուցիչ բնութագրիչ է հանդիսանում արտաքին տնտեսական գործունեության ազատականացման աստիճանը, որն արտահայտվում է մաքսատուրքի դրույքաչափերում: Արտաքին առևտրի ոլորտում իրականացվող քաղաքականությունը վկայում է ապրանքային հոսքերի շարժի կազմակերպման և կարգավորման գործընթացին պետության միջամտության աստիճանի մասին:Այս ցուցանիշի նշանակությունը կախված է հայրենական արտադրության տեխնոլոգիական զարգացման մակարդակից: Շատ դեպքերում զիջելով համաշխարհային լիդերներին` զարգացող երկրները ստիպված են իրականացնել հովանավորչական քաղաքականություն` հայրենական արտադրողների պաշտպանության նպատակով: Այս տեսանկյունից արտաքին տնտեսական քաղաքականության ուղղվածությունը մեծապես ազդում է հայրենական

արտադրողների մրցունակության մակարդակի վրա: Հենց այդ մեխանիզմի միջոցով են պաշտպանվում տեղական արտադրողները միջազգային մրցակցությունից, ինչը կարող է անուղղակի կերպով բնութագրել որոշակի ոլորտների կամ արտադրողների մրցունակությունը: Համաշխարհային պրակտիկայում նման ցուցանիշ հանդիսանում է մաքսատուրքի 10 տոկոս դրույքաչափը, որի գերազանցումը վկայում է հովանավորչության և մրցունակության ցածր մակարդակի մասին, իսկ դրանից ցածր աստիճանը խոսում է այն մասին, որ տեղական արտադրողներն ընդունակ են ինքնուրույն կերպով դիմագրավել արտաքին մրցակցությանը: Այս առումով, կարելի է նշել, որ առավել հաճախ հաջողությունների են հասել այն երկրները, որոնք իրականացրել են չափավոր ազատական քաղաքականություն` ուղղված ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման խթանմանը: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ այս ցուցանիշը ևս կրում է պայմանական բնույթ և այն չպետք է դիտարկել մյուսներից առանձնացված կերպով: Մասնավորապես, շատ դեպքում մաքսային դրույքաչափը սահմանվում են միջազգային տարբեր կազմակերպությունների կամ մաքսային միությունների անդամակցությամբ պայմանավորված պարտավորությունների ստանձնման հետևանքով, ինչը, անշուշտ, չի վկայում ներքին արտադրության մրցունակության կամ դրա բացակայության մասին:

Երկրում ազատության աստիճանը բնութագրում է քաղաքական համակարգը, դրա կայունությունը, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանվածության վիճակը: Համարվում է, որ առավել մրցունակ պետությունը անհատի զարգացման համար ապահովում է լայն հնարավորություններ ինչպես ձեռնարկատիրության, այնպես էլ մտավոր զարգացման բնագավառներում: Ինչքան բարձր է ժողովրդավարական ազատությունների աստիճանը, այնքան մեծ է ստեղծագործական նորարարությունների մակարդակը,ինչն իր հերթին նպաստում է մրցունակության հիմք հանդիսացող տեխնոլոգիական, տեխնիկական և գիտական առավելությունների ձևավորմանը:

Այսպիսով, ազգային տնտեսության մրցունակության մակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշների շարքին դասվում են.

- ներդրումների տեսակարար կշիռը, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների ուղղությամբ բյուջետային ծախսերի ծավալը, ՀՆԱ-ի և ներդրումների աճի տեմպերի հարաբերակցությունը,
- արտադրության շահութաբերության աստիճանը,
- մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն,
- աշխատանքի արտադրողականության, միջին աշխատավարձի, գործազրկության մակարդակը և կյանքի միջին տևողությունը,
- մրցունակ ապրանքների արտահանման բաժինը

միջազգային շրջանառության մեջ, մաքսատուրքի միջին դրույքաչափը,
- երկրում քաղաքական ազատությունների մակարդակը:

Հարկ է նշել, որ անցումային տնտեսությամբ երկրներում մրցակցության զարգացման և տնտեսության մրցունակության ապահովման հետ կապված գոյություն ունեն խիստ որոշակի առանձնահատկություններ: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում կիրառել լրացուցիչ այնպիսի ցուցանիշներ, որոնք հնարավորություն կտան բացահայտել նշված առանձնահատկությունների էությունը և դրանք հաշվի առնել մրցունակության գնահատման ժամանակ:Անցումային տնտեսությամբ երկրներում մրցունակության ձևավորման հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրա մակարդակն անմիջականորեն կապված է ազգային շուկաներում մրցակցության զարգացման աստիճանի հետ: Այսինքն՝ անցումային փուլում տնտեսության մրցունակությունը հանդիսանում է ոչ միայն տնտեսական համակարգի էֆեկտիվ գործունեության արդյունք, ինչպես դա տեղի է ունենում զարգացած շուկայի պայմաններում, այլ ավելի շատ արդյունք է դրա հաջող տրանսֆորմացիայի և կախված է այն հանգամանքից, թե ինչպիսի արդյունավետությամբ են ներդրվում և կիրառվում շուկայական տնտեսավարման մեխանիզմները, անհրաժեշտ ենթակառուցվածքները և տնտեսության ինքնակարգավորման մրցակցային մեխանզմները: Հետևաբար, անցումային

տնտեսության պայմաններում մրցունակության ձևավորման հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրա վրա չափազանց մեծ է շուկայական բարեփոխումների ազդեցությունը և համապատասխան մեխանիզմների կայացվածության աստիճանը: Այս տեսանկյունից, անցումային փուլում տնտեսության մրցունակության բնորոշումն իր մեջ ներառում է երկու մակարդակի գնահատականներ: Դա պայմանավորված է նրանով, որ այս դեպքում նախ և առաջ անհրաժեշտ է գնահատել մրցակցային պայմանների զարգացման աստիճանը, քանի որ հենց մրցակցությունն է հանդիսանում մրցունակության ապահովման հիմնական շարժառիթը և խթանը: Առաջին մակարդակը մրցակցային միջավայրի գործոնների զարգացման աստիճանի, իսկ երկրորդը՝ բուն տնտեսական համակարգի մրցունակության գնահատումն է: Այդ իսկ պատճառով, անցումային տնտեսությամբ երկրներում մրցունակության գնահատման ժամանակ, ի թիվս վերը թվարկված հիմնական ցուցանիշների, պետք է դիտարկվեն նաև տնտեսական աճի և ազգային հարստութան վրա անմիջական ազդեցություն ունեցող և մրցակցային շուկայի ձևավորման համար կարևոր նախադրյալ հանդիսացող հետևյալ ցուցանիշները:[43]

1. Պետական ձեռնարկատիրության բաժինն անմիջական ազդեցություն ունի արդյունաբերական արտադրության և տնտեսական աճի վրա: Բացի այդ, այն

[43] Куренков Ю. Конкурентоспособность России в мировой экономике. Вопросы экономики. 2001г. №6. стр. 36-49.

հանդիսանում է տնտեսական համակարգի կառուցվածքային վերափոխումների չափանիշ և բնութագրում է մրցակցության և ձեռնարկատիրության ազատության աստիճանը: Համաձայն փորձագիտական գնահատականների՝ այն երկրներում, որտեղ պետական սեկտորի ձեռնարկությունների արտադրանքի ծավալը չի գերազանցում ՀՆԱ-ի 3 տոկոսը, դրսևորվում են տնտեսական աճի ավելի բարձր տեմպեր՝ միջին տարեկան 1.6 տոկոս:[44] Պետական ձեռնարկությունների բաժնի աճին զուգընթաց տնտեսական աճի ցուցանիշի միջին տարեկան տեմպը նվազում է: Այն դառնում է բացասական, երբ պետական ձեռնարկությունների արտադրանքի ծավալը գերազանցում է ՀՆԱ-ի 25 տոկոսը:[45] Այս տեսանկյունից, նշված բացասական կորելացիան հնարավորություն է տալիս պետական ձեռնարկատիրության բաժինը դիտարկել որպես անցումային տնտեսության պայմաններում տնտեսության մրցունակությունը պայմանավորող կարևոր ցուցանիշ:

2. Պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերությունը ՀՆԱ-ին: Այս գործոնի ազդեցությունը տնտեսության մրցունակության վրա արտահայտվում է հետևյալ հարաբերակցության միջոցով. այն երկրներում, որոնցում պետական ծախսերը չեն

[44] Макроэкономические показатели стран с переходной экономикой. Отчет института международных экономических и политических исследованй РАН РФ. М. Эпикон. 2001г. стр. 32
[45] Ослунд Д. Оценка темпов трансформации экономики в старанах СНГ. Аки-пресс. 2000г. N5. стр. 43-59

գերազանցում ՀՆԱ-ի 17 տոկոսը, ապահովում են տարեկան միջին 2.4 տոկոսի սահմաններում տնտեսական աճ:[46] Տնտեսական աճի առավել ցածր տեմպեր գրանցում են այն երկրները, որոնք իրականացնում են ռեսուրսների առավել ինտենսիվ վերաբաշխում բյուջետային համակարգի միջոցով: Նույն միտումները պահպանվում են նաև պետական սպառման ցուցանիշի (ապրանքների և ծառայությունների ձեռք բերում, պետական համակարգի պահպանում) դիտարկման ժամանակ: Ինչքան մեծ է պետական սպառման ծավալը (բացառությամբ պետական ներդրումների և ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ֆինանսավորման), այնքան ցածր են տնտեսական աճի տեմպերը: Տնտեսական աճի ամենացածր տեմպերը գրանցվում են այն երկրներում, որոնց բյուջետային դեֆիցիտը գերազանցում է ՀՆԱ-ի նկատմամբ 10 տոկսի սահմանագիծը:

3. Դրամական զանգվածի դինամիկան: Այս ցուցանիշի բնութագիրը հիմնված է շրջանառության մեջ գտնվող դրամական զանգվածի և իրական ՀՆԱ-ի աճի վրա: Դա հնարավորություն է տալիս բացահայտել տնտեսության աճի կարիքներին դրամական զանգվածի պահանջվածության աստիճանը: Այն երկրներում, որտեղ դրամական զանգվածի աճի տեմպը կազմում է միջին տարեկան 3 տոկոս, դրսևորում է տնտեսական աճի առավել բարձր

[46] Ослунд Д. Оценка темпов трансформации экономики в странах СНГ. Аки-пресс. 2000г. N5. стр. 43-59.

ցուցանիշ՝ միջին հաշվով 2.2 տոկոս: Եվ ընդհակառակը՝ դրամական զանգվածի աճի ցածր տեմպերի դեպքում համեմատաբար ցածր է տնտեսական աճի ցուցանիշը: Նույն կերպ գնաճի մակարդակը ևս համանման ազդեցություն է ունենում տնտեսական աճի վրա՝ մինչև 3 տոկոս գնաճի դեպքում արձանագրվում են տնտեսական աճի առավել բարձր տեմպեր:[47]

Ընդհանուր առմամբ, տնտեսության մրցունակության գնահատման բարդությունը հիմնականում կապված է տնտեսության իրական վիճակը բնութագրող ցուցանիշների ընտրության և դրանց համադրման հետ: Դա պայմանավորված է մրցունակության վրա ազդող բազմաբնույթ գործոնների առկայությամբ, ինչը տեղծում է գործոնային չափորոշիչների ընտրության բարդություններ: Դրանով հանդերձ՝ վերը դիտարկված ցուցանիշները տալիս են ընդհանուր պատկերացում ազգային տնտեսության մրցունակության վիճակի վերաբերյալ:

## 2.3. ՀՀ տնտեսության մրցունակության վիճակը և դրա ապահովման հիմնախնդիրները

Անշուշտ, տնտեսության մրցունակության ապահովումը յուրաքանչյուր երկրի կայուն զարգացման անհրաժեշտ և կարևոր նախադրյալներից մեկն է, որից ուղղակիորեն ու մեծապես կախված է

[47] Ослунд Д. Оценка темпов трансформации экономики в странах СНГ. Аки-пресс. 2000г. N 5. стр. 43-59

տնտեսական համակարգի բնականոն գործունեությունը: Ակնհայտ է նաև այն փաստը, որ մրցակցային առավելությունների բացահայտումը և դրանց արդյունավետ օգտագործումը կարող է էականորեն նպաստել համաշխարհային շուկայում առաջավոր դիրքերի ապահովմանը և, դրանով իսկ, միջազգային տնտեսական հարաբերությունների խորացմանը: Ներկայումս հանրապետության տնտեսությունը մրցակցային տեսանկյունից դեռևս հեռու է ցանկալի մակարդակից, ինչը որոշակի դժվարություններ է ստեղծում արտաքին տնտեսական հարաբերությունների արդյունավետ զարգացման համար: Համաշխարհային տնտեսության զարգացման արդի միտումները վկայում են այն մասին, որ տնտեսության մրցունակության բարձրացումը կարևոր նախապայման է հանդիսանում միջազգային տնտեսական գործընթացներին արդյունավետ ներգրավման համար: Տնտեսության մրցունակության բարձրացման խնդիրների լուծման կարևորությունը պայմանավորված է հանրապետությունում տնտեսական գործունեության ընթացիկ փուլի առանձնահատկություններով, որոնք պահանջում են տնտեսության մրցակցային առավելությունների և զարգացման ուղիների բացահայտում:

Յուրաքանչյուր պետության համար տնտեսության մրցունակության ապահովման խնդիրը կրում է համալիր բնույթ, որն ուղղակիորեն կապված է սոցիալական բարեկեցության մակարդակի բարձրացման,

գիտատեխնիկական ոլորտի զարգացման, արտադրության ոլորտում նորարարությունների ներդրման, ազգային անվտանգության ապահովման և սոցիալ-տնտեսական զարգացման առումով մի շարք նպատակների ձեռքբերման հետ: Հայրենական արտադրության մրցունակության ցածր մակարդակն անխուսափելիորեն հանգեցնում է արտահանման ծավալների կրճատմանը և ներմուծման ավելացմանը, երկրի տնտեսական ինքնիշխանության մակարդակի անկմանը և արտաքին տնտեսական կոնյուկտուրայից երկրի կախվածության մակարդակի բարձրացմանը: Միջազգային տնտեսական ինտեգրացիայի խորացումը, ուժեղացնելով մրցակցային պայքարն արտաքին նոր շուկաների ձեռքբերման ուղղությամբ, առաջ է բերում տեղական արտադրության մրցունակության բարձրացման անհրաժեշտություն: Հակառակ պարագայում, չդիմանալով արտաքին շուկաներում մրցակցային պայքարին՝ տեղական արտադրությունը կկրի զգալի վնասներ՝ ընդհուպ մինչև արտադրական հզորությունների և աշխատատեղերի կրճատում:Այս խնդիրը հատկապես առանձնահատուկ նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար, քանի որ վերջինս, ունենալով սահմանափակ ներքին շուկա, ստիպված է տնտեսական քաղաքականության հիմնական շեշտադրումները կատարել արտահանման խթանման և միջազգային շուկաներ մուտք գործելու վրա, որն իր հերթին կարող է իրականություն դառնալ միայն երկրի տնտեսության մցունակության բարձրացման պարագայում: Վերջինս պահանջում է տնտեսական

համակարգի գործունեության կազմակերպատնտեսական մեխանիզմի արդյունավետ գործունեության պահանջներից բխող տեսական և մեթոդոլոգիական հայեցակարգային բնույթի մոտեցումների մշակում:

Ինչպես արդեն նշվեց աշխատանքի նախորդ բաժիններում, մրցակցային միջավայրը ձևավորվում է քաղաքական, ժողովրդագրական, գիտատեխնիկական, մշակութային և մի շարք այլ գործոնների ազդեցության ներքո: Այս առումով հանրապետությունում ձևավորված մրցակցային միջավայրի առանձնահատկությունը կայանում է նրանում,որ մի շարք շուկայական ինստիտուտների թերզարգացվածության, ինչպես նաև պետական միջամտության արդյունավետ համակարգի բացակայության պատճառով գոյություն չունի ազատ և հավասար մրցակցություն տնտեսավարող սուբյեկտների միջև: Իհարկե, Ֆորմալ առումով ձևավորված են այն հիմնական պայմանները,որոնք հանդիսանում են մրցակցային միջավայրի ձևավորման երաշխիք:Սակայն դրանց արդյունավետ գործունեությունն ապահովող կառույցների բացակայությունը, իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմների անկատարությունը չեն նպաստում հանրապետությունում առողջ և ազատ մրցակցության հաստատմանը: Մինչդեռ ներքին շուկայում մրցակցությունը հանդիսանում է տնտեսության մրցունակության ապահովման հիմնական նախապայմաններից:

Անշուշտ, տնտեսության մրցունակության վրա առանցքային ազդեցություն ունի

հանրապետությունում վարվող տնտեսական քաղաքականությունը: Տնտեսական աճի տեմպերը, 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն, պետական բյուջեի ցուցանիշները, պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը, գիտահետազոտական աշխատանքների համար կատարվող բյուջետային հատկացումների ծավալը, պետական պարտքի մակարդակը վկայում են ոչ միայն տնտեսական քաղաքականության, այլ նաև տնտեսության մրցունակության բարձրացմանն ուղղված քայլերի արդյունավետության մասին:

Ընդհանուր առմամբ, երկրի տնտեսության վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշ է հանդիսանում համախառն ներքին արդյունքի ծավալը: Ըստ գնողունակության պարիտետի՝ ՀՆԱ-ն հանդիսանում է տվյալ երկրում արտադրված բոլոր ապրանքների և ծառայությունների գումարային արժեքը՝ գնահատված (վերահաշվարկված) ԱՄՆ գներով: Այս առումով, տարբեր երկրների կտրվածքով վարկանիշային աղյուսակն ունի հետևյալ տեսքը:

Աղյուսակ 2[48]

ՀՆԱ-ի ծավալն ըստ գնողունակության պարիտետի 2015 թվականի տվյալներով (ԱՄՆ դոլարով)

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | ՀՆԱ (ըստ վճարունակության պարիտետի) |
|---|---|---|
| 1 | Չինաստան | 19 510 000 000 000 |
| 2 | ԵՄ | 19 180 000 000 000 |
| 3 | ԱՄՆ | 17 970 000 000 000 |

48 http://total-rating.ru/1594-vvp-po-pps-stran-za-2015-god.html

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | ՀՆԱ (ըստ վճարունակության պարիտետի) |
|---|---|---|
| 5 | Ճապոնիա | 4 658 000 000 000 |
| 6 | Գերմանիա | 3 842 000 000 000 |
| 7 | ՌԴ | 3 471 000 000 000 |
| 10 | Մեծ Բրիտանիա | 2 660 000 000 000 |
| 13 | Իտալիա | 2 174 000 000 000 |
| 16 | Իսպանիա | 1 636 000 000 000 |
| 18 | Թուրքիա | 1 576 000 000 000 |
| 20 | Իրան | 1 382 000 000 000 |

Աղյուսակ 2-ի շարունակություն

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | ՀՆԱ (ըստ վճարունակության պարիտետի) |
|---|---|---|
| 24 | Լեհաստան | 1 003 000 000 000 |
| 28 | Նիդեռլանդներ | 831 400 000 000 |
| 38 | Բելգիա | 494 600 000 000 |
| 43 | Ղազախստան | 430 500 000 000 |
| 47 | Ավստրիա | 403 800 000 000 |
| 49 | Նորվեգիա | 352 800 000 000 |
| 55 | Իսրայել | 281 800 000 000 |
| 61 | Իռլանդիա | 250 300 000 000 |
| 63 | Ֆինլանդիա | 224 700 000 000 |
| 67 | Ադրբեջան | 174 300 000 000 |
| 69 | Բելառուս | 168 200 000 000 |
| 77 | Բուլղարիա | 132 600 000 000 |
| 85 | Թուրքմենստան | 90 290 000 000 |
| 89 | Լիտվա | 82 140 000 000 |

| | | |
|---|---|---|
| 110 | Լատվիա | 49 890 000 000 |
| 115 | Էստոնիա | 37 880 000 000 |
| 121 | Վրաստան | 35 370 000 000 |
| 135 | Հայաստան | 25 220 000 000 |
| 139 | Տաջիկստան | 23 300 000 000 |
| 145 | Ղրղզստան | 19 810 000 000 |
| 149 | Մոլդովա | 17 770 000 000 |
| 153 | Իսլանդիա | 15 010 000 000 |

Ինչպես նկատում ենք աղյուսակ 2-ի տվյալներից, 153 երկրների շարքում ՀՆԱ-ի անվանական մեծությամբ Հայաստանը զբաղեցնում է 135-րդ տեղը: Կարելի է ասել, որ այս դեպքում երկրի զբաղեցրած դիրքից ելնելով եզրակացություններ կազմելը տրամաբանական չէ, քանի որ ՀՆԱ-ի ծավալի վրա ազդում են տարբեր գործոններ, որոնք ըստ երկրների միմյանցից խիստ տարբերվում են: Այս առումով տնտեսության զարգացման գնահատման ավելի օբյեկտիվ ցուցանիշ է հանդիսանում տնտեսական աճը:

Աղյուսակ 3[49]

ՀՆԱ-ի աճը ըստ գնողունակության պարիտետի 2015թվականի տվյալներով

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | ՀՆԱ-ի աճը (ըստ վճարունակության պարիտետի) |
|---|---|---|
| 6 | Թուրքմենստան | 8.5 |
| 19 | Չինաստան | 6.8 |

[49] http://total-rating.ru/1595-rost-vvp-stran-za-2015-god.html

| | | |
|---|---|---|
| 20 | Ուզբեկստան | 6.8 |
| 65 | Ադրբեջան | 4.0 |
| 97 | Իսպանիա | 3.1 |
| 98 | Թուրքիա | 3.0 |
| 108 | Շվեդիա | 2.8 |
| 122 | Մեծ Բրիտանիա | 2.5 |
| 125 | Հայաստան | 2.5 |
| 143 | Վրաստան | 2.0 |
| 150 | ԵՄ | 1.8 |
| 152 | Լիտվա | 1.8 |

Աղյուսակ 3-ի շարունակություն

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | ՀՆԱ-ի աճը (ըստ վճարունակության պարիտետի) |
|---|---|---|
| 153 | Նիդեռլանդներ | 1.8 |
| 155 | Բուլղարիա | 1.7 |
| 158 | Դանիա | 1.6 |
| 174 | Շվեյցարիա | 1.0 |
| 183 | Նորվեգիա | 0.9 |
| 187 | Ավստրիա | 0.8 |
| 188 | Իտալիա | 0.8 |
| 189 | Իրան | 0.8 |
| 191 | Ճապոնիա | 0.6 |
| 195 | Ֆինլանդիա | 0.4 |
| 204 | Մոլդովա | -1 |
| 208 | Հունաստան | -2.3 |
| 212 | Բելառուս | -3.6 |
| 213 | ՌԴ | -3.9 |
| 222 | Ուկրաինա | -11 |

Ինչպես նկատում ենք աղյուսակ 3-ի տվյալներից, տնտեսական աճի ցուցանիշը և երկրի տնտեսական զարգացման աստիճանը, որոշակի բացառություններով, գտնվում են հակադարձ համեմատական կապի մեջ. ինչքան զարգացած է երկիրը, այնքան ցածր է տնտեսական աճի ցուցանիշը, ինչը տրամաբանական է: Հայաստանի Հանրապետությունը 2015 թվականի տվյալներով զբաղեցրել է 125-րդ տեղը 2.5 տոկոս տնտեսական աճով: Ի դեպ, ԵՄ անդամ պետություններում տնտեսական աճի միջին ցուցանիշը կազմել է 1.8 տոկոս:

Իհարկե, չնայած տնտեսական աճի կարևորությանը, պետք է նշել, որ տնտեսական հզորության վերաբերյալ առավել օբյեկտիվ պատկեր է տալիս 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել համեմատական վելուծություններ տարբեր երկրների միջև:

Աղյուսակ 4[50]

1 շնչին ընկնող ՀՆԱ-ն ըստ գնողունակության պարիտետի
2015 թվականի տվյալներով (ԱՄՆ դոլարով)

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն ըստ գնողունակության պարիտետի |
|---|---|---|
| 1 | Քաթար | 145 000 |
| 2 | Լյուքսեմբուրգ | 102 900 |
| 3 | Լիխտենշտեյն | 89 400 |

[50] http://total-rating.ru/1596-vvp-na-dushu-naseleniya-za-2015-god.html

| | | |
|---|---|---|
| 11 | Նորվեգիա | 68 400 |
| 16 | Շվեյցարիա | 59 300 |
| 19 | ԱՄՆ | 56 300 |
| 25 | Նիդեռլանդներ | 49 300 |
| 27 | Ավստրիա | 47 500 |
| 38 | Ֆրանսիա | 41 400 |
| 49 | Իտալիա | 35 800 |
| 53 | Իսրայել | 34 300 |
| 63 | Էստոնիա | 28 700 |
| 65 | Լիտվա | 28 000 |
| 79 | ՌԴ | 23 700 |
| 86 | Ռումինիա | 20 600 |
| 87 | Թուրքիա | 20 500 |

Աղյուսակ 4-ի շարունակություն

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն ըստ գնողունակության պարիտետի |
|---|---|---|
| 90 | Ադրբեջան | 18 700 |
| 94 | Բելառուս | 17 800 |
| 95 | Իրան | 17 800 |
| 103 | Թուրքմենստան | 15 600 |
| 112 | Չինաստան | 14 300 |
| 138 | Վրաստան | 9 500 |
| 144 | Հայաստան | 8 400 |
| 148 | Ուկրաինա | 8 000 |
| 160 | Ուզբեկստան | 6 100 |

2015 թվականի տվյալներով հանրապետությունում 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 8400 ԱՄՆ դոլար, և այդ ցուցանիշով ՀՀ-ն զբաղեցրել է 144-րդ տեղը: Անշուշտ, այն բավականաչափ ցածր է և այս տեսանկյունից հանրապետությունը զիջում է ոչ միայն զարգացած և զարգացող երկրներին, այլ նաև իր անմիջական հարևաններին և ԱՊՀ պետությունների գերակշիռ մասին: Միաժամանակ պետք է նաև նկատի ունենալ հանրապետությունում ստվերային տնտեսության բավականաչափ մեծ ծավալները, ինչը հաշվի առնելու դեպքում դիտարկվող ցուցանիշը որոշակիորեն կաճի:

Ըստ էության, մրցակցային միջավայրի զարգացման որոշիչ գործոն է հանդիսանում բնակչության վճարունակ պահանջարկը: Կարելի ասել, որ այս գործոնն էական նշանակություն ունի նաև մակրոտնտեսական մյուս ցուցանիշների ձևավորման գործում, քանի որ հանդիսանում է մրցակցային պայքարի հիմնական օբյեկտ և տնտեսական գործունեության կարևոր խթան: Այս տեսանկյունից վճարունակ պահանջարկի աճը հանդիսանում է տնտեսական վերափոխումների և պետական տնտեսական քաղաքականության հիմնական նպատակ: Միաժամանակ, այն անմիջականորեն կախված է վարվող տնտեսական քաղաքականությունից և իր վրա կրում է գնաճի, գործազրկության, միջին աշխատավարձի, նվազագույն սպառողական զամբյուղի և կյանքի միջին տևողության ազդեցությունը: Գործազրկության մակարդակը

բնութագրում է մարդկային ռեսուրսների վիճակը, որն ուղղակիորեն ազդում է մրցակցային միջավայրի վրա: Այս առումով պետք է նշել, որ հանրապետությունում վճարունակ պահանջարկը էականորեն զիջում է բնակչության իրական պահանջմունքներին: Անշուշտ, դրա վրա առարկայական ազդեցություն ունեն բնակչության դրամական եկամուտների և, մասնավորապես, միջին աշխատավարձի ցուցանիշները: Այս տեսանկյունից, հանրապետությունում միջին աշխատավարձի մակարդակը ևս զգալիորեն զիջում է մի շարք զարգացած և զարգացող երկրներում գրանցված ցուցանիշին:

Աղյուսակ 5[51]

Միջին աշխատավարձի չափը 2014թվականի տվյալներով

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | Միջին աշխատավարձի չափը |
|---|---|---|
| 1 | Շվեյցարիա | $ 6 301,73 |
| 2 | Լյուքսեմբուրգ | $ 4 479,80 |
| 6 | Նորվեգիա | $ 4 215,43 |
| 12 | Դանիա | $ 3 269,62 |
| 13 | ԱՄՆ | $ 3 258,85 |
| 15 | Շվեդիա | $ 3 181,11 |
| 19 | Մեծ Բրիտանիա | $ 2 960,54 |
| 20 | Նիդեռլանդներ | $ 2 937,58 |
| 21 | Ֆինլանդիա | $ 2 924,10 |
| 22 | Գերմանիա | $ 2 851,85 |

[51] http://total-rating.ru/1174-srednie-zarplaty-v-stranah-mira-na-2014-god.html

Աղյուսակ 5-ի շարունակություն

| | | |
|---|---|---|
| 24 | Ճապոնիա | $ 2 782,43 |
| 43 | Իտալիա | $ 2 117,76 |
| 50 | Իսպանիա | $ 1 635,15 |
| 67 | Չեխիա | $ 1 020,48 |
| 71 | Հունաստան | $ 953,44 |
| 75 | Էստոնիա | $ 914,97 |
| 76 | Լեհաստան | $ 905,62 |
| 86 | Թուրքիա | $ 756,06 |
| 88 | Չինաստան | $ 731,14 |
| 91 | Լատվիա | $ 713,11 |
| 94 | Լիտվա | $ 701,28 |
| 95 | ՌԴ | $ 686,16 |
| 96 | Հունգարիա | $ 667,58 |
| 103 | Ղազախստան | $ 614,24 |
| 113 | Ադրբեջան | $ 524,84 |
| 117 | Բուլղարիա | $ 506,76 |
| 119 | Բելառուս | $ 502,19 |
| 130 | Իրան | $ 447,61 |
| 139 | Թուրքմենստան | $ 373,33 |
| 141 | Ուզբեկստան | $ 360,72 |
| 143 | Ուկրաինա | $ 357,71 |
| 147 | Ղրղզստան | $ 350,00 |
| 153 | Հայաստան | $ 312,89 |
| 155 | Վրաստան | $ 299,37 |

Աղյուսակ 5-ի շարունակություն

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | Միջին աշխատավարձի չափը |
|---|---|---|
| 164 | Մոլդովա | $ 244,09 |
| 172 | Տաջիկստան | $ 187,27 |
| 176 | Կուբա | $ 25,05 |

Աղյուսակ 5-ի տվյալներից երևում է, որ հանրապետությունում միջին աշխատավարձի չափը խիստ ցածր է ոչ միայն զարգացած, այլ նաև զարգացող և նախկին խորհրդային շատ երկրների ցուցանիշներից: Դա, բնականաբար, բացասաբար է ազդում բնակչության վճարունակ պահանջարկի վրա, որը, ինչպես արդեն նշեցինք, մրցակցության խթանման կարևոր պայման է հանդիսանում:

Ինչպես արդեն նշեցինք, տնտեսության մրցունակության և, ընդհանրապես, երկրի տնտեսական զարգացման գործում առանցքային նշանակություն ունեն մարդկային ռեսուրսները, որոնց վիճակը բնութագրող ցուցանիշ է հանդիսանում կյանքի միջին տևողության ցուցանիշը: Ըստ էության, այն իրենից ներկայացնում է երկրի մրցունակությունը պայմանավորող սոցիալական գործոն: Չնայած ՀՀ-ում բյուջետային ծախսերի սոցիալական ուղղվածությանը՝ կյանքի որակը և կենսամակարդակը երկրում զգալիորեն ցածր են, ինչը անդրադառնում է երկրի մրցակցային միջավարի վրա:

Աղյուսակ 6[52]

### Կյանքի միջին տևողությունը 2015 թվականի տվյալներով

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | Կյանքի միջին տևողությունը |
|---|---|---|
| 1 | Մոնակո | 89,52 |
| 2 | Ճապոնիա | 84,74 |

52 http://total-rating.ru/1539-ozhidaemaya-prodolzhitelnost-zhizni-v-2015-godu.html

Աղյուսակ 6-ի շարունակություն

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | Կյանքի միջին տևողությունը |
|---|---|---|
| 3 | Սինգապուր | 84,68 |
| 6 | Իսլանդիա | 82,97 |
| 9 | Շվեյցարիա | 82,5 |
| 14 | Իտալիա | 82,12 |
| 15 | Շվեդիա | 81,98 |
| 19 | Ֆրանսիա | 81,75 |
| 20 | Նորվեգիա | 81,7 |
| 21 | Իսպանիա | 81,57 |
| 22 | Ավստրիա | 81,39 |
| 24 | Նիդեռլանդներ | 81,23 |
| 29 | Բելգիա | 80,88 |
| 30 | Ֆինլանդիա | 80,77 |
| 31 | Իռլանդիա | 80,68 |
| 32 | Գերմանիա | 80,57 |
| 33 | Մեծ Բրիտանիա | 80,54 |
| 34 | Հունաստան | 80,43 |
| 38 | ԵՄ | 80,2 |
| 43 | ԱՄՆ | 79,68 |
| 99 | Չինաստան | 75,41 |
| 109 | Ռումինիա | 74,92 |
| 113 | Լիտվա | 74,69 |
| 115 | Թուրքիա | 74,57 |
| 120 | Բուլղարիա | 74,39 |

Աղյուսակ 6-ի շարունակություն

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | Կյանքի միջին տևողությունը |
|---|---|---|
| 121 | Հայաստան | 74,37 |
| 123 | Լատվիա | 74,23 |
| 128 | Ուզբեկստան | 73,55 |
| 139 | Բելառուս | 72,48 |
| 143 | Ադրբեջան | 72,2 |
| 148 | Ուկրաինա | 71,57 |
| 149 | Իրան | 71,15 |
| 152 | Ղազախստան | 70,55 |
| 153 | ՌԴ | 70,47 |
| 168 | Տաջիկստան | 67,39 |
| 224 | Չադ | 49,81 |

Կյանքի միջին տևողության ցուցանիշով հանրապետությունը գտնվում է 121-րդ տեղում՝ զիջելով զարգացած մի շարք երկրների, սակայն առաջ լինելով ԱՊՀ երկրներից շատերից: Իհարկե, այս առումով, չնայած իրավիճակը որոշակիորեն հուսադրող է, սակայն չի կարող բավարար համարվել մարդկային ռեսուրսների որակական մակարդակի բարձրացման և, դրանով իսկ, տնտեսության մրցունակության ապահովման տեսանկյունից:

Հաջորդ կարևոր ցուցանիշը, որը վկայում է երկրի տնտեսության զարգացման հնարավորությունների մասին, պետական պարտքի մակարդակն է: Միևնույն ժամանակ, այն տնտեսական անվտանգությունը բնութագրող հիմնական ցուցանիշներից մեկն է, որի բարձր մակարդակը

վկայում է տնտեսական զարգացման սպառնալիքների և երկրի մրցակցային հնարավորությունների անկման մասին:

Աղյուսակ 7[53]

Պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2015թվականի տվյալներով

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | Պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը |
|---|---|---|
| 1 | Ճապոնիա | 227.9 |
| 2 | Զիմբաբվե | 205.3 |
| 3 | Հունաստան | 182.0 |
| 5 | Իտալիա | 135.8 |
| 6 | Պորտուգալիա | 129.0 |
| 11 | Կիպրոս | 107.0 |
| 12 | Բելգիա | 107.0 |
| 15 | Իռլանդիա | 101.2 |
| 17 | Իսպանիա | 101.0 |
| 19 | Ֆրանսիա | 98.2 |
| 21 | Ուկրաինա | 94.9 |
| 25 | Մեծ Բրիտանիա | 90.6 |
| 29 | Ավստրիա | 83.4 |
| 35 | Հունգարիա | 76.2 |
| 39 | ԱՄՆ | 73.6 |
| 44 | Գերմանիա | 71.7 |
| 46 | Նիդեռլանդներ | 68.9 |
| 56 | Իսրայել | 64.4 |

[53] http://total-rating.ru/1601-gosudarstvennyy-dolg-stran-na-2015-god.html

| | | |
|---|---|---|
| 58 | Ֆ ի ն լ ան դ ի ա | 61.2 |

Աղյուսակ 7-ի շարունակություն

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | Պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը |
|---|---|---|
| 71 | Սլովակիա | 53.1 |
| 87 | Հայաստան | 47.5 |
| 90 | Դանիա | 47.2 |
| 103 | Շվեդիա | 44.0 |
| 104 | Լեհաստան | 43.4 |
| 107 | Չեխիա | 41.4 |
| 115 | Նորվեգիա | 39.3 |
| 118 | Լիտվա | 38.8 |
| 120 | Լատվիա | 38.5 |
| 124 | Բելառուս | 36.4 |
| 128 | Շվեյցարիա | 34.0 |
| 133 | Թուրքիա | 33.1 |
| 143 | Բուլղարիա | 29.2 |
| 154 | Ղազախստան | 17.60 |
| 160 | ՌԴ | 13.5 |
| 161 | Իրան | 13.2 |
| 162 | Ադրբեջան | 11.8 |
| 165 | Էստոնիա | 10.2 |
| 169 | Ուզբեկստան | 8.3 |
| 170 | Սաուդյան Արաբիա | 7.8 |

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 10-ի տվյալները, 170 երկրների կազմում Հայաստանի Հանրապետությունը պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշով զբաղեցնում է 87-րդ տեղը: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ տվյալ ցուցանիշի

վտանգավորության աստիճանը զգալիորեն պայմանավորված է նաև պետական պարտքի սպասարկման ուղղությամբ տնտեսության կարողություններով: Միաժամանակ, ակնհայտ է նաև, որ արտաքին պարտքի բարձր մակարդակն անուղղակիորեն անդրադառնում է հարկային բեռի վրա` հանգեցնելով վերջինիս բարձրացմանը և, հետևաբար նաև, տնտեսավարող սուբյեկտների մրցակցային առավելությունների սահմանափակմանը: Այս տեսանկյունից, պետական պարտքային պարտավորությունների օբյեկտիվ գնահատման համար, նախ և առաջ, անհրաժեշտ է պարզել դրանց առաջացման պատճառները և, մասնավորապես, բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները:

Աղյուսակ 8[54]

Բյուջետային դեֆիցիտը կամ պրոֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ 2015թվականի տվյալներով

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | Բյուջետային դեֆիցիտը կամ պրոֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ |
|---|---|---|
| 2 | Մակաո | 14.9 |
| 6 | Նորվեգիա | 6.6 |
| 19 | Գերմանիա | 0.9 |
| 23 | Շվեյցարիա | 0.2 |
| 24 | Իսլանդիա | 0.2 |
| 27 | Էստոնիա | 0.1 |

54 http://total-rating.ru/1600-proficit-ili-deficit-byudzhetov-stran-2015.html

| | | |
|---|---|---|
| 36 | Բ ե լ առ ո ւ ս | -0.3 |
| 43 | Թո ւ ր ք մ ե ն ս տան | -0.5 |
| 46 | Տ աջ ի կ ս տան | -0.6 |
| 47 | Կ ի պր ո ս | -0.6 |

Աղյուսակ 8-ի շարունակություն

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | Բյուջետային դեֆիցիտը կամ պրոֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ |
|---|---|---|
| 54 | Լատվիա | -1.1 |
| 56 | Շվեդիա | -1.1 |
| 57 | Ղրղզստան | -1.2 |
| 58 | Ուզբեկստան | -1.4 |
| 60 | Լիտվա | -1.6 |
| 62 | Թուրքիա | -1.7 |
| 64 | Լեհաստան | -1.8 |
| 66 | Չեխիա | -1.8 |
| 67 | Կանադա | -1.9 |
| 70 | Իսրայել | -2.0 |
| 71 | Ղազախստան | -1.2 |
| 72 | Նիդեռլանդներ | -2.0 |
| 77 | Ավստրիա | -2.1 |
| 86 | ԱՄՆ | -2.4 |
| 89 | Ֆինլանդիա | -2.5 |
| 90 | Հունգարիա | -2.6 |
| 92 | Չինաստան | -2.6 |
| 98 | Բելգիա | -2.7 |
| 99 | Ադրբեջան | -2.7 |
| 103 | Բուլղարիա | -2.8 |
| 106 | ՌԴ | -2.9 |
| 109 | Հայաստան | -2.9 |

Աղյուսակ 8-ի շարունակություն

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | Բյուջետային դեֆիցիտը կամ պրոֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ |
|---|---|---|
| 111 | Իտալիա | -3.0 |
| 113 | Հունաստան | -3.0 |
| 122 | Վրաստան | -3.2 |
| 123 | Դանիա | -3.2 |
| 124 | Մոլդովա | -3.3 |
| 132 | Պորտուգալիա | -3.2 |
| 146 | Ֆրանսիա | -4.0 |
| 155 | Ուկրաինա | -4.4 |
| 156 | Իսպանիա | -4.4 |
| 161 | Մեծ Բրիտանիա | -4.5 |
| 170 | Խորվաթիա | -5.0 |
| 189 | Ճապոնիա | -6.5 |
| 220 | Վենեսուելա | -109.9 |

220 երկրների շարքում ՀՀ-ն պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշով 2015 թվականին զբաղեցրել է 109-րդ տեղը՝ առաջ գտնվելով մի շարք ԱՊՀ և արևմտաեվրոպական երկրներից: Իհարկե, նման իրավիճակը դեռևս չի կարող վկայել հանրապետության տնտեսության բարձր մրցունակության մասին, քանի որ տվյալ ցուցանիշի մեծությունն ինքնին չի բնութագրում տնտեսության զարգացվածության աստիճանը: Ի վերջո, շատ զարգացած պետություններ, ձևավորելով դեֆիցիտային բյուջե, արձանագրում են զգալի առաջընթաց համաշխարհային զարգացման և

ազգային տնտեսության մրցունակության բարձրացման առումով:

Տնտեսական գործունեության արդյունավետության ապահովման կարևոր պայմաններից մեկը, հատկապես անցման փուլում գտնվող երկրներում և մասնավորապես՝ ՀՀ-ում, ֆինանսական ռեսուրսների մատչելիության ապահովումն է: Զարգացման տվյալ փուլում շատ տնտեսավարող սուբյեկտների համար ֆինանսական ռեսուրսների ձևավորման հիմնական աղբյուրը բանկային փոխառություններն են, որոնց մատչելիությունը զգալիորեն կախված է բանկային տոկոսադրույքի չափից:

Աղյուսակ 9[55]

Առևտրային բանկերի կողմից վարկավորման միջին տոկոսադրույքը 2015թվականի տվյալներով

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | Առևտրային բանկերի կողմից վարկավորման միջին տոկոսադրույքը |
|---|---|---|
| 1 | Մադագասկար | 62.0 |
| 3 | Մալավի | 41.0 |
| 4 | Գամբիա | 30.8 |
| 2 | Բրազիլիա | 42.7 |
| 12 | Ղրղզստան | 20.5 |
| 10 | Տաջիկստան | 22.0 |
| 17 | Բելառուս | 19.0 |

55 http://total-rating.ru/1603-srednyaya-stavka-kreditovaniya-kommercheskogo-banka.html

| | | |
|---|---|---|
| 16 | Ո ւ կ ր աի ն ա | 19.0 |
| 50 | Ա դ ր բ ե ջ ան | 14.0 |
| 25 | Հ այ աս տան | 17.3 |
| 51 | Թ ո ւ ր ք ի ա | 13.8 |
| 66 | Վ ր աս տան | 12.1 |

Աղյուսակ 9-ի շարունակություն

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | Առևտրային բանկերի կողմից վարկավորման միջին տոկոսադրույքը |
|---|---|---|
| 63 | Ուզբեկստան | 12.44 |
| 41 | Մոլդովա | 15.0 |
| 33 | ՌԴ | 11.9 |
| 57 | Իրան | 13.0 |
| 93 | Իսպանիա | 9.1 |
| 114 | Բուլղարիա | 7.5 |
| 117 | Իսլանդիա | 7.4 |
| 75 | Ղազախստան | 10.9 |
| 129 | Հունաստան | 6.0 |
| 141 | Լեհաստան | 5.5 |
| 151 | Կիպրոս | 4.7 |
| 156 | Չինաստան | 4.4 |
| 168 | Լիտվա | 3.2 |
| 147 | Էստոնիա | 5.1 |
| 158 | Իտալիա | 4.3 |
| 169 | Հունգարիա | 3.0 |
| 155 | Չեխիա | 4.5 |
| 153 | Մեծ Բրիտանիա | 4.5 |
| 175 | Բելգիա | 2.5 |
| 166 | ԱՄՆ | 3.3 |
| 165 | Իռլանդիա | 3.4 |
| 163 | Իսրայել | 3.5 |

Աղյուսակ 9-ի շարունակություն

| Երկրի տեղը վարկանիշային սանդղակում | Երկիր | Առևտրային բանկերի կողմից վարկավորման միջին տոկոսադրույքը |
|---|---|---|
| 167 | Սլովակիա | 3.2 |
| 172 | Կանադա | 2.7 |
| 178 | Շվեդիա | 2.0 |
| 173 | Շվեյցարիա | 2.6 |
| 182 | Գերմանիա | 1.7 |
| 176 | Նորվեգիա | 2.1 |
| 179 | Նիդեռլանդներ | 2.0 |
| 181 | Ավստրիա | 1.9 |
| 180 | Ֆինլանդիա | 1.9 |
| 183 | Ճապոնիա | 1.48 |

Այսպիսով, ընդհանրացնելով իրականացված համեմատական վերլուծության արդյունքները՝ կարող ենք նշել, որ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական և այլ ցուցանիշների գծով տարբեր երկրների վարկանիշային աղյուսակներում հանրապետության (ինչպես նաև մի շարք այլ երկրների) զբաղեցրած դիրքը որոշակիորեն հակասական է: Դա վկայում է այն մասին, որ նշված ցուցանիշները չպետք է դիտարկել առանձնացված կերպով, քանի որ այդ դեպքում երկրի տնտեսական զարգացման հնարավորությունների վերաբերյալ գնահատականները օբյեկտիվ չեն լինի: Հենց այդ հանգամանքով է պայմանավորված տարբեր տնտեսական կառույցների կողմից երկրների

մրցունակության ինդեքսների կազմումը, որով փորձ է կատարվում գնահատել պետությունների տնտեսության մրցունակությունը: Մասնավորապես, Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող գլոբալ մրցունակության ինդեքսն իր մեջ ներառում է երեք ենթաինդեքս՝ 12 հենասյուներով, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 1-7 սանդղակով:

Դրանցում ընդգրկված են 114 ցուցանիշ, որից 2/3-ը ձևավորվում է բիզնես ղեկավարների կարծիքների հարցման հիման վրա (տես գծապատկեր 3).[56]




[56] Գլոբալ մրցունակության 2016-2017 թվականի ինդեքսում Հայաստանի դիրքի մասին: Տեղեկանք, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն: http://www.mineconomy.am/media/2017/02/539.pdf




Գծապատկեր 3. Գլոբալ մրցունակության ինդեքսի ենթաինդեքսները՝ 12 հենասյուներով

2016-2017 թվականների ինդեքսում Հայաստանը 4.1 միավորով զբաղեցրել է 79-րդ տեղը 138 երկրների շարքում: Ընդ որում, նախորդ տարվա համեմատությամբ ՀՀ դիրքը բարելավվել է 3 տողով, ինչի արդյունքում ԱՊՀ երկրների (ներառյալ Վրաստանը) շարքում հանրապետությունը զբաղեցրել է 6-րդ, իսկ հարևան երկրների շարքում՝ վերջին տեղը:[57]

Վերջին տարիների կտրվածքով ՀՀ զբաղեցրած դիրքերը ունեցել է հետևյալ դինա




[57] Գլոբալ մրցունակության 2016-2017 թվականի ինդեքսում Հայաստանի դիրքի մասին: Տեղեկանք, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն: http://www.mineconomy.am/media/2017/02/539.pdf




Գծապատկեր 4. ՀՀ զբաղեցրած դիրքը գլոբալ մրցունակության ինդեքսում 2005-2017 թվականների դրությամբ [58]

Գլոբալ մրցունակության 2016-2017 թվականների ինդեքսում ԱՊՀ երկրների շարքում ամենաբարձր դիրքը զբաղեցնում է Ադրբեջանը՝ 37-րդ տեղը: Ղազախստանը զբաղեցնում է 53-րդ, Ռուսաստանը՝ 43-րդ, Ուկրաինան՝ 85-րդ, Տաջիկստանը՝ 77-րդ, Մոլդովան՝ 100-րդ, իսկ Ղրղզստանը՝ 111-րդ տեղը: Հարևան պետություններից Թուրքիան զբաղեցնում է 55-րդ, իսկ Իրանը՝ 76-րդ տեղը :[59]

Հարկ է նշել, որ Հայաստանի դիրքի և միավորների փոփոխությունը տեղի է ունեցել

---

58 Նույն տեղում

59 Գլոբալ մրցունակության 2016-2017 թվականի ինդեքսում Հայաստանի դիրքի մասին: Տեղեկանք, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն : http://www.mineconomy.am/media/2017/02/539.pdf

գլոբալ մրցունակության ինդեքսի հետևյալ բաղադրիչների գծով:

Աղյուսակ 10[60]

Հայաստանի դիրքի և միավորների փոփոխությունը գլոբալ մրցունակության ինդեքսի բաղադրիչների գծով:

| | Հայաստան իդիրք | | Հայաստանի միավոր | |
|---|---|---|---|---|
| | 2016-2017 | Փոփոխություն | 2016-2017 | Փոփոխություն |
| ***Գլոբալ մրցունակության ինդեքս*** | ***79*** | ***3*** | ***4.1*** | ***0.1*** |
| ***Հիմնական պահանջներ*** | ***83*** | ***-2*** | ***4.4*** | ***0.0*** |
| Ինստիտուտներ | 66 | 10 | 4.0 | 0.2 |
| Ենթակառուցվածքներ | 82 | 0 | 3.8 | 0.1 |
| Մակրոտնտեսական միջավայր | 88 | -16 | 4.3 | -0.4 |
| Առողջապահություն և տարրական կրթություն | 93 | 2 | 5.4 | 0.0 |
| ***Արդյունավետության խթաններ*** | ***80*** | ***4*** | ***4.0*** | ***0.2*** |
| Բարձրագույն կրթություն և վերապատրաստում | 71 | 1 | 4.4 | 0.2 |
| Ապրանքների շուկայի արդյունավետություն | 45 | 5 | 4.6 | 0.1 |

60 Գլոբալ մրցունակության 2016-2017 թվականի ինդեքսում Հայաստանի դիրքի մասին: Տեղեկանք, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն: http://www.mineconomy.am/media/2017/02/539.pdf

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աշխատուժի շուկայի արդյունավետություն | 55 | 3 | 4.4 | 0.1 |
| Ֆինանսական շուկաների զարգացում | 90 | 4 | 3.7 | 0.2 |

Աղյուսակ 10-ի շարունակություն

| | Հայաստանի դիրք | | Հայաստանի միավոր | |
|---|---|---|---|---|
| | 2016-2017 | Փոփոխություն | 2016-2017 | Փոփոխություն |
| Տեխնոլոգիական պատրաստվածություն | 71 | 4 | 4.0 | 0.3 |
| Շուկայի չափ | 120 | -4 | 2.7 | -0.1 |
| ***Նորարարության և կատարելագործվածության գործոններ*** | ***81*** | ***20*** | ***3.5*** | ***0.2*** |
| Գործարարության կատարելագործվածություն | 81 | 16 | 3.8 | 0.2 |
| Նորարարություն | 87 | 20 | 3.2 | 0.2 |

Ամփոփելով՝ հարկ ենք համարում նշել, որ ազգային տնտեսության մրցունակության տեսանկյունից հանրապետությունը գտնվում է զգալիորեն անբարենպաստ իրավիճակում: Ինչպես ընդհանուր տնտեսության, այնպես էլ դրա առանձին ճյուղերի և տնտեսավարող սուբյեկտների գծով մրցունակության մակարդակը դեռևս հնարավորություն չի տալիս միջազգային տնտեսական ինտեգրացիայի խորացման ներկա

փուլում հասնել հաջողությունների արտաքին շուկաներում: Անշուշտ, նման իրավիճակը պահանջում է պետական հստակ ռազմավարության մշակում և իրագործում` հիմնված տնտեսական զարգացման գերակա ճյուղերի և ոլորտների ամրագրմամբ:

# ԳԼՈՒԽ 3.ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

## 3.1. Տնտեսության մրցունակության բարձրացման ռազմավարությունը

Շուկայական հարաբերությունների, միջազգային տնտեսական ինտեգրացիայի և մրցակցային միջավայրի զարգացման ներկա փուլում տնտեսության մրցունակության կառավարման նպատակով պետական և շուկայական մեխանիզմների արդյունավետ համադրումը դառնում է հրամայական պահանջ: Ընդ որում, այդ ուղղությամբ ցանկալի արդյունքների ձեռքբերման համար, ի թիվս այլ խնդիրների լուծման, պետք է հաշվի առնել նաև վերջին տարիներին համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող փոփոխությունները, առկա միտումները և զարգացման հնարավոր սցենարները: Ընդ որում,դրանք պետք է գնահատվեն նաև ազգային տնտեսության մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակման ու իրականացման ժամանակ, ինչը հնարավորություն կտա առավել հաջողությամբ հարմարվել ու միջազգային շուկաների պահանջներին: Մասնավորապես,զարգացման ներկափուլում գնային մրցակցությանը փոխարինել է որակի մրցակցությունը, ինչը նոր խնդիրներ է առաջադրում հայրենական արտադրության համար: Ընդ որում, նման փոփոխությունն առաջիկայում խորացման և ընդլայնման միտում ունի, ինչը, անշուշտ, պահանջում է տնտեսության որակական մակարդակի բարձրացման երկարաժամկետ ռազմավարության մշակում և հետևողական կիրառում:

Տնտեսության մրցունակության կառավարման գործընթացում կարևոր նշանակություն ունի պետության և տնտեսավարող սուբյեկտների մասնակցության համադրման տնտեսական մեխանիզմի մշակումը, որը պետք է հիմնված լինի նրանց շահերի և հետաքրքրությունների ներդաշնակեցման վրա: Ակնհայտ է, որ տնտեսության մրցունակության ապահովումը հանդիսանում է ինչպես պետական, այնպես էլ բիզնես շրջանակների խնդիրը՝ անկախ գոյություն ունեցող տնտեսավարման մոդելից: Սակայն, դրանով հանդերձ, մրցունակության ապահովման առանձին ասպեկտների կարևորությունը մեծանում է հատկապես տնտեսական ճգնաժամի փուլում, երբ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված՝ իրացման խնդիրները ձեռք են բերում առաջնահերթ նշանակություն: Ակնհայտորեն, դրանց լուծման գործում հատկապես կարևորվում է մրցակցային առավելությունների ապահովումը և, մասնավորապես, թողարկվող արտադրանքի որակական մակարդակի բարձրացումը:

Ընդհանուր առմամբ, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության և մարտավարության ընտրությունը դասվում է պետության կողմից լուծման ենթակա առանցքային խնդիրների շարքին և հիմնված է հասարակական զարգացման բազմատարբերակության և այլընտրանքայնության ճանաչման վրա: Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ առավել առաջադիմական ուղղություն է հանդիսանում գիտելիքի, ստեղծագործող և գիտական աշխատանքի, մարդկային ռեսուրսների լիարժեք իրացման, ինչպես նաև տնտեսական և սոցիալական էֆեկտիվության ապահովման վրա հիմնված տնտեսավարման նոր մոդելի մշակումը: Ըստ էության, սա ժամանակակից քաղաքակրթության

զարգացման ընդհանուր վեկտորն է, որը ստիպում է դրանից բխող որոշակի կողմնորոշիչներ մշակել նաև Հայաստանի տնտեսության համար: Ակնհայտ է, որ սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական զարգացման ոլորտներում սեփական դիրքերի ապահովումը պահանջում է, նախ և առաջ, տնտեսության մրցունակության բարձրացում և դրանով պայմանավորված սոցիալ-տնտեսական բազմաբնույթ հիմնախնդիրների լուծում:

Կայուն զարգացման և տնտեսական աճի որակի ապահովման հիմնարար պայմաններից է հանդիսանում ինովացիոն կապիտալը, որն ընդունակ է ստեղծել, յուրացնել և բազմապատկել ինչպես առաջադեմ տեխնոլոգիաները, այնպես էլ կառավարման և տնտեսավարման ժամանակակից մեթոդները: Գիտատար տեխնոլոգիաները արտադրության կազմակերպման, կառավարման, մարքեթինգի, ֆինանսների ոլորտներում հանդիսանում են յուրատեսակ իմպուլս ինովացիաների նկատմամբ, վերջին հաշվով, արմատապես փոխելով հասարակության կենսաապահովման մակարդակը:

Համաշխարհային տնտեսության ժամանակակից զարգացումը և գլոբալիզացիայի խորացումը, հանգեցնելով ազգային տնտեսությունների փոխկապվածության ընդլայնմանը և ապրանքային ու ֆինանսական գլոբալ շուկաների ձևավորմանը, նպաստեցին այդ գործընթացում ներգրավված երկրների տնտեսությունների մրցունակության բարձրացման նկատմամբ հետաքրքրության աճին: Տնտեսության մրցունակության ապահովումը, ըստ էության, կարելի է դասել համապետական նշանակության խնդիրների շարքին, որը սերտորեն կապված է երկրի դինամիկ տնտեսական զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման հետ:

Տնտեսության մրցունակության ապահովման հարցերն առավել հրատապ դարձան հատկապես վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո, երբ դրա ազդեցությամբ պայմանավորված՝ էական փոփոխություններ տեղի ունեցան ինչպես համաշխարհային տնտեսության,այնպես էլ առանձին երկրների տնտեսական զարգացման գործընթացներում: Նման իրավիճակում կարևոր նշանակություն ձեռք բերեց տնտեսության մրցունակության գնահատման մեթոդաբանության վերանայումը, մասնավորապես, դրա վրա ազդող բոլոր գործոնների առավել ագույնս գնահատումը և հաշվառումը:

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ներկափուլում,պայմանավորված երկրի առջև ծառացած մարտահրավերներով, հայրենական արտադրության մրցունակության բարձրացումն ունի առանձնահատուկ նշանակություն: Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր երկրի զարգացման կարևոր նախապայմաններից մեկը կայուն տնտեսական աճի ապահովումն է: Միաժամանակ, առանց տնտեսության մրցունակության բարձրացման՝ հատկապես միջազգային տնտեսական ինտեգրացիայի խորացման և գլոբալիզացիայի ներկա փուլում, տնտեսական աճի ապահովումը բավարար չէ երկրի առջև ծառացած բազմաբնույթ խնդիրների լուծման համար: Այս տեսանկյունից, տնտեսության մրցունակության բարձրացման ուղղությամբ պետական ռազմավարության մշակումն ու իրականացումը պետք է դառնա հիմնական գերակայություններից և առաջնահերթություններից մեկը: Այն, անշուշտ, պետք է նպաստի երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը, հասարակության բարեկեցության մակարդակի բարձրացմանը և մի շարք այլ խնդիրների լուծմանը:Միևնույն ժամանակ,դա ենթադրում է նաև

սոցիալ-տնտեսական հարաբերությունների որակական բարեփոխում, ինչպես նաև պետական կառավարման ինստիտուտների և բիզնեսի փոխգործակցության կատարելագործում: Խնդրի լուծման համար կարևորվում է նաև տնտեսության կառուցվածքային փոփոխությունների իրականացումը, պետության, բիզնեսի և հասարակության արդյունավետ փոխգործակցությունը, պետական կառավարման համակարգի բարեփոխումը և կառավարման նոր և առաջադեմ մեթոդների՝ մասնավորապես պետություն-մասնավոր հատված գործընկերության արդյունավետ ձևերի ներդրումը: Պետական և շուկայական լծակներն արդյունավետ կերպով համադրող մեխանիզմի ստեղծումը կարող է լուրջ դերակատարություն ունենալ տնտեսության մրցունակության բարձրացման գործում՝ ապահովելով պետության և տնտեսավարող սուբյեկտների շահերի և հետաքրքրությունների ներդաշնակեցում, տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացում, երկրի տնտեսական ներուժի առավելագույնս օգտագործում:

Անշուշտ, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացան ներկա փուլում առավել քան կարևորվում է մրցունակության բարձրացման հետ կապված հիմնախնդիրների լուծումը: Տնտեսական բարեփոխումների անցած փուլում այդ ուղղությամբ արձանագրված առաջընթացը գրեթե աննշան է, ինչը վկայում է իրականացված քայլերի ցածր արդյունավետության, բացթողումների և թերացումների մասին: Պայմանավորված հանրապետության տնտեսության կառուցվածքային առանձնահատկություններով, արտահանման խթանումն ունի ռազմավարական նշանակություն: Ակնհայտորեն, դա ենթադրում է այդ ուղղությամբ

համապատասխան պետական քաղաքականության մշակում և իրականացնում, անհրաժեշտ լծակների և գործիքների կիրառում, հայրենական արտադրողների համար արտաքին շուկաներ մուտք գործելու հնարավորությունների ընդլայնում և մի շարք այլ քայլերի իրականացում: Դրանց կարևորությամբ հանդերձ պետք է նշել, որ այդ ուղղությամբ առանցքայինը տնտեսության մրցունակության բարձրացումն ու մրցակցային առավելությունների ստեղծումն է, որոնք անհրաժեշտ նախապայման են հանդիսանում արտաքին շուկաներում ամրապնդվելու և հաջողություններ արձանագրելու համար: Այս ամենով պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով արտաքին տնտեսական ինտեգրացիայի ոլորտում հանրապետության սպասվող հեռանկարները՝ տնտեսության մրցունակության բարձրացումը ձեռք է բերում առանցքային կարևորություն՝ պայմանավորելով այդ ուղղությամբ հետևողական և համալիր քաղաքականության մշակումն ու իրականացումը:

Մրցակցային շուկայի և մրցունակության վրա հիմնված տնտեսության զարգացումը պետք է հանդիսանա հանրապետությունում վարվող տնտեսական քաղաքականության հիմնական գերակայությունը: Ակնհայտ է, որ ներկայումս մրցակցության վիճակը հանրապետությունում հեռու է ցանկալի մակարդակից, ինչի վկայությունն են հանդիսանում մի շարք ապրանքային շուկաներում մենաշնորհային երևույթների և գերիշխող դիրքի չարաշահման երևույթները:

Մեր կարծիքով, հանրապետության տնտեսության մրցունակության ամրապնդումը ինչպես մակրո, այնպես էլ միկրոմակարդակում պետք է իրականացվի երկու հիմնական ուղղություններով.

1. հայրենական արտադրության զարգացման պետական ռազմավարության մշակում և իրականացում,
2. ազգային տնտեսության պետական կարգավորման հայեցակարգի մշակում և իրականացում:

Նշված ուղղությունների գործնական կենսագործման նպատակով նախ և առաջ անհրաժեշտ է հստակ որոշել տնտեսության առանձին ճյուղերի պետական աջակցության սահմանները և միջոցները` հաշվի առնելով հետևյալ սկզբունքների վրա հիմնված պետական քաղաքականության գերակայությունները.

- մրցակցային մեխանիզմի գործունեությանը նվազագույն միջամտություն,
- բնակչության բարեկեցության բարձրացում և նրա պահանջմունքների առավելագույն բավարարում,
- երկրի տնտեսական անվտանգության ապահովում,
- տնտեսության շահութաբերության և արտադրության ծավալների ավելացում:

Միջազգային տնտեսական ինտեգրացման և գլոբալիզացիոն գործընթացների խորացման ներկա պայմաններում ՀՀ տնտեսության մրցունակության ապահովման համար անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել հետևյալ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ.

- առկա տնտեսական ռեսուրսների օգտագործման օպտիմալացում և ռացիոնալացում,

- ռեսուրսային ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում,
- բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացում (սպառման աճ),
- նոր տեխնոլոգիաների և նորարարությունների յուրացման տեմպերի արագացում,
- արտաքին փոխառությունների ռացիոնալ օգտագործում,
- տնտեսություն սեփական վարկային ռեսուրսների ներգրավում,
- ֆիսկալ քաղաքականության միջոցով ձեռնարկատիրության խթանում:

Հետևաբար, ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրների լուծման համար հայրենական արտադրության զարգացման պետական ռազմավարությունը պետք է հիմնված լինի հետևյալ դրույթների վրա.

- ազգային տնտեսության մրցունակ կառուցվածքի ձևավորում: Տնտեսության ճյուղային կառուցվածքում ծառայությունների ոլորտի և գյուղատնտեսության մեծ տեսակարար կշիռը, անշուշտ, վկայում է տնտեսության դեինդուստրալիզացիայի մասին, ինչն, իր հերթին չի նպաստում տնտեսության մրցունակության բարձրացմանը,
- տնտեսության զարգացման տեսանկյունից ռազմավարական նշանակություն ունեցող

ճյուղերի ներդրումային աջակցության իրականացում,

- միջազգային անբարենպաստ մրցակցությունից հայրենական արտադրության պաշտպանության համակարգի ստեղծում՝ հարկային, արտաքին տնտեսական և գնային կարգավորման գործիքների միջոցով:

Նշված ռազմավարության իրականացման համար խիստ կարևոր է զարգացման գերակայությունների հիմնավորվածությունը, որը պետք է կանխորոշի պետության տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները: Ներքին շուկայում մրցակցության զարգացման և հայրենական արտադրության մրցունակության բարձրացման տեսանկյունից հանրապետության տնտեսության զարգացման հիմնական ուղղություն կարող է հանդիսանալ արտահանման ուղղվածություն ունեցող ճյուղերի զարգացումը և ներմուծմանը փոխարինող արտադրությունների խթանումը: Նման ուղղվածությունը հնարավորություն կտա բարձրացնել հայրենական արտադրողների մրցունակության մակարդակը, քանի որ ինչպես արտահանման ծավալների ավելացումը, այնպես էլ ներմուծման փոխարինումը կարող է տեղի ունենալ միայն տեղական արտադրանքի որակի և մրցունակության բարձրացման հաշվին: Անշուշտ, նման խնդրի լուծման համար հայրենական արտադրողները պետք է քայլեր ձեռնարկեն տեխնոլոգիական և գիտատար արտադրությունների որակական մակարդակի բարձրացման ուղղությամբ,

ինչը կնպաստի մրցակցության և մրցակցային առավելությունների ձևավորմանը:

Ներմուծման փոխարինման քաղաքականության շրջանակներում մրցակցության զարգացման և տնտեսության մրցունակության բարձրացման հիմնական ուղղություններ պետք է դառնան հետևյալները:

1. Հանրապետության մրցակցային ներուժի և տնտեսական աճի համար բազա դառնալու ընդունակ գերակա ճյուղերի ընտրություն և դրանց գործունեության և արդյունավետության բարձրացմանն ուղղված մեխանիզմների մշակում: Տնտեսության զարգացման և մրցունակության բարձրացման տեսանկյունից գերակա ճյուղերի ընտրությունը պետք է հիմնվի տնտեսական զարգացման առավել ծանրակշիռ ցուցանիշների և ճյուղի ռեսուրսային ներուժի վրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ճյուղերին պետության կողմից նպատակամետ աջակցությունը կարող է ապահովել նշանակալի արդյունքներ: Մրցունակության բարձրացման և մրցակցության զարգացման տեսանկյունից գերակա ճյուղերի ընտրության չափորոշիչների շարքին կարելի է դասել ռեսուրսային ներուժի առկայությունը, թողարկվող արտադրանքի նկատմամբ պահանջարկը, ճյուղային շուկաներում մրցակցության ինտենսիվության աստիճանը, ճյուղի

արտադրանքի արտահանման ծավալի հարաբերությունը ՀՆԱ-ին, ներդրումային գրավչության աստիճանը և այլն: Նման չափորոշիչների ընտրությունը պայմանավորված է հետևյալով. ռեսուրսային ներուժի առկայությունը նշանակում է տվյալ ճյուղում մրցակցային ռեսուրսների որոշակի մակարդակի առկայություն, ինչից հետևում է, որ ինչքան մեծ է դրանց ծավալը, այնքան բարձր են մրցակցային առավելությունները: Բացի այդ, այս չափորոշիչն ապահովում է ճյուղի և արտադրության մրցունակության նվազագույն մակարդակ, քանի որ հնարավորություն է տալիս կախվածության մեջ չլինել արտաքին գործոններից և պատրաստի արտադրանքի գնային քաղաքականության մեջ ունենալ ավելի մեծ ազատություն: Սակայն, ինչպես արդեն բազմիցս նշվեց, արտադրանքի մրցունակությունը ցույց է տալիս դրա պահանջվածության աստիճանը, ինչի պատճառով թողարկվող արտադրանքի նկատմամբ պահանջարկը պայմանավորում է տվյալ ճյուղի մրցունակության աստիճանը: Բնականաբար, գերակա ճյուղերի շարքին պետք է դասվեն առավել հեռանկարայինները և պահանջվածները, հակառակ դեպքում պետության կողմից աջակցության որևէ ձև եղանակ չի տա ցանկալի արդյունքներ: Ճյուղային շուկայում մրցակցության ինտենսիվությունը բնութագրում է դրա զարգացման հեռանկարները և մրցունակության բարձրացման հնարավորությունները: Թողարկվող

արտադրանքի ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ բնութագրում է համաշխարհային շուկայում տվյալ ճյուղի մրցունակության աստիճանը: Ընդ որում, այս դեպքում կարևոր է նաև արտահանման կառուցվածքը: Հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում այն հիմնականում կրում է հումքային բնույթ, որը լրացուցիչ արտարժութային մուտքեր է ապահովում, ինչը հատկապես ֆինանսական սուղ հնարավորությունների պայմաններում լրացուցիչ ներդրումների իրականացման կարևոր աղբյուր է հանդիսանում: Ներդրումային գրավչության աստիճանը պայմանավորված է տվյալ ճյուղի շահութաբերության մակարդակով: Այն հանդիսանում է ինտեգրալ ցուցանիշ, որը հիմնված է վերը թվարկված 4 չափորոշիչների գործողության և զարգացման աստիճանի վրա և ձևավորում է լրացուցիչ մրցակցային առավելություններ:

2. Ռեսուրսային ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում: Հանրապետության ռեսուրսային ապահովվածության ցածր մակարդակի պայմաններում հատկապես կարևոր նշանակություն է ստանում դրանց օգտագործման արդյունավետության բարձրացումը: Իհարկե անցումային տնտեսությամբ երկրներում, երբ մրցակցային առավելությունների ձևավորման այլ

աղբյուրները բացակայում են, առկա ռեսուրսային ներուժի հիման վրա տնտեսության զարգացումը որոշակիորեն բնական գործընթաց է: Սակայն երկարաժամկետ զարգացումը պահանջում է մրցակցային առավելությունների համար անհրաժեշտ ռեսուրսների ձևավորում, որը պետք է դառնա պետական քաղաքականության հիմնական ուղղություններից: Ռեսուրսային ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացումը պետք է հիմնվի հետևյալ սկզբունքների վրա.

- հանրապետությունում առկա բոլոր հումքային ռեսուրսների լայնամասշտաբ և ամբողջական օգտագործում,
- աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործում,
- գիտական կադրերի պատրաստում, գիտատար արտադրությունների զարգացում, գիտություն-տնտեսություն համագործակցության խորացում:

Ամփոփելով՝ հարկ ենք համարում նշել, որ հանրապետության տնտեսության մրցունակության ապահովման գործում որպես առաջատար ճյուղ կարելի է դիտարկել լեռնահանքային արդյունաբերությունը, որն ունի վերը թվարկված բոլոր անհրաժեշտ պայմանները համաշխարհային շուկայում առաջատար դիրքեր զբաղեցնելու և երկրի տնտեսության զարգացման առումով շարժիչ

ում հանդիսանալու համար: Նշված հարցերին է նվիրված աշխատանքի հաջորդ բաժինը:

## 3.2. Լեռնահանքային արդյունաբերության զարգացման և մրցունակության ապահովման հիմնական մոտեցումները

Ցանկացած պետության տնտեսության զարգացման գործում առանցքային նշանակություն ունի արդյունաբերության ոլորտը, որն իր արդյունավետ կենսագործունեությամբ ստեղծում է նախադրյալներ հասարակության և երկրի առջև ծառացած բազմաբնույթ հիմնախնդիրների լուծման համար:Հայաստանի Հանրապետությունը,ունենալով արդյունաբերական զարգացման որոշակի ավանդույթներ,անկախության ձեռքբերումից հետո, օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբեր պատճառներով պայմանավորված,կանգնեց համակարգային բնույթի հիմնախնդիրների առջև:Վերջիններիս լուծմամբ էր մեծապես պայմանավորված ոչ միայն տվյալ ոլորտի կայուն զարգացումը, այլ նաև տնտեսական համակարգի բնականոն գործունեության ապահովումը:Ձեռնարկված քայլերի և իրականացված քաղաքականության արդյունքում ներկայումս արդյունաբերության ոլորտը խիստ համեստ մասնակցություն ունի համախառն ներքին արդյունքի ձևավորման հարցում՝ չնայած իր ունեցած ներուժային հնարավորություններին: Մասնավորապես վերջին տարիներին հանրապետության արդյունաբերության ոլորտի

մասնակցությունը ՀՆԱ-ի ծավալում հիմնականում կրել է կայուն բնույթ և միջին հաշվով կազմել է մոտ 16 տոկոս:[61]




Գծապատկեր 5. Տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ում 2012-2016 թվականներին[62]

Հարկ է նշել, որ արդյունաբերության մեջ իր ուրույն և առանցքային դերն ունի հանքարդյունաբերության ոլորտը: Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին ներկայացնում է որոշակի ճյուղերի խումբ, որոնք միմյանց հետ կապված են հանքային հանածոների արդյունահանման և առաջնային վերամշակման միջոցով: Համաշխարհային մասշտաբով կարելի է առանձնացնել 9 հիմնական լեռնահանքային

[61] Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջե: http://www.parliament.am/draft_docs5/K-862_arajarkutyunnerov/1.2.Uxerc.Mas.1b.pdf
[62] Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջե http://www.parliament.am/draft_docs5/K-862_arajarkutyunnerov/1.2.Uxerc.Mas.1b.pdf

արդյունաբերության տարածաշրջաններ՝ Հյուսիսային Ամերիկա, Լատինական Ամերիկա, Արևմտյան Եվրոպա, ԱՊՀ, Չինաստան, Հյուսիսային և Հարավային Ասիա, Արևմտյան Աֆրիկա, ՀԱՀ, Ավստրալիա: Ընդ որում, որոշ երկրների՝ Կանադայի, Ավստրալիայի, ՀԱՀ-ի, Բրազիլիայի և Հնդկաստանի համար հանքարդյունաբերությունը հանդիսանում է միջազգայնորեն մասնագիտացված ճյուղ: Անվիճելի է այն փաստը, որ հանքարդյունաբերությունը կենսական նշանակություն ունի ոչ միայն տնտեսության, այլ նաև հասարակության բնականոն կենսագործունեության ապահովման հարցում: Այն տնտեսությանն ապահովում են անհրաժեշտ միջոցներով, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել տնտեսության տարբեր ճյուղերի գործունեությունը: Այս առումով, հանքարդյունաբերության զարգացումը կարևոր նշանակություն կարող է ունենալ ազգային տնտեսության մրցունակության բարձրացման գործում:

Հայաստանի Հանրապետության արդյունաբերության կառուցվածքում հանքարդյունաբերության դերը բավականաչափ մեծ է, ինչի մասին են վկայում աղյուսակ 11-ի տվյալները:

Աղյուսակ 11[63]

Արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ տնտեսական գործունեության տեսակների (ընթացիկ գներով, մլրդ դրամ)

[63] ՀՀ վիճակագրական տարեգիրք 2016: http://www.armstat.am/file/doc/99501038.pdf

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|---|---|---|---|---|---|
| Ամբողջ արդյունաբերությունը | 998.9 | 1121.9 | 1242.1 | 1291.3 | 1342.7 |
| Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում | 170.2 | 193.3 | 196.8 | 193.1 | 220.6 |
| *մետաղական հանքաքարի արդյունահանում* | *165.6* | *187.4* | *191.3* | *188.2* | 215.5 |
| *հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր* | *4.6* | *5.9* | *5.4* | *4.9* | 5.1 |

2015 թվականի տվյալներով արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը հանրապետությունում կազմել է 1342.7 մլրդ դրամ, որից հանքարդյունաբերության բաժինը կազմել է 220.7 մլրդ դրամ: Ընդ որում, վերջինիս ծավալը 2011 թվականի համեմատությամբ աճել է մոտ 1.3 անգամ: Իր հերթին, հանքարդյունաբերության կառուցվածքում հիմնական բաժինը ընկնում է մետաղական հանքաքարի արդյունահանմանը, որի ծավալները 2015 թվականին կազմել են 215.5 մլրդ դրամ:

Տոկոսային արտահայտությամբ արդյունաբերության կառուցվածքում հանաարդյունաբերությունը 2015 թվականի դրությամբ կազմել է 16.4 տոկոս: 2011 թվականի համեմատությամբ այն նվազել է 0.6 տոկոսային կետով, սակայն 2014 թվականի համեմատությամբ աճել է 1.4 տոկոսային կետով (աղյուսակ 12):

Աղյուսակ 12[64]

Արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ տնտեսական գործունեության տեսակների (ընթացիկ գներով, մլրդ դրամ)

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|---|---|---|---|---|---|
| Ամբողջ արդյունաբերությունը | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում | 17.0 | 17.2 | 15.8 | 15.0 | 16.4 |
| *մետաղական հանքաքարի արդյունահանում* | *97.3* | *96.9* | *97.2* | *97.5* | *97.7* |
| *հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր* | *2.7* | *3.1* | *2.8* | *2.5* | *2.3* |

Հանքարդյունաբերության կառուցվածքում մետաղական հանքաքարի արդյունահանման բաժինը 2015 թվականին կազմել է 97.7 տոկոս, իսկ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղերի բաժինը՝ 2.3 տոկոս:

Ինչ վերաբերում է ոլորտում գործող արդյունաբերական կազմակերպությունների թվաքանակին, ապա հանրապետությունում պատկերը հետևյալն է: 2015 թվականին հանրապետության

[64] ՀՀ վիճակագրական տարեգիրք 2016: http://www.armstat.am/file/doc/99501038.pdf

արդյունաբերության ոլորտում գործունեություն է ծավալել ուրջ 2802 կազմակերպություն, որոնցից 72-ը հանքարդյունաբերության ոլորտում (աղյուսակ 13):

Աղյուսակ 13[65]

Արդյունաբերական կազմակերպությունների քանակն ըստ տնտեսական գործունեության տեսակների

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|---|---|---|---|---|---|
| Ամբողջ արդյունաբերությունը | 2648 | 2587 | 2726 | 2741 | 2802 |
| Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում | 65 | 71 | 75 | 71 | 72 |
| *մետաղական հանքաքարի արդյունահանում* | *7* | *8* | *9* | *9* | *9* |
| *հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր* | *58* | *63* | *66* | *62* | *63* |

Հատկանշական է այն հանգամանքը, որ ընդամենը 9 կազմակերպություն է զբաղվել մետաղական հանքաքարի արդյունահանմամբ, իսկ 63-ը գործել են հանքագործական արդյունաբերությունում և բացահանքերի շահագործման այլ ճյուղերում:

[65] ՀՀ վիճակագրական տարեգիրք 2016: http://www.armstat.am/file/doc/99501038.pdf

Ինչպես արդյունաբերության, այնպես էլ հանքարդյունաբերության ոլորտը հանրապետությունում լուրջ դերակատարում ունի զբաղվածության ապահովման առումով (աղյուսակ 14):[66] 2010-2015 թվականներին հանրապետության արդյունաբերության ոլորտում զբաղվածների թվաքանակը միջին հաշվով կազմել է տարեկան մոտ 83000 մարդ: 2015 թվականին հանքարդյունաբերության ոլորտում աշխատել է 9100 մարդ, որից 8300-ը` մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտում:

Աղյուսակ 14[67]

Արդյունաբերական անձնակազմի միջին տարեկան թվաքանակն ըստ տնտեսական գործունեության տեսակների (հազար)

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|---|---|---|---|---|---|
| Ամբողջ արդյունաբերությունը | 83.7 | 83.8 | 83.9 | 83.8 | 82.6 |
| Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում | 7.4 | 7.9 | 8.0 | 7.9 | 9.1 |
| *մետաղական հանքաքարի արդյունահանում* | *6.3* | *6.8* | *7.0* | *7.0* | *8.3* |
| *հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր* | *1.1* | *1.1* | *1.0* | *0.9* | *0.8* |

[66] ՀՀ վիճակագրական տարեգիրք 2016: http://www.armstat.am/file/doc/99501038.pdf
[67] ՀՀ վիճակագրական տարեգիրք 2016: http://www.armstat.am/file/doc/99501038.pdf

Տարածաշրջանային բաշխվածության առումով հանքարդյունաբերության ոլորտը հիմնականում կենտրոնացած է Սյունիքի, Գեղարքունիքի և Լոռու մարզերում: Մասնավորապես 2015 թվականի դրությամբ Սյունիքի մարզում գործող արդյունաբերական ձեռնարկությունների 81.9 տոկոսը կազմել են հանքարդյունաբերության ոլորտի ձեռնարկությունները, իսկ Գեղարքունիքի և Լոռու մարզերում նույն ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 43.6 և 45.8 տոկոս (աղյուսակ 15):

Աղյուսակ 15[68]

Մարզերի և Երևանի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության տեսակների 2015 թվականին

| | Ամբողջ արդյունաբերությունը | Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում |
|---|---|---|
| ՀՀ | 100 | 16.4 |
| Երևան | 100 | 0.4 |
| Արագածոտն | 100 | 0.7 |
| Արարատ | 100 | 0.5 |
| Արմավիր | 100 | 0.3 |
| Գեղարքունիք | 100 | 43.6 |
| Լոռի | 100 | 45.8 |

[68] ՀՀ վիճակագրական տարեգիրք 2016: http://www.armstat.am/file/doc/99501038.pdf

| | | |
|---|---|---|
| Կոտայք | 100 | 1.9 |
| Շիրակ | 100 | 0.1 |
| Սյունիք | 100 | 81.9 |
| Վայոց Ձոր | 100 | 0.6 |
| Տավուշ | 100 | 3.7 |

Ինչպես նկատում ենք վերը ներկայացված վիճակագրական ցուցանիշներից, Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտն առանցքային նշանակություն ունի տնտեսության մեջ: Այդ մասին է վկայում նաև այն, որ արտահանվող նյութերի առնվազն կեսը բաժին է ընկնում հանքային խտանյութերին և մետաղներին: Հանրապետությունում ներկայումս հաշվառված է պինդ օգտակար հանածոների ավելի քան 670 հանքավայր,որոնցից շահագործվում են 400-ը:[69]

Հայաստանի Հանրապետության ընդերքը հարուստ է երկաթով,պղնձով,մոլիբդենով,կապարով, ցինկով, ոսկով, արծաթով, ծարիրով, ալյումինով, ինչպես նաև հազվագյուտ ու ցրված մետաղներով: Մասնավորապես, մետաղական օգտակար հանածոների թվում առկա են 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 14 ոսկու և ոսկի-բազմամետաղային,2 բազմամետաղային, 2 երկաթահանքային և 1 ալյումինահանքային հանքավայր:[70] Լեռնամետալուրգիական համալիրի համար վերջնական արտադրանք են հանդիսանում հիմնականում խտանյութերը (պղնձի, մոլիբդենի, ցինկի, որոշ դեպքերում՝ ոսկու և արծաթի բարձր պարունակությամբ), ինչը թույլ չի տալիս

[69] http://www.minenergy.am/page/472
[70] http://www.minenergy.am/page/472

ամբողջովին օգտագործել հանքավայրերի տնտեսական ներուժը: Այս առումով, արդյունահանվող օգտակար հանածոների վերամշակման արտադրության կազմակերպումը փակ և ավարտուն ցիկլերով՝ հանույթից մինչև պատրաստի արտադրանքի ստեղծումը, հնարավորություն կտա ոչ միայն լիարժեք օգտագործել հանքավայրերի ներուժը, այլ նաև նպաստել ՀՆԱ-ի աճին: Ի դեպ, հանրապետությունում առկա են նաև օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում առաջացող թափոնների կուտակման 15 պոչամբարներ, որոնց ծավալները անցնում են մի քանի մլն.խոր.մ-ից և զբաղեցնում են մոտ 700 հա ընդհանուր մակերես: Դրանք չեն օգտագործվում, չնայած պարունակում են մեծ քանակությամբ բազմամետաղներ:[71] Հայաստանի Հանրապետությունում մետաղական հանքավայրերի մեծ մասը շահագործման են հանձնվել Հայաստանի՝ ԽՍՀՄ կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածում, և ժամանակի տեխնոլոգիական սահմանափակումներից ելնելով՝ այդ հանքավայրերը շահագործող ընկերությունները ընդերքից արդյունահանել և հանքամարմնից կարողացել են կորզել ավելի քիչ քանակի մետաղ: Արդյունքում բավական մեծ քանակությամբ օգտակար բաղադրիչներ՝ արտադրական թափոնների հետ միասին նետվել են պոչամբարներ, որտեղ էլ մինչ այսօր կուտակված են: Մեր կարծիքով, հանրապետության տնտեսական զարգացման ներկա

---

[71] http://www.minenergy.am/page/472

փուլում հանքարդյունաբերության ոլորտի զարգացման առումով կարևոր նշանակություն կարող է ունենալ գոյություն ունեցող պոչամբարների շահագործման ուղղությամբ համապատասխան ծրագրերի մշակումն ու իրականացումը, որը կնպաստի մեծածավալ ներդրումների ներգրավմանը, բնապահպանական մի շարք խնդիրների լուծմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և տնտեսության զարգացմանը: Ըստ էության, պոչամբարն իրենից ներկայացնում է բաց հանքավայր, որն ավելի հեշտ է շահագործվում և ունի կարևոր տնտեսական նշանակություն: Հանրապետությունում ներկայումս գոյություն ունեցող պոչամբարների առումով գոյություն ունեն լուրջ բնապահպանական խնդիրներ, որոնք խիստ բացասաբար են անդրադառնում նաև տվյալ բնակավայրի բնակիչների առողջության վրա: Նման խնդիր առկա է հանքարդյունաբերության ոլորտ ունեցող տարբեր երկրներում, որոնք որոշակի մոտեցումներ են մշակում տվյալ հիմնախնդրի լուծման համար:

Խնդիրը նաև կայանում է նրանում, որ հանրապետությունում հանքարդյունաբերության ոլորտում լցակույտերի երկրորդային մշակման պրակտիկա գոյություն չունի: Ըստ էության, ներկայումս դրանով զբաղվում է հանքարդյունահանողը՝ իր հնարավորությունների սահմաններում՝ հանքանյութից կորզելով առավելագույնը: Այս առումով, պետք է կարևորել և համապատասխան մեխանիզմներ մշակել ոչ անմիջական արդյունահանողի կողմից

հանքանյութի երկրորդային մշակման համար: Դա հնարավորություն կտա ստանալ բոլորովին այլ էլեմենտներ և, վերջին հաշվով, ապահովել լցակույտի համալիր և ամբողջական մշակում: Նման ծրագիրը կարող է լուրջ սոցիալական նշանակություն ունենալ՝ հատկապես նոր աշխատատեղերի ստեղծման, փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման, սահմանամերձ տարածաշրջանների զարգացման հետ կապված:

Հանրապետության տնտեսական զարգացման տեսանկյունից, մեր կարծիքով, կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև պղնձի խտանյութից մաքուր պղնձի ստացումը, որը կապված է որոշակի ներդրումների հետ: Այս առումով, գտնում ենք, որ հանրապետությունում պղնձաձուլարանի կառուցումը հնարավորություն կտա ոչ միայն տարածաշրջանային, այլ նաև միջազգային տնտեսական ինտեգրացման շրջանակներում լուրջ մրցակցային առավելություններ ձեռք բերել և, դրանով իսկ, որոշակի նախադրյալներ ստեղծել երկրի տնտեսական զարգացման համար:

Հանրապետությունն առաջատար տեղ է գրավում նաև ոչ մետաղական հանքային պաշարների հարստությամբ ու բազմազանությամբ: Հատուկ արժեք ու նշանակություն են ներկայացնում տուֆերը, պեռլիտները, պեմզաները, ցեոլիտները, հրաբխային խարամները, բազալտները, գրանիտները, նեֆելինային սիենիտները, մարմարները և այլն: Ընդ որում, ամենաորակյալ և ամենաշատ փքվող լեռնային ապարների պաշարները աշխարհում

գտնվում են Հայաստանում: Մասնավորապես, պեղլիտի հաստատված պաշարները կազմում են 150 մլն խոր.մ, իսկ կանխատեսվողը՝ մինչև 3 մլրդ խոր.մ-ի: Հանրապետությունում առկա են 100-ից ավելի բազալտի, անդեզիտի հանքավայրեր, որոնցից մի քանիսը միակն են իրենց բաղադրությամբ:[72]

Հանրապետությունում ներկայումս գործում են շուրջ 20 հարստացուցիչ ֆաբրիկա և մետալուրգիական գործարան, որոնք հիմնականում վերամշակում են տեղական հանքային հումքը: Ոլորտում գործում են աշխարհի տարբեր երկրներում լեռնամետալուգիական գործունեություն ծավալող աշխարհահռչակ մի շարք միջազգային (գերմանական, կանադական, ավստրալական, հնդկական, ամերիկյան, ռուսական և այլն) ընկերությունները, ինչը պայմանավորված է ՀՀ ընդերքում օգտակար հանածոների զգալի պաշարների և համապատասխան ենթակառուցվածքների առկայությամբ:

Հանքաքարի պաշարներով աշխարհի խոշորներից և նախկին ԽՍՀՄ երկրներից խոշորագույնն է Քաջարանի հանքավայրը, որում առկա մոլիբդենի պաշարները կազմում են մոլիբդենի համաշխարհային պաշարների մոտ 7%-ը: Այն հետախուզված պաշարներով ապահովված է ավելի քան 100, իսկ կանխատեսումային ռեսուրսների հաշվառմամբ՝ մոտ 200 տարի:[73] Վերջինիս

---

[72] http://www.minenergy.am/page/472

[73] Անդրոյան Դ., Բալումյան Գ. «Մասնագիտության ներածություն»:Ձեռնարկություններ տնտեսագիտություն և կառավարում (Լեռնամետալուրգիայի ճյուղում): Ուսումնատեղեկատվական ձեռնարկ: Երևան: Ճարտարագետ, 2009թ. էջ 77:

շահագործում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, որի հիմնական արտադրանքը պղնձի (28-30% պարունակությամբ) և մոլիբդենի (50% պարունակությամբ) խտանյութերն են:[74] Նշվածներից բացի, հանքաքարում կան բավականաչափ մեծ թվով այլ ուղեկից բաղադրիչներ (ոսկի, սելեն, թելուր, ծծումբ, ռենիում, արծաթ և այլն): Մոլիբդենի խտանյութը ամբողջովին վերամշակվում է հանրապետությունում «Մաքուր Երկաթ» և «Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշըն» ընկերություններում, իսկ պղնձի խտանյութի մի մասը իրացվում է ԷՅ Սի Փի ընկերությանը, մյուս մասը` արտահանվում Եվրոպա: Ընկերությունը վերջին տարիներին հանրապետության խոշոր հարկատուներից է և 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին վճարված հարկերի ծավալի հաշվարկով հանրապետության 1000 խոշոր հարկատուների ցանկում զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը:[75]

Հանրապետության լեռնամետալուրգիական մեկ այլ կարևոր օբյեկտ է Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը: Վերջինիս տարեկան արտադրողականությունը ըստ հանքաքարի կազմում է 2-2,2մլն տոննա, իսկ արտադրվող պղնձի և մոլիբդենի խտանյութերի համար հումք են հանդիսանում պղնձամոլիբդենային հանքավայրի

---

74 Անդրոյան Դ., Բալումյան Գ. «Մասնագիտության ներածություն»: Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (Լեռնամետալուրգիայի ճյուղում): Ուսումնատեղեկատվական ձեռնարկ: Երևան: Ճարտարագետ, 2009թ. էջ 77:

75 Ցանկ` 2015թ. հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով առաջին 1000 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից վճարված հարկերի և տուրքերի մեծությունների: http://www.taxservice.am

հանքաքարը:[76] 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին վճարված հարկերի ծավալի հաշվարկով 1000 խոշոր հարկատուների ցանկում ընկերությունը զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը:[77]

Armenian Copper Programme «ACP» ՓԲԸ-ն գործում 1997 թվականից, որին էլ սեփականության իրավունքով պատկանում է Հարավային Կովկասի միակ պղնձաձուլարանը: Բացի պղնձի արտադրությունից, ընկերությունը ձեռնամուխ է եղել Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի լրահետախուզման և շահագործման աշխատանքներին: Պաշարների մեծությամբ Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրը Հայաստանում երկրորդն է՝ Քաջարանի հանքավայրից հետո: 1972 թվականից այստեղ իրականացվել են մեծածավալ երկրաբանահետախուզական աշխատանքներ, որոնց արդյունքում 1991թ. հաստատվել է շուրջ 450 մլն. տոննա հանքաքարի պաշար՝ 1.6 մլն.տոննա (0.355%) պղնձի և 99 հազար տոննա (0.022%) մոլիբդենի պարունակությամբ:[78] Ընկերությունը աշխատում և արտադրանք է տալիս 2015թ. դեկտեմբերի 20-ից: Հանքավայրի շահագործման ծրագրով նախատեսված է առաջին փուլում տարեկան 7 միլիոն տոննա հանքաքարի արդյունահանում և վերամշակում, երկրորդում՝ 12մլն. և երրորդում՝ 15մլն.:

---

76 Անդրոյան Դ., Բալումյան Գ. «Մասնագիտության ներածություն»:Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (Լեռնամետալուրգիայի ճյուղում): Ուսումնատեղեկատվական ձեռնարկ: Երևան: Ճարտարագետ, 2009թ. էջ 79:

77 Ցանկ՝ 2015թ. հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով առաջին 1000 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից վճարված հարկերի և տուրքերի մեծությունների: http://www.taxservice.am

78 Անդրոյան Դ., Բալումյան Գ. «Մասնագիտության ներածություն»:Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (Լեռնամետալուրգիայի ճյուղում): Ուսումնատեղեկատվական ձեռնարկ: Երևան: Ճարտարագետ, 2009թ. էջ 83:

Արտադրության առաջին փուլում, միջինացված ցուցանիշներով, տարեկան արտադրվում է մոտ 64 հազար տոննա պղնձի խտանյութ, պղնձի մոտ 31% (մոտ 19.7 հազար տոննա) պարունակությամբ և մոտ 760 տոննա մոլիբդենի խտանյութ՝ մոլիբդենի մոտ 50% (մոտ 380 տոննա) պարունակությամբ: 350 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրումների արդյունքում տարեկան արտադրվում է շուրջ 161 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ պղնձի և մոլիբդենի խտանյութեր (պղնձի մեկ տոննայի գինը 5 հազ. ԱՄՆ դոլար ընդունելու դեպքում):[79]

Ներկայացված վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ հանրապետության հանքարդյունաբերության ոլորտում գործող ընկերությունները որոշակիորեն պայմանավորում են երկրի տնտեսական հզորությունը և արդյունավետ կառավարման դեպքում կարող են լուրջ դեր ունենալ միջազգային տնտեսական զարգացման գործում՝ նպաստելով ազգային տնտեսության մրցունակության բարձրացմանը: Դրանով հանդերձ, մեր գնահատմամբ, հիմնականում առկա ռեսուրսների ոչ ռացիոնալ կառավարման հետևանքով դեռևս հնարավոր չէ ապահովել զգալի առաջընթաց այդ ուղղությամբ:

Հանրապետության հանքարդյունաբերության ոլորտի զարգացման առումով ներկայումս գոյություն ունեցող խնդիրներից մեկն այն է, որ արդյունահանված հանքաքարի որոշակի մասի վերամշակումից հետո ստացվող ապրանքային

---

[79] http://vm.am/uploaded/Documents/Teghout_FS_2015-ARM.pdf

խտանյութն ուղարկվում է կա՛մ պղնձաձուլարան, կա՛մ արտասահմանյան գնորդներին՝ հետագա վերամշակման նպատակով: Հատկանշական է, որ միջազգային ստանդարտներով ապրանքային խտանյութում պղնձի պարունակությունը տատանվում է 23-27 տոկոսի սահմաններում: Այսինքն՝ միջին հաշվով յուրաքանչյուր 1000 տոննա վաճառված մետաղական խտանյութի դիմաց արդյունահանող կազմակերպությունը կարող էր ստանալ լրացուցիչ 250 տոննայի հաշվարկով շահույթ: Հանրապետությունում գործող միակ մետաղաձուլական գործարանը Ալավերդու պղնձաձուլարանն է, որտեղ վերամշակված հանքաքարը՝ խտանյութը, անցնում է մշակման ևս մեկ փուլ: Արդյունքում գործարանն արտադրում է 96%-անոց ձուլակտորներ (սև պղինձ), որը շուկայում ունի իր գինը (ոչ շատ բարձր): Մեր կարծիքով, հանրապետությունում պղնձի ռաֆինացման գործարանի կառուցումը հնարավորություն կտա միջազգային շուկայում սև պղինձը ցածր գներով վաճառելու փոխարեն այն վերամշակել և ստանալ վերջնական արտադրանք (մետաղալար, թիթեղներ, մետաղական այլ արտադրանք), որը շուկայում կիրացվի մի քանի անգամ ավելի բարձր գներով: Բացի այդ, ռաֆինացման արդյունքում պղնձից բացի հնարավոր կդառնա ստանալ նաև տարբեր թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղներ: Մասնավորապես, 1 տոննա սև պղնձի ռաֆինացումից միջին հաշվով ստացվում է

արծաթ (1000-2000գ), ոսկի (30-100գ), սելեն, թելուր և այլ մետաղներ:[80]

Ակնհայտ է տնտեսական զարգացման ներկա փուլում հանրապետությունում պղնձի ռաֆինացման գործարանի կառուցման անհրաժեշտությունը և հրատապությունը, որն ընդհանուր տնտեսության վրա կունենա շղթայական էֆեկտ: Մասնավորապես, նման խնդրի լուծումը կհանգեցնի ոչ միայն համապատասխան տնտեսավարող սուբյեկտների և պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, այլ նաև մի շարք փոքր ձեռնարկությունների ստեղծմանը, որոնք պղնձի ռաֆինացման գործարանին կապահովեն անհրաժեշտ արագամաշ և շրջանառու միջոցներով: Որպես այդ ամենի հետևանք կարող ենք արձանագրել համաշխարհային շուկայում հանրապետության տնտեսության մրցունակության բարձրացումը:

[80] Ю.В.Баймаков, А.И.Журин §Электролиз в гидрометаллургии¦. Москва. Государственное научно-техническое издательство литературы по черной и цветной металлургии, 1963г., стр. 143.

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա կարելի է մի շարք հետևություններ անել ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման հիմնական ուղղությունների վերաբերյալ: Իրականացված վերլուծությունների և ուսումնասիրությունների ամփոփ արդյունքները արտացոլված են հետևյալ առավել հատկանշական եզրակացություններում:

1. Միջազգային տնտեսական ինտեգրացիոն գործընթացների խորացումը և գլոբալ շուկաների ձևավորումը լուրջ հիմնախնդիրներ են ստեղծում ազգային տնտեսությունների համար՝ դիմագրավելու նշված գործոններով պայմանավորված մարտահրավերներին: Դրանց շարքում առանձնանում է հատկապես ազգային տնտեսության մրցունակության ապահովումը, ինչով էլ պայմանավորված է տարբեր երկրների կողմից երկարաժամկետ տնտեսական ռազմավարության ուղղությունների շարքում որպես առանցքային խնդիր տնտեսության մրցունակության բարձրացման կարևորումը: Վերջին տարիներին ազգային տնտեսության մրցունակության ապահովումը դարձել է ոչ միայն զարգացած, այլ նաև զարգացող շատ երկրների տնտեսական քաղաքականության հիմնական թիրախներից մեկը: Համաշխարհային շուկաներում մրցակցության խորացումը,

ֆինանսատնտեսական ոչ կայուն իրավիճակը և մի շարք այլ բացասական գործոններ պետություններին ստիպում են առկա մրցակցային առավելությունների օգտագործման համար փնտրել կայուն զարգացման նոր ուղիներ, ինչպես նաև մշակել մեխանիզմներ օտարերկրյա ներդրումների և տեխնոլոգիաների ներգրավման միջոցով արտադրության արդիականացման և մրցունակ արտադրանքի թողարկման նպատակով:

2. Ազգային տնտեսության մրցունակությունն իրենից ներկայացնում է բազմամակարդակ և բազմագործոն հասկացություն, ինչով էլ պայմանավորված է դրա համընդհանուր սահմանման բացակայությունը: Այս առումով, մրցունակության վերաբերյալ սահմանումները կարելի է դասակարգել երեք խմբի: Առաջին՝ մրցունակությունը երկրի ընդունակությունն է թողարկելու ապրանքներ և ծառայություններ, որոնք ի վիճակի կլինեն հաջողությամբ մրցակցելու միջազգային շուկաներում: Երկրորդ՝ մրցունակությունը երկրի ընդունակությունն է մշտապես ավելացնելու սեփական բաժինը համաշխարհային շուկայում: Երրորդ՝ տնտեսության մրցունակության հիմքում ընկած է համեմատական շահութաբերության սկզբունքը, այսինքն՝ այն որոշվում է որպես միջազգային շուկայական գների և արտադրության ու իրացման համար կատարվող ծախսերի տարբերություն: Ընդհանրացնելով դրանք՝ կարելի է նշել, որ

տնտեսության մրցունակության տակ պետք է հասկանալ ազգային տնտեսության և ֆինանսական համակարգի կայունությունը արտաքին ներգործության նկատմամբ:

3. Ազգային տնտեսությունը հանդիսանում է համաշխարհային տնտեսության անբաժանելի բաղկացուցիչներից և կարող է զարգացնել իր մրցակցային առավելություններն այն դեպքում, երբ իր տնտեսական ցուցանիշները համապատասխանում են համաշխարհային տնտեսության զարգացման վեկտորին: Այլ կերպ ասած, ազգային տնտեսության մրցունակության ապահովումը հնարավոր է միայն համաշխարհային տնտեսության զարգացման միտումները հաշվի առնելով՝ մրցակցային ռազմավարության մշակման և իրականացման դեպքում: Տնտեսության մրցունակության գնահատումը, պայմանավորված տվյալ տնտեսագիտական կատեգորիայի բազմաբովանդակությամբ, չափազանց կարևոր է: Ընդհանուր առմամբ, դա իրականացվում է ինչպես քանակապես, այնպես էլ որակապես: Սակայն առաջինի դեպքում ապահովվում է հստակության ավելի բարձր մակարդակ, իսկ երկրորդի դեպքում պատկերն ավելի ընդհանրական է:

4. Տնտեսության մրցունակության մեկնաբանությունը պետք է հիմնված լինի տվյալ երևույթի հետևյալ ասպեկտների համակողմանի դիտարկման վրա: Առաջին՝ երկրի ազգային մրցունակությունը տնտեսական համակարգի դինամիկ և անընդհատ զարգացումն

արտացոլող օբյեկտիվ գործընթաց է: Հետևաբար, մրցունակությունը պահանջում է պետական քաղաքականության շրջանակներում համապատասխան միջոցառումների և քայլերի իրականացում՝ տնտեսական զարգացման ձեռքբերված մակարդակի պահպանման և բարձրացման համար: Երկրորդ՝ տնտեսության մրցունակությունն ուղղակիորեն կախված է հայրենական ընկերությունների և նրանց կողմից թողարկվող և տեղական ու միջազգային շուկաներում պահանջարկ ունեցող ապրանքների և ծառայությունների մրցունակությունից: Երրորդ՝ տնտեսության մրցունակությունը հանդես է գալիս որպես տնտեսական քաղաքականության հիմնարար նպատակ և կարևոր գործիք բնակչության կենսամակարդակի բարձրացման և հասարակական բարեկեցության ապահովման համար: Չորրորդ՝ ազգային տնտեսության մրցունակության բարձրացումը մեծապես հիմնված է երկրի ինովացիոն հնարավորությունների բազայի, գիտատեխնիկական ներուժի, ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա:

5. Մրցունակությունը կախված է ոչ միայն երկրի տնտեսական ներուժից, այլ և շուկայական պահանջմունքների բավարարման և դրանց փոփոխություններին արագ և օպերատիվ կերպով հարմարվելու կարողությունից: Այս տեսանկյունից, ազգային մրցունակության բարձրացման գործում հիմնարար նախապայման են հանդիսանում մրցակցային

առավելությունները, որոնք կարելի է դասակարգել 4 հիմնական խմբերի. ռեսուրսային, տեխնոլոգիական, կառուցվածքային և պետության տնտեսական քաղաքականության արդյունավետության հետ կապված: Ժամանակակից մրցունակ տնտեսությունները հիմնականում հիմնված են տեխնոլոգիական, իսկ որոշ դեպքերում` նաև ռեսուրսային առավելությունների վրա: Եթե նախկինում տնտեսության մրցունակության ապահովման գործում մեծ դերակատարում ունեին այնպիսի ռեսուրսային առավելություններ, ինչպիսիք էին բնական հարուստ պաշարները, բարենպաստ աշխարհագրական դիրքը և այլն, ապա ներկայումս որոշիչ դեր ունեն տեխնոլոգիական գործոնները: Որպես այդպիսիք կարելի է առանձնացնել մարդկային կապիտալում ներդրումները, ընկերությունների տեխնոլոգիական զարգացման և նորարարությունների ներդրման համար բարենպաստ տնտեսական միջավայրը, միջազգային առևտրի բաց համակարգը և այլն:

6. Ծուկայական տնտեսության բնականոն գործունեությունը ենթադրում է մրցակցություն, որն անհրաժեշտ նախապայման է հանդիսանում դրա զարգացման և տնտեսական բարենպաստ միջավայրի ձևավորման համար: Մրցակցության արդյունավետության հիմնական չափանիշ և արդյունք է հանդիսանում շուկայի մասնակիցների մրցունակության մակարդակը և, այս առումով, կարող ենք նշել, որ

մրցունակության ձևավորման պատճառ է հանդիսանում մրցակցությունը: Տնտեսական զարգացման ներկա փուլում առաջին պլան է մղվել տեխնոլոգիական մրցակցությունը, որը ենթադրում է նորարարությունների շարունակական ներդրման ու կիրառման միջոցով թողարկվող ապրանքատեսականու որակական հատկանիշների բարձրացում և սպառողների շարունակաբար աճող պահանջմունքների բավարարում: Արդյունքում, լայն զարգացում է ստանում ոչ գնային մրցակցությունը, որն իրենից ներկայացնում է սպառողների վճարունակ պահանջարկի համար պայքար արտադրանքի որակական հատկանիշների բարձրացման, նոր ապրանքատեսակների ստեղծման, գոյություն ունեցողների արդիականացման միջոցով:

7. Շուկայական տնտեսության զարգացումն ուղղակիորեն կախված է մրցակցության վիճակից, որը պայմանավորում է գիտատեխնիկական առաջընթացը և նոր տեխնոլոգիաների ներդրումը:Մրցակցությունն իրենից ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտների միջև պայքար՝ ապրանքների և ծառայությունների արտադրության և իրացման առավել ձեռնտու պայմանների համար:Հայտնի է, որ շուկայական տնտեսության պայմաններում մրցակցությունն իրականացնում է մի շարք կարևոր գործառույթներ, որոնցից հիմնականը շուկայական գնագոյացման մեխանիզմի վրա հիմնված ապրանքի գնի ձևավորումն է: Անշուշտ,

առանց մրցակցության շուկայական հարաբերությունների զարգացումը գործնականում անհնար է, քանի որ այն հանդիսանում է գնային կարգավորման և տնտեսության արդիականացման շարժիչ ուժերից: Ավելին՝ հենց այդ հատկանիշի շնորհիվ է մրցակցությունը դառնում ոչ միայն շուկայի գոյության անբաժանելի մասը, այլ նաև գիտատեխնիկական զարգացման, ռեսուրսների ռացիոնալ բաշխման և նորարարությունների ներդրման հիմնական խթան: Գործնականում, շուկայի մասնակիցներից յուրաքանչյուրը ձգտում է առավելագույն օգուտի ստացման, որի համար փորձում է թողարկել համանման այլ ապրանքների համեմատությամբ ավելի մրցունակ արտադրանք: Վերջինս ենթադրում է որակական, տեխնոլոգիական և գնային այնպիսի հատկանիշների առկայություն, որոնք այն սպառողի համար կդարձնեն առավել նախընտրելի և, հետևաբար, կհանդիսանան առավել մրցունակ:

8. Մրցակցությունը և մրցունակությունը իրենց գործողության մեխանիզմի, իրականացվող գործառույթների և առաջացման աղբյուրի առումով միմյանց որոշակիորեն նման են: Սակայն դրանց տնտեսական բովանդակությունը տարբեր է, քանի որ մրցակցությունն իրենից ներկայացնում է ապրանքների տեխնիկական, ֆինանսական, սոցիալական, կառավարչական լավագույն հատկանիշների բացահայտման գործընթաց, իսկ մրցունակությունն այդ գործընթացի տնտեսական արդյունքն է: Այս

տեսանկյունից, կարող ենք նշել, որ մրցակցությունը պարտադիր և անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է մրցունակության ձևավորման համար: Եթե դիտարկենք մրցունակության վրա մրցակցության ներգործության եղանակը, ապա կնկատենք, որ այն ավելի շուտ խթան է հանդիսանում մրցունակության զարգացման համար:

9. Ազգային տնտեսության մրցունակության ապահովման հիմնական ուղղություններ են հանդիսանում տնտեսության շուկայական կարգավորման մեխանիզմների և ենթակառուցվածքների զարգացումը, գիտատեխնիկական ներուժի ձևավորումը, կառավարման արդյունավետ համակարգի ստեղծումը, գիտատար ճյուղերի և սպասարկող ոլորտների զարգացման խթանումը, մարդկային կապիտալի զարգացումը և արդյունավետ օգտագործումը: Մրցունակության ձևավորումը հնարավոր է միայն վերը թվարկված բոլոր ուղղությունների արդյունավետ զուգակցման պայմաններում, քանի որ դրանք փոխկապակցված են և փոխլրացնում են միմյանց, ինչի արդյունքում էականորեն անդրադառնում են մրցակցային առավելությունների ստեղծման վրա: Գիտատեխնիկական ներուժի ձևավորումը հիմնվում է գիտատար և սպասարկող ճյուղերի ձեռքբերումների վրա (գիտատար և սպասարկող ոլորտների զարգացման խթանում), որոնց զարգացումը մեծապես պայմանավորված է երկրի ներքին շուկայում մրցակցության

ինտենսիվությամբ (տնտեսության շուկայական կարգավորման մեխանիզմների և ենթակառուցվածքների զարգացում): Ինչքան զարգացած է մրցակցային շուկան, այնքան խիստ պահանջներ են ներկայացվում դրա մասնակիցներին, ինչը ենթադրում է առկա ռեսուրսների օգտագործման և կառավարման առավել կատարյալ համակարգի ստեղծում (կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում): Բոլոր ուղղությունների օպտիմալ համադրման դեպքում, կախված մրցունակության տարբեր գործոնների զարգացման աստիճանից, կարելի է հասնել շոշափելի արդյունքների:

10. Երկրի մրցունակությունը պետք է դիտարկել դրա զարգացումը (տնտեսական, քաղաքական, սոցիալական, տեխնիկական) բնութագրող փաստացի ցուցանիշների հարաբերության տեսանկյունից աշխարհի այլ առաջատար երկրների համանման ցուցանիշների նկատմամբ: Ընդորում, այս դեպքում էականը ոչ թե զարգացած երկրների ցուցանիշներին հավասարվելն է, այլ առկա ռեսուրսների առավելագույն ռացիոնալ օգտագործման միջոցով բարձր արդյունքներ ապահովելը: Տնտեսության մրցունակության գնահատման համար առավել տրամաբանական է դիտարկել մրցունակության հիմնական գործոնները բնութագրող ցուցանիշները: Այս տեսանկյունից, որպես այդպիսիք պետք է ընտրվեն այն ցուցանիշները, որոնք լավագույնս բնութագրում են մրցակցային առավելությունները և ապահովում են

մրցունակությունը: Մասնավորապես, որպես այդպիսիք պետք է դիտարկել ներդրումների տեսակարար կշիռը, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով բյուջետային ծախսերի ծավալը, ՀՆԱ-ի և ներդրումների աճի տեմպերի հարաբերակցությունը, արտադրության շահութաբերության աստիճանը, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, աշխատանքի արտադրողականության, միջին աշխատավարձի, գործազրկության մակարդակը և կյանքի միջին տևողությունը, երկրում քաղաքական ազատությունների մակարդակը և այլն:

10. Տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական և այլ ցուցանիշների գծով տարբեր երկրների վարկանիշային աղյուսակներում հանրապետության (ինչպես նաև մի շարք այլ երկրների) զբաղեցրած դիրքը վկայում է այն մասին, որ ազգային տնտեսության մրցունակության տեսանկյունից ՀՀ-ն գտնվում է զգալիորեն անբարենպաստ իրավիճակում: Ինչպես ընդհանուր տնտեսության, այնպես էլ դրա առանձին ճյուղերի և տնտեսավարող սուբյեկտների գծով մրցունակության մակարդակը դեռևս հնարավորություն չի տալիս միջազգային տնտեսական ինտեգրացիայի խորացման ներկա փուլում հասնել հաջողությունների արտաքին շուկաներում: Անշուշտ, նման իրավիճակը պահանջում է պետական հստակ ռազմավարության մշակում և

իրագործում՝ տնտեսական զարգացման գերակա ճյուղերի և ոլորտների ամրագրմամբ:

11. Տնտեսության մրցունակության կառավարման գործընթացում կարևոր նշանակություն ունի պետության և տնտեսավարող սուբյեկտների մասնակցության համադրման տնտեսական մեխանիզմի մշակումը,որը պետք է հիմնված լինի նրանց շահերի և հետաքրքրությունների ներդաշնակեցման վրա: Ակնհայտ է, որ տնտեսության մրցունակության ապահովումը հանդիսանում է ինչպես պետական, այնպես էլ բիզնես շրջանակների խնդիրը՝ անկախ գոյություն ունեցող տնտեսավարման մոդելից: Սակայն, դրանով հանդերձ, մրցունակության ապահովման առանձին ասպեկտների կարևորությունը մեծանում է՝ հատկապես տնտեսական ճգնաժամի փուլում, երբ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված՝ իրացման խնդիրները ձեռք են բերում առաջնահերթ նշանակություն: Ակնհայտորեն, դրանց լուծման գործում հատկապես կարևորվում է մրցակցային առավելությունների ապահովումը և, մասնավորապես, թողարկվող արտադրանքի որակական մակարդակի բարձրացումը: Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության և մարտավարության ընտրությունը դասվում է պետության կողմից լուծման ենթակա առանցքային խնդիրների շարքին և հիմնված է հասարակական զարգացման բազմատարբերակության և

այլընտրանքայնության ճանաչման վրա: Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ առավել առաջադիմական ուղղություն է հանդիսանում գիտելիքի, ստեղծագործող և գիտական աշխատանքի, մարդկային ռեսուրսների լիարժեք իրացման, ինչպես նաև տնտեսական և սոցիալական էֆեկտիվության ապահովման վրա հիմնված տնտեսավարման նոր մոդելի մշակումը: Ըստ էության, սա ժամանակակից քաղաքակրթության զարգացման ընդհանուր վեկտորն է, որը ստիպում է դրանից բխող որոշակի կողմնորոշիչներ մշակել նաև Հայաստանի տնտեսության համար: Ակնհայտ է, որ սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական զարգացման ոլորտներում սեփական դիրքերի ապահովումը պահանջում է, նախ և առաջ, տնտեսության մրցունակության բարձրացում և դրանով պայմանավորված սոցիալ-տնտեսական բազմաբնույթ խնդիրների լուծում:

12. Մրցակցային շուկայի և մրցունակության վրա հիմնված տնտեսության զարգացումը, անշուշտ, պետք է հանդիսանա հանրապետությունում վարվող տնտեսական քաղաքականության հիմնական գերակայությունը: Ակնհայտ է, որ ներկայումս մրցակցության վիճակը հանրապետությունում հեռու է ցանկալի մակարդակից, ինչի վկայությունն են հանդիսանում մի շարք ապրանքային շուկաներում մենաշնորհային երևույթների և գերիշխող դիրքի չարաշահման երևույթները: Մեր կարծիքով, հանրապետության տնտեսության

մրցունակության ամրապնդումը ինչպես մակրո, այնպես էլ միկրոմակարդակում պետք է իրականացվի երկու հիմնական ուղղություններով.

- հայրենական արտադրության զարգացման պետական ռազմավարության մշակում և իրականացում,
- ազգային տնտեսության պետական կարգավորման հայեցակարգի մշակում և իրականացում:

Նշված ուղղությունների գործնական կենսագործման նպատակով, նախ և առաջ, անհրաժեշտ է հստակ որոշել տնտեսության առանձին ճյուղերի պետական աջակցության սահմանները և միջոցները՝ հաշվի առնելով հետևյալ սկզբունքների վրա հիմնված պետական քաղաքականության գերակայությունները.

- մրցակցային մեխանիզմի գործունեության նվազագույն միջամտություն,
- բնակչության բարեկեցության բարձրացում և նրա պահանջմունքների առավելագույն բավարարում,
- երկրի տնտեսական անվտանգության ապահովում,
- տնտեսության շահութաբերության և արտադրության ծավալների ավելացում:

13. Հայաստանի Հանրապետության արդյունաբերության մեջ իր ուրույն և առարկայական դերն ունի հանքարդյունաբերության ոլորտը, որն ունի զարգացման լայն հնարավորություններ:

Մասնավորապես, արդյունահանվող օգտակար հանածոների վերամշակման արտադրության կազմակերպումը փակ և ավարտուն ցիկլերով՝ հանույթից մինչև պատրաստի արտադրանքի ստեղծումը, հնարավորություն կտա ոչ միայն լիարժեք օգտագործել հանքավայրերի ներուժը, այլ նաև նպաստել ՀՆԱ-ի աճին: Ի դեպ, հանրապետությունում առկա են նաև օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում առաջացող թափոնների կուտակման զգալի թվով պոչամբարներ, որոնք չեն օգտագործվում, սակայն պարունակում են մեծ քանակությամբ բազմամետաղներ: Մեր կարծիքով, հանրապետության տնտեսական զարգացման ներկա փուլում հանքարդյունաբերության ոլորտի զարգացման առումով կարևոր նշանակություն կարող է ունենալ գոյություն ունեցող պոչամբարների շահագործման ուղղությամբ համապատասխան ծրագրերի մշակումն ու իրականացումը, որը կնպաստի մեծածավալ ներդրումների ներգրավմանը, բնապահպանական մի շարք խնդիրների լուծմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և տնտեսության զարգացմանը:

14. Տնտեսական զարգացման ներկա փուլում հանրապետությունում չափազանց մեծ է պղնձի ռաֆինացման գործարանի կառուցման անհրաժեշտությունը և հրատապությունը, որն ընդհանուր տնտեսության վրա կունենա շղթայական էֆեկտ: Մասնավորապես, նման խնդրի լուծումը կհանգեցնի ոչ միայն համապատասխան

տնտեսավարող սուբյեկտների և պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, այլ նաև մի շարք փոքր ձեռնարկությունների ստեղծմանը, որոնք պղնձի ռաֆինացման գործարանին կապահովեն անհրաժեշտ արագամաշ և շրջանառու միջոցներով: Որպես այդ ամենի հետևանք, կարող ենք արձանագրել համաշխարհային շուկայում հանրապետության տնտեսության մրցունակության բարձրացումը:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## *ՀՀ օրենքներ, նորմատիվային ակտեր*


1. Գլոբալ մրցունակության 2016-2017 թվականի ինդեքսում Հայաստանի դիրքի մասին: Տեղեկանք, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն: http://www.mineconomy.am
2. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջե
3. Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2016: www.armstat.am
4. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն www.minenergy.am
5. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց: 2013-2014: Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոն: Երևան: 2014թ. 114էջ:
6. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց: 2011-2012: Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոն: Երևան: 2012թ. 101էջ:
7. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց: 2010: Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոն: Երևան: 2010թ. 120էջ:
8. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց: 2009: Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոն: Երևան: 2009թ. 120էջ:
9. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց: 2008: Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոն: Երևան: 2008թ. 120էջ:

10. Ցանկ` 2015թ. հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով առաջին 1000 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից վճարված հարկերի և տուրքերի մեծությունների: http://www.taxservice.am

Մասնագիտական գրքեր և հոդվածներ

11. Անդրոյան Դ., Բալումյան Գ. «Մասնագիտության ներածություն»: Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (Լեռնամետալուրգիայի ճյուղում): Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: Ճարտարագետ, 2009թ. 98էջ:

12. Ավագյան Հ. Հայաստանի հանքահումքային ռեսուրսները. օգտագործման արդի վիճակը և արդյունավետության բարձրացման ուղիները: Երևան:Գիտություն:2004թ.432էջ:

13. Դարբինյան Ա. Հայաստանի միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացում: Երևան:2000թ.234էջ:

14. Մարկոսյան Ա., Նազարյան Գ., Հախվերդյան Դ. Միջազգային տնտեսական հարաբերություններ: Մաս 2:Երևան 2012թ.639էջ:

15. Միքայելյան Մ. Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում: Երևան: Նահապետ: 2005թ. 253 էջ:

16. Սարգսյան Հ., Մարկոսյան Ա. Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները:Երևան 2014թ.550էջ:

17. Абрамов В. Управление конкурентоспособностью экономических систем. Маркетинг. 2004г. N 5. стр. 19-24.
18. Азоев Г. Конкуренция: анализ, стратегия и практика. М.: Центр экономики и маркетинга. 1996г. 207 стр.
19. Азоев Г. Конкурентные преимущества фирмы. М. 2000г. 256 стр.
20. Алещенко В. Теоретико-методологические вопросы конкурентоспособности экономической системы. Маркетинг в России и за рубежом. 2005г. № 1. стр. 106-119.
21. Андрианов В. Конкурентоспосбность Россиии в мировой экономике. Экономист. 1997г. N 10. стр. 67-71
22. Андреева Л. Взгляд на системную конкурентоспособность как доминанту устойчивого развития экономики. Экономист. 2004г. № 1. стр. 81-88.
23. Андрианов В. Конкурентоспособность России в мировой экономике. Мировая экономика и международные отношения. 2000г. № 3. стр. 47-57.
24. Акимов О. Малый и средный бизнес: Эволюция понятий, рыночная среда, проблемы развития. Финансы и статистика. М. 2003г. 192 стр.
25. Баймаков Ю.В., Журин А.И. Электролиз в гидрометаллургии□. Москва. 1963г. Государственное научно-техническое издательство литературы по черной и цветной металлургии, 143 стр.
26. Балабанов И. Инновационный менеджмент: учеб. Пособие. Питер. 2000г. 207 стр.
27. Бородин К. Оценка конкурентоспособности продукции в условиях современной торговли. Проблемы прогнозирования. 2006г. N 3. стр. 84-95.
28. Васьковский А. Роль конкуренции в становлении рыночной экономики. М. РАГС. 2000г. 46 стр.
29. Внешнеэкономический толковый словарь. под ред. И.П. Фаминского. М., 2000г. 504 стр.
30. Гаврилов В. Концепция сущности и функций конкуренции. Актуальные проблемы политической экономии: сб. ст. Воронеж. 2004г. Ч. 1. стр. 62-64.
31. Гельвановский М.И. Конкурентоспособность России в 90-е годы: межстрановый макроэкономический анализ. М., 2000г. 126 стр.
32. Гельвановский М., Жуковская В., Трофимова И. Конкурентоспособность в микро, мезо и макроуровневом измерениях. Российский экономический журнал. 1998г. №3 стр. 67-77.
33. Гельвановский М., Жуковская В. Конкурентоспособность в глобальной системе координат. Мировая экономика и международные отношения. 1998г. №7. стр. 146-152.

34. Гельвановский М. Конкурентоспособность национальной экономики: проблемы статистического сопровождения. Вопросы статистики. 2004г. № 7. стр. 3 - 15.
35. Гельвановский М. Национальная конкурентоспособность: понятие, факторы, показатели. Вопросы статистики. 1999г. № 12. стр. 12-20.
36. Гоголева Т. Конкуренция: сущность, закономерность, регулирование: монография. Воронеж. 2004г. 200 стр.
37. Горбашко Е. Конкурентспособность промышленной продукции: учеб. пособие. СПб. 1991г. 64 стр.
38. Губанов С. Конкурентоспособность экономики функция системы воспроизводства. Экономист. 2003г. № 4. стр. 9-20.
39. Государственное регулирование рыночной экономики: федеральный, региональный и муниципальный уровни (вопросы теории и практики). Науч. ред.: Волгин Н.А., Кушлин В.И., Фоломьев А. РАГС. М. 1997г. 356 стр.
40. Долинская М., Соловьев И. Маркетинг и конкурентоспособность промышленной продукции. М, 1991г. 125 стр.
41. Друкер П. Рынок: как выйти в лидеры. Практика и принципы. М. 1992г. 349 стр.
42. Елизаветин М. К вопросу о конкурентоспособности российской экономики. Банковское дело. 2004г. № 5. стр. 2-7.
43. Емельянов С. Американский опыт повышения национальной конкурентоспособности. США. Канада: экономика, политика, культура. 2002г. № 11. стр. 64 - 77.
44. Завьялов П. Конкурентоспособность в экономической политике зарубежных стран. Маркетинг. 1996г. № 2. стр. 20-32.
45. Завьялов П. Конкуренция неотъемлемое свойство развитого рынка.Маркетинг. 1997г. № 5. стр. 3-14.
46. Портер М. Международная конкуренция. М., 1993. 896 стр.
47. Селезнев А. Конкурентные позиции и инфраструктура рынка России. М. 1999г. 383 стр.
48. Селезнев А. Инфраструктура рынка и конкурентоспособность России (методологические вопросы анализа и интегральной оценки). Экономист. 1996г. № 2. стр. 9-18.
49. Спиридонов И. Международная конкуренция и пути повышения конкурентоспособности экономики России. М. 1997г. 170 стр.
50. Совет по национальной конкурентоспособности. www.conc.org.

51. Макроэкономические показатели стран с переходной экономикой. Отчет института международных экономических и политических исследованй РАН РФ. М. Эпикон. 2001г. 68 стр.
52. Качалина Jl. Конкурентоспособный менеджмент. Эксмо. М. 2006г. 464 стр.
53. Кондратьев В. Макроэкономические проблемы конкурентоспособности России. Мировая экономика и международные отношения. 2001г. N3. стр. 54-60.
54. Кормнов Ю. О повышении конкурентоспособности экономики. Экономист. 2006г. № 8. стр. 13-20.
55. Кормнов Ю. Ориентация экономики на конкурентоспособность. Экономист. 1997г. № 1. стр. 38-48.
56. Куренков Ю. Конкурентоспособность России в мировой экономике. Вопросы экономики. 2001г. № 6. стр. 36-49.
57. Конкурентоспособность России и российских производителей в мировой экономике. Под ред. В. Горфинкеля, М. Максимцева, В. Швандара. М.: ВЗФЭИ. 2006г. 352 стр.
58. Куренков Ю.В. и др. Конкурентоспособность России в глобальной экономике. М., 2003г. 376 стр.
59. Лифиц И. О критериях конкурентоспособности товаров и услуг. Маркетинг. 2006г. № 3. стр. 25-32.
60. Михайлов О. Основы мировой конкурентоспособности. М. 1999г. 591 стр.
61. Мисаков В. Анализ конкурентоспособности фирмы. Финансы и статистика, М. 1998г. 223 стр.
62. Моисеева Н. Современное предприятие: конкурентоспособность, маркетинг, обновление: в 2 т. 1993г. т. 1. 220 стр. т. 2. 300 стр.
63. Новиков Н. Проблемы конкурентоспособности металлургических предприятий. Экономист. 2003г. № 5. стр. 61-67.
64. Ослунд Д. Оценка темпов трансформации экономики в старанах СНГ. Аки-пресс. 2000г. N 5. С. 43 - 59
65. Овчинников В. Конкурентоспособность российской экономики: текущие проблемы и перспективы. Россия и современный мир. 2004г. № 2. стр. 103-116.
66. Селезнев А. Конкурентные позиции и инфраструктура рынка России. М. 1999г. 382 стр.

67. Спиридонов И. Международная конкуренция и пути повышения конкурентоспособности экономики России: учеб. пособие. М. 1997г. 170 стр.
68. Пилипенко И. Конкурентоспособность стран и регионов в мировом хозяйстве: теория, опыт малых стран Западной и Северной Европы. М. 2005г. 496 стр.
69. Чемберлин Э. Теория монополистической конкуренции: (реориентация теории стоимости). Экономика. М. 1996г. 351 стр.
70. Юданов Ю. Конкуренция: теория и практика. Учебно-практическое пособие. М. 1998г. 381 стр.
71. Фатхудинов Р. Конкурентоспособность: экономика, стратегия, управление. М. 2000г. 312 стр.
72. Фатхуддинов Р. Стратегическая конкурентоспособность. Экономика, М.: 2005- 512с.
73. Швандар К. Международная конкурентоспособность. Современный взгляд на концепцию. МАКС-Пресс М. 2006г. 192 стр.
74. Ясин Е. Конкурентоспособность и модернизация российской экономики. Вопросы экономики. 2004г. № 7. стр. 4-34.
75. Яшин Н. Конкурентоспособность промышленных предприятий: методология, оценка, регулирование. Саратов, 1997г. 370 стр.
76. Competitiveness: 23 Leaders speak out. Harvard business review. Boston, 1997. Vol. 55. № 4. P. 108–123.
77. Global Competition: The New Reality, Report of the President's Commission on Competitiveness. Vol. 2. Washington, D.C.: U.S. Government Printing Office, 1985.
78. Institute of Management Development, IMD. www.imd.org
79. Field Guide to Business Terms. Boston (Mass.), 1993.-P71.
80. Prades F.G. Disparites des couts competitivite et changes. // Reflets et perspectives de la vie economique.-Bruxelles.-1977. - Nov. - P. 308.
81. World Competitiveness Yearbook, 2000, p. 146-148
82. Grossman G. and E. Helpman. 1991. Innovation and Growth in the World Economy. Cambridge, MA: MIT Press. Chapters 3 a-c
83. O'Mahony M., B. van Ark (eds.). 2003. ‚EU Productivity and Competitiveness: An Industry Perspectiveь . Brussels: European Commission.
84. Peters T. ‚Time-Obsessed competitionь , Management review, N.Y., 1990, vol 79, p 16-20
85. Porter, M. E. 2003; ‚The Economic Performance of I Studiesь 37 (6&7): 549-678.

86. Prestowitz C.V. ,Trading places: how America is surrendering, its future to Japan and how to win it backե , Rutland, Tokyo, 1991, 572p.
87. Rodrik, D. and F. Rodriguez. 1999. ,Trade Policy and Growth: A Skeptics' Guide to Cross National Evidence.ե NESER Working Paper No. 7081, April. Cambridge, MA: National Bureau of Economic Research.
88. Rodrik, D., A. Subramanian, and F. Trebbi. 2002. ,Institutions Rule: The Primacy of Institutions over Geography and Integration in Economic Development.ե Mimeo, Harvard University, October.
89. Sache, Jeffrey D. and Andrew M. Warner (1995) ,Natural Resource Abundance and Economic Growthե National Bureau of Economic Research Working Paper N5398
90. Sachs J. 2001. ,Macroeconomics and Health: Investing in Health for Economic Development: Report of the Commission on Macroeconomics and Healthե . Geneva: World Health Organization.
91. Sachs, J. and A. Warner. 1995. ,Economic Reform and the Process of Global Integration.ե Brookings Papers on Economic Activity, 1995 (1), 25th Anniversary Issue: 1-118.
92. Saeki K, Seki Sh. ,Cooperation and conflictե .Intern.Inst.for Global peace, 1991- XI,38p.
93. Thurow L.C. «Who owns the twenty-first century» Sloan management, rev. Cambridge, 1992-vol.33, N3-p.5-17118. «To enhance the competitiveness of American industry and for other purposes». 100-th Congress 1st session, Wash., 1987, 569p.
94. www.minenergy.am
95. www.armstat.am
96. http://total-rating.ru
97. http://teghout-old.vallexgroup.am/images/docs/Short_Infromation_On_Company_9.12.2014.pdf